

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : ԵՍԷ հոգիին ջնարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարավերջի Թրանսան	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ
Մէկ քանի նօթեր Հայաստանի մէջ մայրուէյի քարենորոգմանց մասին ՆՈՒՊԱՐ ՓԱՇՍ	ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ
ժամանակը	ՄԻՐ-ԵՐՈ
Եղիպտական սպաւորութիւններ	ԱՐԱՄ ԶԱՐԸԴ
Պատմիք Ասորձուն :—Եկէք հզրայրներ :—Մայրերն են խօսում	ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ
Մտապ Լիսիմ	ԿԻՍՍՈՍՎ ԶԼՈՊԷՌ
Հերովդիա	ԱԼԵԿՍ . ԾԱՏՈՒՐԵԱՆ
Զմբան երգ	ԶԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
Մահը	ՀՐԱԶ
Հայրենի երգեր (Ճախարակիևի ֆերուածը)	Ա . ԾԱՏՈՒՐԵԱՆ
Անչար , Թոքի ծառ , Պուշկինի	
Արուեստի էջեր :—Նովիլի Շալլոֆի գերին մէջ	Զ . Մ . ԽՕՃԵՆՑ
Վարդ եւ Ասիակ (այլարանութիւն)	Ա . ՉՕՊԱՆԵԱՆ
«ՄՈՒՐՃ»ը եւ սուսանայ արդի գրականութիւնը	ԷՌԵՆՍՈՒ ԼԱՎԻՍ
Անգլիա եւ Թրանսա	
Ճշմարիտ Թրանսան	Գ . Մ . ՊԸՅԸԳՂԵԱՆ
Նամակ խմբագրութեան	ՏՐ . Կ . Յ . ՓԱՇՍԵԱՆ
Ազգային քրմերիկ .—Նամակ Պարսկաստանէն	
Բազմաքական կայութիւնը	
Մամուլի ազատութեան հացիկերոյթը	
Հայ գրականութիւնը Եւրոպայի մէջ	

Ծանօցիլիս թուով. ԵՒԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳՍՂԹԱԿԱՆՆՈՒԹԻՒՆԸ՝ ՄԻՐ-ԵՐՈՒ , ՄՏԳԻՍ ԽԱՌԱՐԱՆԷՆ՝ ԽՈՍՐՈՎԻ , ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՃԻ ՎՐԱՅ (իւր լուսանկարով) ԿԵՆ . :

Շնորհակալութեան պարտք մը ունիմ իշխան Գուրգեն Լուսինեանիև որ հաճեցաւ անձնական հրատարակութիւն մը դադրեցնել եւ իր հայերէն աստերը մեզի փոխի սալ Անահիտի առաջին ջորս քիւերուն հաւար : Այս քիւր կը հրատարակուի մեր մեկնական աստերովը . մեր շնորհակալութիւնը կը յայտնեմք Մայիլուայի մեծարգոյ Ժամհարեան եղբայրներուն եւ Պաթրիշի մեր ազնիւ ազգակից Պ . Գ . Մ . Պրըքլեանիև , որոնց ներքինական արտադրութեանը կը պարտք մը Անահիտի յստակ սպարաւ նիև անբողոքացուեր : Կը ցաւիմք , որ շուտով ստանայու հաւար անիև միջոց ձեռք առած յրապետու հակուակ , աստերը , նամակն հանդիպելով անակնկալ արկածներու , չարագանց ուղ մեզի հասան եւ մեզ արտաքին մարտի քիւր արտիկի թուոյն նեւ միացած հրատարակել : Աւերոյդ Ե յայտարարելքի այս անկանոնութիւնը , մեր կամեմքն քաջարձակապէս անկախ պատճառներու արդիւնք , այլեւս երբեք պիտի չկրկնուի :

ՆՈՒՐՍՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

- Պ . Մ . Նշիկեան (Գրէնո , Ամերիկա) նուիրեց երկու օրինակ ԱՆԱՂԻՏ , մին Դարբէտի «Արովեան» դրամատիկին , միւսը՝ Սալմասի «Արճրբունի» գրադարանին :
- Պ . Ղուսիկեան նուիրեց մէկ օրինակ աստերական ԱՆԱՂԻՏ ԵԻ-ԵՐԸՔԻ ազգային ընթերցարանին :

# ԱՆԱԾԻՏ

ՀԱՆՊԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ 1899

ԹԻԻ 5—6

## ԴԱՐԱՎԵՐՋԻ ՖՐԱՆՍԱՆ

Բարոյական խորին տագնապը որով տարի ու կէսէ ի վեր Ֆրանսա կը տառապի, ամենէն թելադրական էջերէն մէկը պիտի մնայ նոր ժամանակներու պատմութեան: Կարճատեաներն ու կուսակցամոլները միայն կըրցան երևակայել թէ Տրէյֆուսի խնդիրը անհատական խնդիր մըն էր, Հրէայի խնդիր մը, ճանձրանալի միջագէտ մը լոկ: Ամբողջ աշխարհ զգաց անոր խորհրդանշանական ընդարձակութիւնը, անոր մարդկային կարեւորութիւնը, եւ այդ մասնաւոր համարուած գործը շուտով դուրս ելաւ իր տեղական շրջանակէն, օրուան մեծագոյն հարցերէն մէկը դարձաւ: Անոնց համար որ մօտէն հանդիսատես կըրցան ըլլալ այդ արտասովոր տուամին՝ որուն վերջին արարը չաւարտեցաւ դեռ, ատի երեւցաւ, իր ցաւի, բողոքի, ստութեան, վայրոյթի, վատութեան, նենգութեան, անձնութեան ու հաւատքի տենդոտ խառնամանուամին՝ մէջ, իբրեւ ամենէն նշանակալից ու ամենէն անկեղծ պատկերը ուր արդի ընկերութիւնը կը ցոլանար իր երէկի ու վաղուան ուժերու մոլեգին պայքարովը: Թերեւս չափազանցութիւն չըլլայ կարծել թէ 89ի յեղափոխութեանն ի վեր, որ ժԸ՝ դարը փակեց եւ մեր դարուն տուաւ նոր ոգի մը եւ նոր մղում մը, այս տուամը ամենէն կարեւոր դրուագն է որով Ֆրանսա կը կատարէ իր ճակատագրային դերը մարդկութեան մէջ: Ֆրանսայի դերն է մեծ

գաղափարները ապրիլ, մեծ պայքարները խաղալ, աշխարհի ուժգնութեամբ մը, անկեղծութեամբ մը եւ յստակութեամբ մը, որ բովանդակ աշխարհ՝ հետաքրքրուած ու յուզուած՝ հետեւի տեսարանին եւ օգտուի, դաստիարակուի անով: Այն կոյր ֆրանսամոլներէն չեմ որ նկատեմ Ֆրանսան իբրեւ ամենէն «ստեղծագործ» երկիրը նոր քաղաքակրթութեան: Իտալիան է արդի գեղարուեստին եւ արդի բանաստեղծութեան մայրը, Անգլիան է փորձառական գիտութեան, դրական իմաստասիրութեան ու ընկերական ազատագրութեան հոյակապ հիմնադիրը. եւ Ֆրանսա չունի հանճարներ (բաց ի իր մէկ քանի գիտնականներէն ու գրականութեան մէջ իր հեզնողներէն) որոնք կարենան հասնիլ Շէքսպիրի, Կէօթէի, Պեթովընի, Միքէլ-Անձելոյի հսկայական համեմատութիւններուն: Հիւսիսին ու Հարաւին մէջտեղը գետեղուած, այլազան ցեղերու բազմաբարդ խառնուրդ, ֆրանսացի ժողովուրդը իր մտաւորական արտագրութեան մէջ աւելի հաւաքող, ներդաշնակող ու յղկող մը եղած է քան ստեղծող, աւելի ցոյց տուած է չափաւորութեան, ճաշակի, կատարելութեան ձիրքեր քան յանդուգն արարչագործութեանց. բայց իր դերը, ու թերեւս գլխաւոր դերը, եղած է, կերպով մը, ընդհանրացնել, իր պայծառ, չափաւոր ու սիրուն արտայայտութեանը շնորհիւ, այն գեղեցկութիւններն ու ճշմարտութիւնները զոր նոր քաղաքակրթութեան տիտանները յղացան. Ֆրանսայի առաջին մեծ բանաստեղծը, Գորնէյլ, աշակերտն է սպանիացի թատերագուհիներուն, բայց աշխարհ Գորնէյլով ճանչցաւ սպանիական Միսը: Այս դարուն

Ֆրանսական առմանդիկ դպրոցը, որ այնքան խորին ու ընդարձակ ազդեցութիւն ունեցած է բոլոր նոր ժողովուրդներուն վրայ, իր սկզբնական տարրերը կը ստանար գլխաւորապէս անգլիական ու գերմանական գրականութիւններէն: Եւ Ֆրանսական ԺԸ. դարը, Ֆրանսայի բուն մեծ դարը, ԺԷ. դարու Անգլիային, Քրոմուելի եւ Լոքի Անգլիային, կը պարտի մեծ մասամբ իր կազմաւորումը: Բայց մինչդեռ անգլիացի յեղափոխականը անժխոր ու հաշուած միջոցներով իր յեղափոխութիւնը ի գլուխ հանեց եւ ազատ ընկերութեան մը հիմերը դրաւ՝ առանց աշխարհի վրայ ո եւ է ազդեցութիւն գործելու, մինչդեռ անգլիացի իմաստասէրը արդի մտածումը ուրուագծեց չոր, մացառու ու թանձր ոճով մը որմէ մարդկութիւնը չկրցաւ օգտուիլ, Ֆրանսական ԺԸ. դարը, Վոլթեռով, Տիտոտով, Ռուսոյով, միեւնոյն գործը կրկնեց այնպիսի ջերմ, պայծառ ու կենդանի բացատրութեամբ մը որ նոր գաղափարը տարածուեցաւ մարդկութեան մէջ, եւ միեւնոյն պատմութիւնը ապրեցաւ՝ իր վիթխարի յեղափոխութեամբ՝ այնպիսի ուժգին, մեծաշունչ ու թատերական հանդիսաւորութեամբ որ տիեզերական հեքեաթը եղաւ ան եւ ԺԹ. դարուն աւետարանը դարձաւ: Ֆրանսացին, կրքոտ, թոթուէն, հաղորդական, աղմկայոյզ ու վեհանձն, իր ամէն մէկ արարքը ոչ թէ լոկ ինք իրեն համար, ինչպէս եսական Անգլիացին կամ հեշտասէր Իտալացին կամ դանդաղ ու երազկոտ Գերմանացին, այլ բովանդակ մարդկութեան համար կատարելու ձեւն ունի: Ֆրանսա կերպով մը աշխարհի թատերաբեմը եղած է միշտ: Լեզուն, ամենէն յտակը մարդկային լեզուներուն, հետեւաբար ամենէն տարածուածը, ցեղը՝ ամենէն անհանդարտ ու պերճախօսը, հետեւաբար ամենէն ուշադրաւը, այնպէս մը ըրած են որ ո եւ է զէպք, գրական, քաղաքական կամ գիտական, այդ թատերաբեմին վրայ՝ կը ստանայ հնչիւն մը, լոյս մը, ձեւ մը, որ մարդկութեան ամենէն հեռուը խորշերէն ալ կը լսուի, կը տեսնուի, կը հասկցուի. նոյն իսկ միւս մեծ ազդերուն մէջ տեղի ունեցած կարեւոր երեւոյթները, Բարիզէն անցնելով է որ տեսանելի կը դառնան մարդկութեան, «տիեզերական» կ'ըլլան: Բոլոր մեծ արուեստագէտները իրենց համբաւին կատարը հասած կը համարին գիւրենք երբ Բարիզի նուիրագործումը ունենան.

որովհետեւ Ֆրանսական ցեղը, ներկայացնելու արուեստին մէջ առաջինը, համբաւները գիտէ վերջնական ու որոշ ձեւով մը ընծայել աշխարհին: Եւ պէտք կ'ա՞յ կրկնել թէ ո՞ր աստիճան կարեւոր եղաւ Ֆրանսայի գործը այն ազատութեան ձգտումին մէջ որ մարդկութիւնը թօթվեց այս դարուս մէջ, եւ որով Ամերիկա, Իտալիա, Յունաստան եւ ուրիշ երկիրներ իրենց ինքնութիւնը գտան եւ ուրիշներ, ինչպէս Գերմանիա, Ռուսիա, նոյն իսկ Սպանիա, զէպ ի ընկերական ազատագոյն կազմակերպութիւն մը դիմել սկսան:

Ֆրանսայի այս գիրքն է պատճառ որ Տրէյֆիւսի խնդիրը համաշխարհային խնդիր մը դարձաւ անմիջապէս: Շովէնները այդ երեւոյթին մէջ Ֆրանսայի դէմ ուղղուած օտար դաւակցութիւն մը ուզեցին նշմարել, մինչդեռ պարտէին տեսնել որ Ֆրանսան յուզող ո եւ է զէպքի մը շուրջ արթնցած միջազգային շահագրգռութիւնը Ֆրանսայի բարձրօրէն պատուարեր երեւոյթ մըն էր, եւ կը նշանակէր թէ Ֆրանսա «մարդկային երկիրն» է, «տիրալը» մարդկութեան, որուն իւրաքանչիւր բարախումը, իր դանդաղացման կամ երազման համեմատ, կ'ազդէ մարդկային կենսականութեան վրայ: Օտարները, ամենամեծ մասամբ, ի տես այս երկարատեւ պայքարին որ Ֆրանսայի մէջ տեղի կ'ունենայ, ուրիշ զգացում չյայտնեցին բայց եթէ զայրոյթ անոնց դէմ որ կը չարափոխեն, կը միջնորդեն ճշմարիտ Ֆրանսային, արդարութեան ու լոյսի Ֆրանսային սիրուած զէպքը, եւ հիացում՝ այն արի Ֆրանսացիներու ջոկատին որ այդ վտանգուած բայց անմահ Ֆրանսային պաշտպանը հանդիսացաւ:

Եւ ես անոնցմէ եմ որ կը մտածեն թէ այս ամբողջ պատմութեանը հանդէպ, աւելի հիացում քան տրոմոթիւն զգալու պարտք ունի օտար մը: Երբեք համախոհ չեղայ անոնց որ այս Տրէյֆիւսեան տագնապին մէջ Ֆրանսայի բարոյական անկման մէկ վերջնական նշանը կը կարծէին տեսնել Այո՛, ճշմարտութեան թշնամիներուն անամօթութիւնը ծայրայեղութեան հասաւ երբեմն, կառավարողներու անխղճութեան եւ ամբոխին վատութեան վատեցուցիչ տեսարաններու ներկայգտուեցանք, բայց ես կը յամառէի աչքս յառել ոչ թէ տգեղ մեծամասնութեանը (մեծամասնութիւնը միշտ ու ամէն տեղ կոյր ու ապուշ է, միշտ տգեղ), այլ այն փոքրամասնութեանը որ դիւցազնաբար մաքրուեցաւ անոնց դէմ

որոնք կ'ուզէին մեծ Յեղափոխութեան գործը քանդել ու միջին դարը վերանորոգել Ֆրանսայի մէջ (եւ այդքան չքեղ փոքրամասնութիւն չատ քիչ անգամ կարելի եղած է տեսնել մարդկային պատմութեան մէջ) : Ամէն երկրի մէջ կը պատահին դատական սխալներ, կը գործուին կառավարական ոճիրներ, բայց ոչ մէկ տեղ կարելի պիտի ըլլար գտնել բողոքի գունդ մը այնքան հզօր, այնքան ազնիւ եւ այնքան արի որքան սա ափ մը Ֆրանսացիները որոնք բարի պայքարը պայքարեցան : Ինծի համար այդ ափ մը Ֆրանսացիներն են Ֆրանսան : Հիացումը գերակշիռ մնաց իմ մէջս, որովհետեւ կը հաւատայի, Քլէմանտոյի հետ, թէ իրերու բարձրագոյն տրամաբանութիւն մը կայ որ ընկերական հաւասարակշռութեան համար կը պահանջէ որ արդարութիւնը վերջ ի վերջոյ յաղթանակէ, եւ վստահ էի որ ճշմարտութիւնը, հակառակ ամէն խոչընդոտի, պիտի հասնի իր ճամբուն ծայրը, ինչպէս պատգամեց այս պատմութեան մարգարէն, Չոլան :

Եւ հոտ է դասը որ կ'ելլէ այս տագնապէն որով Ֆրանսա տատապեցաւ ու դեռ կը տառապի, եւ որմէ աշխարհ պիտի օգտուի : Թէ կառավարութիւնները անսխալ չեն, թէ բանակը կը կազմուի ամբողջ ազգէն եւ ոչ թէ մէկ քանի պետերէ, թէ արդարութիւնը ներկայացնող մարմինը ազգի մը գերագոյն մարմինը պէտք է նկատուի՝ գերիվեր կառավարութենէն, խորհրդարաններէն ու բանակէն, թէ հակառակ պաշտօնական ուժերուն խոշոր դեմագրութեանը, հակառակ ամբոխին անգիտակից հակառակութեանը, խումբ մը համողումով, անձնուէր ու արի մարդերու յամառ հաւատքը եւ աներկիւղ պայքարը արդարութեան համար՝ անընկճելի եւ յաղթելու նախասահմանուած ուժն են, ահա այն գաղափարները որ այս խնդրոյն ամէն մէկ ցայտուածքէն արձակուեցան ճառագայթներու պէս եւ գացին սփռուիլ ժողովուրդներուն մինչեւ ամենէն թմրած խաւերուն խորը : Եւ ամէն տեղ, հանրային կարծիքը արդարութեան մարտիկներուն հետ եղաւ : Արդարութեան գաղափարին ամենէն լայն ընդհանրացումներէն մէկը եղաւ աս : Աշխարհի բարոյական ուժը աւելցաւ ասով : Հիմա բոլոր ազգերը կը սպասեն որ Արդարութիւնը յաղթանակէ : Եւ անշուշտ Արդարութիւնը պիտի ըլլայ յաղթանակողը : Եւ ասիկա թերեւս աւելի մեծ յաղթանակ մը

պիտի ըլլայ քան 89 ինը որ դասակարգներու կռիւ մըն էր որուն մէջ եսական կրքերը խոշոր տեղ մը կը բռնէին . ասի գաղափարին համար պայքարն է զուտ, անհաւասար ուժերով մղուած, առանց արիւնի, մտաւորական միջոցներով, եւ որուն արդիւնքը իր շարունակութեան մէջ՝ թերեւս աւելի ընդարձակ եւ աւելի տեւական պիտի ըլլայ : Ես կը կարծեմ թէ այս խնդիրը թուական մըն է Ֆրանսական պատմութեան մէջ . եւ դարավերջի Ֆրանսան այս տագնապէն յետոյ, պիտի ըլլայ Ֆրանսա մը իր ճշմարիտ մեծութեան կրկին բարձրացած : Եւ մարդկութեան համար ատի ամենէն գեղեցիկ աւետիսն է : Մարդկութեան ընդհանուր առողջութեանը համար անհրաժեշտ է որ Ֆրանսան, «սիրտը», առողջ մնայ ու հզօր :

Թէ ատի դրական ճշմարտութիւն մըն է եւ ոչ թէ ֆուզ մը, աշխարհ դառնօրէն զգաց դայտ՝ այս վերջին քառօրդ դարուն մէջ, ուր Ֆրանսա ինկաւ իր դիրքէն եւ կորանցուց իր բարոյական բարձրութիւնը :

Միջին դարու Ֆրանսան «ասպետական ոգի» ին մեծ ներկայացուցիչը եղած էր, խաչակրութեան գլխաւոր կազմակերպիչը եւ Արեւելքի քրիստոնեաներուն պաշտպանը . ժէ . դարու Ֆրանսան Եւրոպայի դաս տուած էր ազնուական կենցաղավարութեան : ստեղծած էր արդի «քաղաքավարութիւնը», արդի «ճաշակը» . ժՆ . դարու Ֆրանսան մէկ կողմէ այդ գործը շարունակելով ու կատարելութեան հասցնելով հանդերձ, միւս կողմէ իր իմաստասէրներով ու գիտնականներով ընկերական ու մտաւորական ազատագրութեան շարժումը տարածեց ամբողջ աշխարհի վրայ, այդ անբաղդատելի դարուն մէջ ուր ճարուհիներն ու քայլերները Ֆրանսացի իմաստասէրներուն առջեւ կը խոնարհէին : Յեղափոխութեան Ֆրանսան, վեհանձնութեան գիւցազներգութիւն մը ապրելով ինչպէս ոչ մէկ ժողովուրդ յղացած անգամ չէր, իր ազատամիտ քաջները ցրցքնեց չորս կողմ, Ամերիկայէն Իտալիա, Աւստրիայէն Իռլանտա, բոլոր գահերը եւ Նիկեղեցին ամբողջ զգրուեց, ու աշխարհին սորվեցուց կրօնքը ազատութեան ու արդարութեան : Նաբոլէոնի Ֆրանսան անշուշտ տեսակ մը նահանջ եղաւ ազատութեան այս յառաջխաղացութեանը մէջ, բայց որչափ ալ Նաբոլէոն մեծ ըլլար, այդ շարժումը աւելի մեծ էր եւ չէր կրնար խեղդուիլ . Նաբոլէոն

իր կատարած աւերիչ , անկապակից բայց մեծագործ ու շողշողուն գործովը ուրիշ բան չըրաւ այլ եթէ աւելի ընդարձակ ու խորին կերպով տարածել , եւ աւելի փայլուն ու վիպական գոյներով , աշխարհի ամէն կողմը , Արեւմուտքէն մինչեւ Արեւելք եւ ծայրագոյն Հիւսիսէն մինչեւ ծայրագոյն Հարաւ , Ֆրանսայի անունը , Ֆրանսայի լեզուն , հետեւաբար Ֆրանսայի գրականութիւնը , այսինքն ազատութեան գրականութիւնը . եւ հակառակ իր բռնաւորական ձգտումներուն , Նաբոլէոն կարեւոր քայլ մը առնել տուաւ հնակործան գործին . ինքը եղաւ այն առաջին ամենազօր բազուկը որ հին Եւրոպայի մեծագոյն բռնապետը , Պապը , իջեցուց իր գահէն ու քաղաքային զօրութեան ստորակարգեց : Նաբոլէոնի անհետացմամբ ազատական Ֆրանսան վերածնաւ , ու 1889 թ եւ 1848 թ խրոխտ գաղափարապաշտ սերունդները արթնցան եւ արդ ոռմանդիկ շրջանին ամբողջ մարդասէր , մեծանձն ու փողփողուն զգայնութիւնը որ այս դարուս եւրոպական գրականութեան վրայ հըզօրապէս անդրադարձաւ : Թագաւորութեան վերահաստատումը ու Նաբոլէոն Գ . ի կայսրութիւնը չարգիլեցին այդ գեղեցիկ վերելքը . եթիֆեթներն էին որ կը փոխուէին , եւ Ֆրանսական ժողովուրդը կը շարունակէր իր գործը . Քլոտ Պէռնարի , Պալզաքի , Հիւկոյի , Տըլաքուայի եւ Միլլէի ժամանակն էր ան , եւ անկարելի է հաշուել ինչ որ աշխարհի բարոյական տաքութիւնը կը պարտի այդ արեւ-ուղեղներուն : Եւ պէտք չէ մոռնալ որ նոյն իսկ Նաբոլէոն Գ . , հակառակ իր կայսերական քաղաքականութեան , Յեղափոխութեան Ֆրանսային ծրագիրը գործադրողներէն եղաւ , թրքական բարբարոսութեան դէմ պաշտպանելով Սուրիոյ եւ Ալճիթունի քրիստոնեաները :

Ֆրանսա ինկաւ՝ ֆրանքօ-բրուսական պատերազմէն յետոյ , եւ չկայ պատմութեան մէջ դէպք մը աւելի աղետաբեր ու անէծքի արժանի : Ֆրանսայի պարտութիւնը միանգամայն պարտութիւնը եղաւ ֆրանսական ոգիին , ու Եւրոպայի վրայ ծագեցաւ յանկարծ նոր ոգի մը , բրուսական չոր , եսական , անպութ ոգին , խանութպանի ոգին :

Ճշմարիտ է որ ֆրանսայի բարոյական տրակարացումը պատերազմէն առաջ սկսած էր արդէն , եւ ան էր որ գլխաւոր պատճառը եղաւ Ֆրանսայի պարտութեան : Նաբոլէոն Գ . ի եւ

Մոռնի գրքին զեղիս ու զուարճամուկ կառավարութիւնը Բարիզը «աշխարհի բողանոց»ը բարձուց , ինչպէս ըսին . Թիւիլըոիի պարահանդէսները , եւ բոլոր այն ծայրայեղօրէն ցոփ բարքերը որ կը տիրէին բարիզեան բարձր ընկերութեան մէջ , «Նոր Բաբելոնի մը» ձեւը տուին ֆրանսական ոստանին , ինչպէս կը գուչէր Հիւկօ իր զայրացկոտ քերթուածներով : Կղերը , իր գիրքն ու զօրութիւնը վերապահ գտած ԺԼ . դարուն գործը կը քանդէր , ու կը պատրաստէր , իր անբարոյացուցիչ ազդեցութեամբ , Յեղափոխութեան Ֆրանսային անպարտելի եւ ազատագիր բանակին տեղ , Սըտանի տխուր սպայակոյտը : Եւ , ինչ որ ամենէն վտանգաւորն էր , թեթեւ , փոքրոգի ու հայհոյիչ հեգնութիւն մը սովորական ոգին կը սկսէր դառնալ , հեգնութիւն մը որ ԺԼ . դարուն գիտակից ու հաւատաւոր հեգնութիւնը չէր , այլ իմաստակ ծաղրը բոլոր մեծ զգացումներուն , այդ հակասական շրջանին մէջ ուր կրօնքը կը տիրէր առանց ո եւ է անկեղծ կրօնասիրութեան , ուր գիտութեան պաշտամունքն ալ չէր պահած իր խանդավառող զօրութիւնը , այլ ընդհակառակն , գրական իմաստասիրութեան սխալ հասկցուած ոգիով մը , եսական ու նիւթապաշտ բարոյական մը կը սկսէր կազմուիլ . եւ այդ ոսկեղոծ փտութիւնը իր յատկանշանական մէկ արասայտութիւնը կը գտնէր Օֆէնպախի երաժշտութեան մէջ որ Ուրիմպոսն ու աստուածները , ինչպէս եւ բովանդակ արդի մարդկութիւնը , խաղը խայտառակ կը ցուցնէր իր չարածճի ու ապուշ զուարթութեանը մէջ . գրականութիւնը մարդատեաց , կենսատեաց ձգտումներով կը սկսէր ապականիլ . բայց զեռ կանգուն կը մնային քանի մեծ խրոխտ ուժեր , որոնք յաւիտենական ֆրանսան կը ներկայացնէին , Հիւկօն որ կը յամառէր ազատութեան , գեղեցկութեան ու խանդի երգը գոռացնել , Պալզաքը որ մարդկային նոր գիւցաղներգութիւն մը կը յղանար , մթին բայց հզօր : Գեռ կը մնար մանաւանդ հաւատք մը , որ ընդհանուր էր , հաւատքը ֆրանսական մեծութեան , վեհանձն ու արգաւանդ հաւատքը որ կարեւոր էր աշխարհին , որովհետեւ իր մէջ կ'ընթացէր եւ ֆրանսայէն դուրս կը սփռէր այն բոլոր աղնիւ սկզբունքները որ ֆրանսանունին մէջ կը խտանային : 70 թ պարտութիւնը վճռական հարուած մը եղաւ . Ֆրանսա կարէվէր խոցուեցաւ իր հպարտութեանը

մէջ, եւ նոյն ատեն դառնութիւնը ունեցաւ իր դժբաղդութեանը միջոցին զինքը լքուած տեսնելու իր գրացի ու դաշնակից Անգլիայէն եւ ցեղակից ու բարերարուած Իտալիայէն : Վհատութիւն մը եկաւ իր վրայ, եւ տեսակ մը աղետաւոր տխրութիւն, որ սաստկացուց այն ամուլ ու անազնիւ բարոյականը որ արդէն սկսեր էր կազմուել : Անշուշտ, պարտութենէն անմիջապէս յետոյ, Փրանսա ցոյց տուաւ ինքնապահպանման ու վերականգնման ճիգ մը որ հիմնալի էր եւ կ'ապացուցանէր Ֆրանսական ցեղին մէջ կենդանութեան թաքուն անսպառ ազբիւրներ . Թիէն, Ժիւլ Ֆէտի, Կամպէթիթա, Ժիւլ Սիմոն եւն . ուշիւ ու կորովի կառուցիչները եղան երրորդ Հանրապետութեան, հիմնեցին գործունէութիւն մը հանդարտ, խորհրդածուած, առանց ոստումի, հեռատես ու ամուր, գործունէութիւն մը անգլիական մէթոտով . վանեցին կղերական զօրութիւնը, վերակազմեցին, գերման ազդեցութեան տակ՝ դպրոցական դրութիւնը, ուղեցին շարունակել ԺԷ . դարու Փրանսան . այդ ճիգին արդիւնքովն է որ Փրանսա իր պատերազմական տուգանքը անմիջապէս վճարեց, իր ներքին քայքայուած կացութիւնը վերանորոգեց, ու շուտով բարձրացաւ նիւթական բարօրութեան ամենափայլուն վիճակի մը, իր զինուորական զօրութիւնը մեծ խնամքներով զարգացուց եւ հուսկ ապա իր քաղաքական դիրքը հաստատապահեց ռուսական նիզակակցութեամբ : Բայց թոյնը մնացած էր, եւ Նաբոլէոն Գ . ի օրով սկսած տարբադադրութիւնը, պարտութեան յառաջ բերած թուլացումին պատճառով աճեցաւ, աւարածուեցաւ ու խորացաւ, հակառակ այդ քանի մը գեղեցիկ ապանեխիչ ուժերուն ուրոնք Հայրենիքին շինուածքը փրկեցին բայց ժողովրդին հոգին ամբողջապէս չկրցան դտել : Անկման նշաններ կը շեշտուէին ցեղին բարոյական ըմբռնումին, մտաւորական արտայայտութեանը մէջ . գրականութիւնը, աւելի երկրաքարչ, աւելի յոռեսես, աւելի աղքատաշտ, աւելի մորթամոլ քան երբեք, ծայրայեղութեան հասցուց մեծ խռէպներուն, ազնիւ հաւատքներուն դձուճ ծանակումը, կամ չլմորեցաւ հիւանդադին ու հեշտախտաւոր միտութեան ութեան մը մէջ, կամ մանաւանդ անձնատուր եղաւ «բնապաշտ» սխալ տիտղոսով որակուած վէպին, որ կարճատես կանխակալ կարծիքով մը կը ներկայացնէր մարդկութիւնը

բացարձակօրէն անգիտակից, ցած կրքերու խաղալիք, տգեղ, չարագործ ու խղճալի, եւ որ, հուսկ ուրեմն, մտածման վերջին նշոյլէն զրկուած, եղաւ բոլորովին անկողնարանի առարկայ մը, ցնծավայրի գործիք մը, չնութեան միակերպ ու տխմար պատմութիւնը : Թատրոնին մէջ կը կանգնէր Վոսյիլը, տխմար լղրճուկ ու զուարճալի . եւ քիչ յետոյ անկից ալ աւելի մեծագոր դարձաւ քաֆե շանքանը, փողփողուն ու ապուշցնող դրպրոց մարդկային խողութեան : Տիլերան քիզը իբր ճաշակ, ժրնանփիշիզը իբր բարոյական, վայելամոլութիւնը իբրեւ իմաստասիրութիւն տիրապետեցին : Լրագրութեան մէջ տարածուեցաւ շահատենչ ստախօսութիւնը, գրգռիչ եւ անխղճամիտ կուսակցամոլութիւնը, եւ ամօթալի շանքամբ : Այս ընդհանուր թուլութենէն օգտուելով, կղերական զօրութիւնը, անզգալի սողոսկումով մը ջանաց նորէն մտնել ֆրանսական կազմուածքին մէջ եւ իր առաջուան տեղը գրաւել հոն : Լեւոն Ժ. Գ . պապը, իր ճարպիկ ու խորամանկ քաղաքականութեամբը, որով Հանրապետութիւնը կ'ընդունէր եւ կը հրաւիրէր Փրանսայի կաթողիկոսները այդ կառավարական նոր ձեւին յարիւ, յաջողցուց կղերականութեան այդ վերահաստատումը, մեղմեց ու վերջ ի վերջոյ վտանգեց Կամպէթիթայի հակակղերական շարժումը, բանակին, խորհրդարանին, լրագրութեան մէջ զօրաւոր դիրք մը գրաւել տուաւ հանրապետական ձեւացած կղերականներուն, այն աստիճան որ ասկից քանի մը տարի առաջ, Սելինի կառավարութիւնը պարզապէս աջակողմին գործիքը դարձած էր : Այդ քայքայման մէջ դեր ունեցաւ ուրիշ տարր մըն ալ, Հրեաները . ասոնք, վերջին պատերազմէն ի վեր Փրանսայի մէջ տարածուելով, արձարծեցին դրամի անհագ ու գոհհիկ սէրը, խարդախութեան, գեղձուճներու, բարքերը, շահագիտական մոլութիւնը սաստկացուցին խորհրդարանին ու լրագրութեան մէջ : Եւ ժիզուիթութեան ու Հրէութեան, այդ երկու ապականիչ ուժերուն մէջտեղ, ֆրանսական հոգին խախտեցաւ ու այլայլեցաւ : Այս ամբողջ բազմապատիկ պատճառներուն հետեւանքն են Բանամայի գայթակղութիւնը, Արեւելեան խնդրոյն առջեւ Փրանսայի անմարդկային ընթացքը, եւ այսօր՝ Տրէքֆիւսի հարցը, եւ ատոնց արդիւնքն է մանաւանդ այն վտանգաւոր անտարբերութիւնը զոր նոյն իսկ

ժողովուրդը պահեց այս ներքին եւ արտաքին խնդիրներուն հանդէպ եւ որմէ այս տրէյֆիւսեան գործին առիթով միայն սկսաւ թօթափիլ : Բանաստեղծին գլխաւոր հեղինակը եղան Հրեաները : Արեւելքի Գրիտոնեաներուն նկատմամբ Ֆրանսայի կառավարութեան ու մամուլին ունեցած անհաւաքալի վարմունքը գործն էր կղերականներուն որ իրենց Պապին հետ Սուլթանին կողմը բռնեցին եւ Հրէաներուն որ թրքական արժեթղթերուն կողմը բռնեցին : Իսկ այս Տրէյֆիւսի խնդիրը հետեւանքն է ժեզուիթութեան ու Հրէութեան մէջ եւ պայքարին : Այս խնդիրը վճռական խնդիրն է : Հանրապետական Ֆրանսային կեանքն իսկ է վտանգի մէջ : Բայց այս անգամ Հրէութիւնը առիթ մը տուած պիտի ըլլայ Հանրապետական Ֆրանսային՝ որպէս զի վտանգը տեսնէ եւ իր գոյութիւնը ամրապնդէ կղերական ուժին դէմ, որ միանգամայն միապետական կամ կայսերական ուժն է՝ ծպտուած :

Այս բոլոր անկման երեւոյթներուն տակ, առողջ Ֆրանսան մշտնջենաւորով մէկ քանի տարրեր կը տոկային . ազատական հակազդեցութեան խուլ աշխատութիւն մը կը շարունակէր անընդհատ, եւ այս Տրէյֆիւսի խնդիրը մէկ սուր պատրուակը եղաւ որով այդ բարոյական վերականգնումի ձգտումը, որ ատենէ մը ի վեր կը պատրաստուէր ու կը հասունար, պայթեցաւ եւ իր յաղթանակը ուզեց վերջնապէս ապահովել : Բնապաշտ վէպին ու երգեցիկ սրճարանին ամենէն փայլուն օրերուն իսկ, Ռենանի, Թէնի պէս մըտքեր, այդ բոլոր արիւթին ու կղկղանքին հանդէպ իրենց զգուանքը կ'արտայայտէին ու գաղափարի գրականութեան, ազատ քննութեան եւ ազատ կեանքի աւանդութիւնը կը շարունակէին : Բանաստեղծութեան մէջ, Լըքոնդ տը Լիլ կը բարձրացնէր, իր խորիստ մեկուսացմանը խորէն, երգուած մտածման յիշատակարան մը, այնչափ հզօր ու վեհ որչափ դառն, շարունակելով Վինիին, շարունակելով կորովի, ազնուածաշակ ու յստակ Ֆրանսան : Գերման յաղթանակը, բրուսական եսամոլ ոգւոյն հետ, բերած էր միանգամայն ազդեցութիւնը Գերման լիզուին ու մտաւորական շարժման : Ֆրանսական նոր սերունդ մը ելաւ, հիւսիսային մտածումին խորապէս ընտել, աւելի հարուստ ու գիտակից քան մեծամասնութիւնը նախորդ սերունդին, աւելի սոգորուած՝ ընկերա-

կան ու բարոյական մտահոգութիւններով : Ընկերվարականութիւնը, որ գերման Գարլ Մարքսէն ընդունած էր գիտական կազմակերպութիւնը, ծաւալեցաւ Ֆրանսայի մէջ եւ առողջութեան ուժ մը աւելցուց . Հիւսիսի մէկ քանի մեծ մտքեր, սկանտինավ Իպսէնն ու Պիոնսոնը, անգլիացի Գարլայը, գերման Հաուքթմանն աւ Նիցչէն, ռուս Թալսթոլը, գաղափարական կենսականութիւնը վերարձարեցին, նպաստեցին որ Ֆրանսա վերստին դառնայ արի, ազնիւ ու բարձրաթուիչ այն հոգիին զոր ինքն իսկ երբեմն իրմէ դուրս արձակած էր ամեն կողմ : Այդ մտաւորական կերպարանափոխութիւնը կը սկսէր զգալի ըլլալ այս վերջին վեց եօթը տարուան մէջ . երգեցիկ սրճարանն ու վոտվիլը կը աժգունէին, շնութեան վէպը նողկանքով կը հալածուէր նոր գրագէտներէն, բնապաշտ վէպին դէմ հանդիսաւորապէս կ'ապստամբէին Ռոնիի, Հենիքի, Հիւիզմանի, Մաուկոթի պէս մտքեր, ընկերվարականութիւնը աճուն յառաջխաղացութիւն մը կ'ունենար, արուեստը իր թոյլ քմասիրութեանէն, իր տարտամ զգայամոլութեանէն կ'ելլէր, քննադատութիւնը կը ստիպուէր խոնարհիլ Բիւլյոս տը Շավանի, Ռոտէնի, Կիւսթով Մոտոյի բարձր գաղափարապաշտութեան առջեւ . Իպսէնի ու Վակնէրի յաղթական երեկոյթներ եղան ուր նորոգուած Ֆրանսայի մը թրթռալը զգացուեցաւ, տարրեր այն Ֆրանսայէն որ իվէթ Կիւլպեռը եւ Բոլիւսը աստուածացուց : Այդտեղ, թանձրացած ու գոհկացած ոճին տեղ որ կը արտապիտէր, բուն ֆրանսական վճիտ, հզօր ու ազատ զրուցուածքը իր գերիշխանութիւնը գտաւ . Գլեմանսօ, երէկ մեծ ատենարան, յանկարծ յայտնուեցաւ առաջնակարգ գրագէտ մը, եւ գրագէտ մը որ Տիտոյին սրատեսութիւնը ունէր եւ Ռուսոյին պերճախօսութիւնը, եւ սքանչելի Անաթոլ Ֆրանսը, որ ինքն իսկ սիրուն ճիւղերանք մըն էր մինչեւ վերջերս, երեւան եկաւ իբրեւ խորաթափանց քննադատ մը արդի հակասական Ֆրանսային, նոր Վոլթէռի մը ծիծաղը հնչեցնելով ժամանակակից բարբերուն զաւեշտական կեղծաւորութեան դէմ : Նոյն իսկ Ջոլան որ իր հանձարը ռամկացուցած էր բնապաշտ վէպին հակարուեստագիտական տարազին մէջ, իր ձեւը կը փոխէր եւ հոգեկան ու ընկերական մեծ խնդիրներ նիւթ կ'առնէր իր վերջին

եռամասնեայ վէպին ( Առուս , Հոռոմ , Բարիզ , ) որնախապատրաստութիւնը եղաւ այն հոյակապ արարքին որով հերոսացաւ :

Հայկական ու յունական խնդիրները արդէն ոկսան անկման ու վերանորոգման տարբերուն միջեւ այդ պայքարը մտաւորական շրջանակէն հասարակական գործունէութեան շրջանակին մէջ փոխադրել : Արեւելքի մէջ կատարուած այդ հսկայական ոճիրը Ֆրանսական խղճին զարթումը երագեց . այն պահուն ուր կառավարութիւնը Սուլթանին մեղսակից կ'ըլլար հրապարակաւ , ուր լրագրութիւնը ամենամեծ մասամբ դահիճը կը պաշտպանէր , ճշմարիտ Ֆրանսան իր զայրոյթի ձայնը լսելի ըրաւ . այդ Ֆրանսան Արեւելքի քրիստոնէից պաշտպան կաթողիկ Ֆրանսան չէր ( բաց ի Հ . Շառմըթանէն որ անկեղծօրէն ու յարատեւօրէն Հայուն դատը պաշտպանեց , կաթողիկ կուսակցութիւնը դաղջ ու երկղիմի համակրութիւն մը ցուցուց եւ թրքասէր գործը դիւրացուց Հանոթոյն ) , այլ Յեղափոխութեան Ֆրանսան էր որ առանց վերապահման իր բացարձակ զայրոյթը գոռաց , — Բլէմանսօ , Սէյլսին , Լափիս , Պէռառ՝ մամուլին մէջ , Անաթոլ Ֆրանսա՝ բեմ իջնելով իր աշխատանոցէն ուրկէ առաջին անգամ ըլլալով զուրս կ'ելլէր հանրային գործունէութեան համար , Ժոռէս՝ խորհրդարանը սարսելով իր շանթահարիչ բողոքովը : Յունական պատերազմին ատեն , ընկերվարականները եւ բոլոր ազատականները հանդիսաւոր միթիսկներով ձայն բարձրացուցին կառավարութեան թրքամոլութեանը դէմ , երիտասարդութիւնը փողոցները թընդացուց հակակառավարական աղաղակներով , եւ կամաւորներ մեկնեցան , ինչպէս ուրիշ դիկ օրերուն , դէպ ի Յունաստան : Ֆրանսակը սթափէր , մեծ գաղափարներուն Ֆրանսան , վեհանճն ու գործօն Ֆրանսան : Եւ ահա ինչու այնքան դիւրաւ Պարսոն կրցաւ տապալել Մելինի դահլիճը . բաւեց որ բացէ ի բաց յայտարարէր թէ այդ կառավարութիւնը հանրապետութեան քողին տակ աջակողմին գործիքը զարձած էր : Յեղափոխութեան Ֆրանսային վերականգնման մեծ օրերէն մէկը եղաւ այդ օրը : Տրէյֆիւսի խնդիրը ծագեցաւ , ու կոխը վերսկսաւ , աւելի կատաղի , աւելի վտանգաւոր , ա՛լ այս անգամ բացարձակ , վերջնական կոխ մը :

Խնդիրը ունէր բոլոր հանգամանքները այս ծայրագոյն սաստկութիւնը ստանալու , այս

խորհրդանշանական ընդարձակութեան հասնելու : Ենթական Հրէայ մըն էր , զո՞հ այն դարաւոր ատելութեան զոր կաթողիկները ունին Հրէաներուն համար . եւ իսկոյն երկու վիթխարի ուժերը , կաթողիկութիւնը եւ Հրէութիւնը , դէմէ դէմ ելան . Հրէութիւնը , որ ընկերական հին կարգուսարքը քանդող միջազգային զօրութիւն մըն է , Յեղափոխութեան Ֆրանսային վերածնունդին կարեւոր աջակից մը եղաւ այս դէպքով . իրենցմէ մէկը ազատելու եւ միանգամայն ջախջախելու համար հակասեմական շարժումը որ իրենց դէմ կը կուտակուէր , Հրէաները իրենց ամբողջ համերաշխութիւնը , յարատեւութիւնը եւ ճարտարամտութիւնը ի գործ դրին . մէկ երկու տաղանդաւոր Հրէաներ են , Պեռնաո Լաղաո , Ժոզէֆ Ռէյնաք , որ գործին հիմը դրին . եւ ահա ամբողջ ազատական Ֆրանսան այդ խնդրոյն շուրջը գումարուեցաւ : Խնդիրը ունէր իր վիպական հրապոյցն ալ . անմեղ մը հեռաւոր ժայռի մը գամուած , խեղճ կին մը , կէս այրի , որ յանդուգն ու յամառ արիութեամբ մը արգարութիւն կը պահանջէ , եւ ամբողջ պատմութեանը շուրջը՝ խաւարչախն դաւ մը կ'ընտոտ : Խոչոր համակրութիւններ ու խոչոր ատելութիւններ գրգռելու համար կարելի չէր աւելի յարմար նիւթ մը գտնել : Բոլոր կրքերը բորբոքեցան . եւ երկու բանակները բաղխեցան իրարու : Մեծ կոուլին նշանը Չոլան տուաւ : Իր արարքը այս դարուն ամենէն վեհ շարժումընէն մէկը պիտի մնայ : Այդ շարժումածքը ամենէն պերճախօս կերպով կը ցուցնէր Ֆրանսայի մէջ կատարուած բարոյական կերպարանափոխութեան մեծութիւնը : Այդ պրալժուա գրագէտը , որ իր վէպերովը հարստացած էր , որ ճանչցուած էր իբրեւ ստորին կրքերու տխուր ու թանձր նկարագրող մը , որ նոյն իսկ ծիծաղելի ըրած է ինքզինքը Ակադեմիային յաւիտենական թեկնածուի իր պատուամոլ ձգտումովը , զուրս կը ցատքէր իր փառասէր չէզոքութիւնէն , կեանքին խառնուրդին մէջ կը նետուէր , իր հանդիսօր , պատիւը , շահերը կը կոխտտէր , Գաղափարի մը համար : Ոչ ոք մոռցած է այն տիեզերական իրարանցումը զոր այդ արարքը յառաջ բերաւ : Ոչ ոք պիտի կրնայ մոռնալ պատմական օրերը այն դատին որ արարչին հետեւանքը եղաւ . Այդ գատը պիտի յաւերժանայ , ինչպէս Ժան Հիւսինը , ինչպէս Գալիլէինը , ինչպէս՝ պիտի համարձակիմ ըսել :

Յիսուսինը : Զոյա ներկայացուց Գաղափարին հաւատացող Անհատը՝ Բռնութեան Զանգուածին դէմ ցցուած : Եւ երկու բանակները ուրիշ բան չէին բայց եթէ այդ երկու բաներուն մարմնացումը : Աններելի խեղաթիւրումով մը , սուտ հայրենասէրները կարծել սուին թէ նոյն խկ Բանակն ու Մտաւորականութիւնն էին իրարու դէմ ելած , թէ Հայրենասիրութիւնն ու Անիշխանականութիւնն էին կուռի բանուած : Անոնք որ բողոքի գումարտակը կը կազմէին , իրենց կարգերուն մէջ ունէին Բանակի հարազատ ու փառաւոր ներկայացուցիչներ ինչպէս Բիքառ , Բանակը խանդաղատանքով սիրող քաղքենիներ ինչպէս ծերունի Կոխօն , Հայրենիքի գաղափարին հաւատարիմ մնացող մտաւորականներ ինչպէս Տիւքլօ , եւ միանգամայն ընկերվարականներ ինչպէս Ժոռէս , անիշխանականներ ինչպէս Սեպասթիէն Փոռ . եւ արգէն այս խնդրոյն ամէնէն գեղեցիկ երեւոյթներէն մէկը եղաւ այդ անկեղծ ու լայնագի միութիւնը , գաղափարի մը եւ ընդհանուր ուղութեան մը յաղթանակին համար , հաւասարապէս ազատասէր բայց ծրագրով իրարմէ տարբեր կուսակցութիւններու : Կարեւոր երեւոյթ մըն ալ՝ իրենց փողոսկրէ աշտարակէն իջնելը եղաւ գիտնականներու , արուեստագէտներու , գրագէտներու , որոնք այս վերջին շրջանին մէջ հանրային խնդիրներէ բացարձակապէս քաշուած կ'ապրէին եւ նոյն խկ կ'արհամարհէին զանոնք . ժողովրդական միթիւններու մէջ տեսանք Տիւքլոյի , Ռուի , Բոլ Ռըքլիւի պէս գիտնականներ , Անաթոլ Փոանսի , Օքթավ Միոպոյի պէս գրագէտներ , Բոէնսանսէի պէս հրապարակագիրներ , Պիլիսոնի , Սէայլի , Բսիքառիի պէս ուսուցիչներ . ոչ թէ կուսակցութիւն մը , այլ Ֆրանսան էր ամբողջ , 89ի Ֆրանսան որ կ'ուզէր իր գոյութիւնը վերահաստատել , վանելով Օրէնքին ապստամբները , Ազատութեան դաւողները : Ասոնք քաջութիւնը ունեցան զիմագրաւելու բովանդակ պաշտօնական Ֆրանսային հակառակութիւնը , Ամբոխին թանձր ատելութիւնը եւ երբեմն նոյնիսկ վտանգը կազմակերպուած դաւերու : Եւ Զոլան արտորին գառնութիւնը յանձն առաւ , ինչպէս Հիւլօ՝ նախորդ շրջանին . եւ Բիքառ բանտի մը մէջ գամուեցաւ : Այս անձնազոհութեան օրինակները , այս անդրդուելի հաւատքը , եւ այս բոլոր կորովը որ թափուեցաւ , չեն կրնար ապարդիւն մնալ : Ահա մէկէ աւելի

Դահլիճներ որ տապալեցան , այս խնդրոյն համար : Ահա մեղաւորները որ գրէթէ ամենքն ալ պաշտօնէ հեռացան , կէս մը պատժուած : Արդարութեան յաղթանակը անխուսափելի է : «Ճշմարտութիւնը ճամբան է , ըսաւ Զոյա , ոչինչ պիտի կասեցնէ զայն» : Այդ խօսքը իրականացաւ խորհրդաւոր յառաջխաղացութեամբ մը : Թեւ առ թեւ բղքուեցաւ ստութիւններուն վարագոյրը , կաբժես ճակատագրական զօրութեան մը մղումին տակ : Այն պահուն ուր կը գրեմ , խնդիրը իր վախճանին չափազանց մօտեցած կը թուի . Ֆրանսայի նորընտիր նախագահին պաշտօնական նամակը Յեղափոխութեան Ֆրանսային հաւատարմութեան կորովի հաստատում մըն էր եւ կծու ազդարարութիւն մը անոնց որ կը շփոթեն մէկ քանի պետեր ու Բանակը որ ամբողջ ազդն է : Ու Արդարութեան թշնամիները յայտնեցին որ միանգամայն Հանրապետութեան թշնամիներն էին . մէկ քանի մոլորած փառասէրներու հիմնած Ֆրանսական Հայրենիքի Դաշնակցութիւնը իր դաւաճան ոգին մատնեց ու վերջնականապէս անուանարկուեցաւ Տեղուէտին ռճրագործ արարքովը : Թէպէտ Տիւքլիի առաջարկած սեղմիչ օրէնքը ընդունուեցաւ երկու խորհրդարաններէն , բայց Մերակոյսին մէջ Պեռանսէի հոյակապ ճառը , որ ծափահարուեցաւ բոլոր կուսակցութիւններէն ու ամբողջ Ֆրանսայէն , գրաւական մըն է որ երկրին ամենէն յարգելի ուժերը խմբուած են Վճռաբեկ Ատեանին շուրջը եւ պիտի հսկեն որ արդարութիւնը կանոնաւորապէս գործադրուի հոն , եւ երբ Վճռաբեկ Ատեանը իր վճիռը արձակէ , այդ վճիռը արդարութեան ճայնը պիտի ըլլայ , եւ Ֆրանսա պիտի խոնարհի անոր առջեւ : Ֆրանսա , կը կրկնեմ , աւելի առոյգ եւ աւելի հզօր պիտի դուրս ելլէ այդ փոթորիկէն : Խղզուկ , ծանր ու անշարժ օդերէն յետոյ , փոթորիկը անհրաժեշտ է : Փոթորիկը քայքայում մը չէ , վերանորոգում մըն է : Անոր անցքէն ետքը , ծովը աւելի պայծառ եւ օդը աւելի վճիռ կը շողան : Փոթորիկները կենսականութիւնը կ'ապացուցանեն : Մեռած ջուրերն են միայն որ փոթորիկ չունին : 89ի Յեղափոխութեան ատենն ալ , կարծողներ եղան որ տարրալուծում մըն էր ան , եւ թէ Ֆրանսական ուժերը , իրարու բաղխելով , ամբողջութիւնը պիտի ջնջէին : Եւ սակայն ընդհակառակն , ստանուեցաւ որ նոր ուժերը հին զօրութիւնը քանդեցին , եւ երբ իրենց

ներքին ծրագրերը իրագործեցին , ամբողջ Եւրոպային ապացուցին թէ ֆրանսական կորովը տասնապատկուած էր . երբեք այնքան խանդավառ ու հզօր չհղաւ Ֆրանսա որքան այդ Առաջին Հանրապետութեան շրջանին , ուր , իրենք զիրենք ազատագրելէ յետոյ , Յեղափոխութեան զինուորները ուղեցին բոլոր ազգերը իրենց լուծէն ճողոպրել :

Անգամ մը , որ այս տագնապէն յաղթական ելլէ , Ֆրանսա պիտի տայ աշխարհիս նորոպուած կորովի մը ապացոյցները : Եւ աշխարհ պիտի շահի ատով , — եթէ արդէն իսկ շահ չէ այն բոլոր արտայայտութիւնները որ այս առիթով տարիէն ի վեր է երեւցան ամէն երկիրներու մէջ ի նպատտ արգարութեան , եւ որոնք այդ իւրաքանչիւր երկրին մէջ տեղական բանութեանց գէմ ազատագրութեան ապագայ գործը հատուցնելու ծառայած պիտի ըլլան :

Վերակազմուած Ֆրանսան այլեւս պիտի թոյլ չտայ որ Բանամայի ու Տրէյֆիւսի զէպքերը կրկնուին : Ազատական գումարտակը որ ձեւացաւ այս խնդրոյն առիթով եւ որ օրէ օր քաղմապատկուելու վրայ է եւ կը պարունակէ Ֆրանսայի ամենէն մաքուր ու բարձր ուժերը , իրեն նպատակ դրաւ՝ այս պայքարը սկսած օրէն իսկ՝ ո՛չ թէ լուծուածը այս մասնաւոր խնդրոյն , այլ ապայուումը ամբողջ իրերու զրուծեան մը՝ որուն հետեւանքներէն մէկն էր այս խնդիրը . այդ գումարտակը ֆրանսական խղճին կազմակերպուած ու գործօն արտայայտութիւնը պիտի ըլլայ եւ է արդէն : Անկախ եւ անշահախնդիր լրագրութիւն մը անհերեւան կ'ելլէ՝ ընդդէմ խարէութեան ու շանքածի մամուլին որ փտութեան մեծագոյն ազդակներէն մէկը եղաւ ֆրանսական այս վերջին շրջանին . մտաւորականները , այս զէպքով հանրային գործունէութեան մէջ մտած , պիտի շարունակեն իրենց մասնակցութիւնը պահել անոր մէջ եւ զայն վարել՝ ընդդէմ խորհրդականներու շահամոլ ոգիին որ արձակ ու անպատուհաս սիրեց տասնեակ մը տարիէ ի վեր . եւ հանրային կարծիքը որ հետզհետէ կը թօթափէ իր անտարբերութիւնը , վաղը նորէն լծակը պիտի դառնայ մեծ գաղափարներու իրագործման եւ պահպանման : Ասոնք բոլորը նշաններ են թէ Ֆրանսայի ներքին վերանորոգումը իրողութիւն մըն է արդէն :

Եւ այդ նոր Ֆրանսան պիտի փոխէ եւրոպական բարոյականը : Անոր ձայնը , երբ վերստին լսելի ըլլալ սկսի , անհնարին պիտի

գարձենէ թրքական ջարդերու կամ յունական պատերազմին կամ Կուպայի վայրագութեանց նման խոշոր ապերաշուծիւնները : Եւ ատոր ալ այժմէն իսկ ապացոյցները ունինք : Ֆրանսական արտաքին քաղաքականութիւնը արդէն այժմէն իսկ կրած է հիմնական փոփոխութիւն մը : Հանսթօ կղերականացեալ Ֆրանսային ներկայացուցիչն էր , եւ զիտենք թէ անոր օրով Ֆրանսայի պատիւը ո՛րքան վտանգուեցաւ արեւելեան խնդրոյն մէջ : Տէլքասէ , որ Պսիսոնի հետ , առաջին օրէն՝ Տրէյֆիւսի դատին վերաքննութեան ամենէն ջերմ կողմնակիցը եղաւ , նոր Ֆրանսային մէկ քաղքենին է . այն քաղաքականութիւնը զոր ի գործ դրաւ Ֆրանսայի արտաքին գործերուն մէջ՝ քաղաքակրթութեան ու պատուութեան քաղաքականութիւն մըն է , ճարպիկ ու խրոխտ , աղնիւ ու խօհեմ միանգամայն : Անգլիոյ հանդէպ , Պաշտոյի խնդրոյն առթիւ , Տէլքասէ գիտցաւ բանել խմատուն ընթացք մը որ գնահատուեցաւ ամբողջ Եւրոպայէն , առաջին առաւ պատերազմի իրական եւ անմիջական վտանգի մը որ հսկայ աղէտք մը պիտի ըլլար քաղաքակրթութեան համար : Յաջողեցաւ՝ Ֆրանսայի արժանապատուութիւնը բարձր բռնելով հանդերձ՝ Անգլիոյ հետ մերձեցման մը եւ հաշուեյարգարութեան մը գաղափարը իրականացնել , եւ այսօր երկու երկիրները լրջօրէն ու հանդարտօրէն կը բանակցին իրենց միջեւ գտնուող բոլոր առկախ խնդիրները լուծելու եւ համեմատ համար արմատական համաձայնութեան մը , որ , եթէ ամբողջապէս կատարուի , մեծագոյն բարիքը պիտի ըլլայ մարդկութեան մատուցուած եւ անհունապէս պիտի դիւրացնէ միջազգային իբրաւխոսութեան զրուծիւնը որ Չարէն հանդիսաւորապէս առաջարկուեցաւ , փոխանակ պատերազմի բարբարոս դրութեան : Հաշտարար—միջնորդի գերը զոր Տէլքասէ աւարտեց Սպանիոյ եւ Ամերիկայի մէջեւ , Ֆրանսայի վառկին նոր փայլ մը տուաւ , եւ շեշտեց նոր Աշխարհին համակրութիւնը Ֆրանսայի համար : Եւ անախտալիւ կը քաւէ անցեալին ապերախտութիւնը , կը մերձենայ «քոյր ազգին» անկեղծ խանդազատանքով մը , կիքելով ֆրանքօ-իտալական առեւտրային գաշնադիրը , զոր Տէլքասէ յաջողցուց : Վերջապէս , այն կարեւոր մասնակցութեամբը զոր ունեցաւ Կրէտէի խնդրոյն լուծման մէջ , Տէլքասէ ապացուցուց թէ «աւգատութեան բաշխիչ» Ֆրանսան վերականգաւ

նացած է : Ինքն իսկ փետր . 25ի օրը խորհրդարանին մէջ արտասանած գեղեցիկ ատենախօսութեամբը իր գործը կ'ամփոփէր . «Թող ուրանան իմ ըրածս կամ զրպարտեն զիս , իմ խիղճս , իմ յստակատես հայրենասիրութիւնս ինծի կ'ըսեն որ , եթէ վերջին ամիսներու ընթացքին մէջ կրցայ քանի մը ծառայութիւններ մատուցանել , թէ՛ դիւրացնելով երկու բարեկամ մեծ ազգերու միջեւ թշնամութեանց դադարումը , թէ՛ պաշտպանելով Յրանսայի դարաւոր ազդեցութիւնը Արեւելքի մէջ , թէ՛ նպաստելով որ Կրետէի մէջ օրինաւոր լուծումը , ազգային լուծումը յաղթանակէ , թէ՛ աշխատելով որ անտեսական մերձեցմամբ մը Իտալիոյ հետ վերահաստատել սերտ յարաբերութիւններ , թէ՛ վերջապէս ջանալով որ ուղղամիտ ու յստակ քաղաքականութեամբ մը՝ Յրանսայի շուրջը ստեղծեմ վստահութեան ու յարգանքի հոսանք մը , ամենէն թանկագին ծառայութիւնը ապահովապէս ա՛յն եղաւ որ նախատեսեցի ու կերպով մը անկարելի դարձուցի բաղխում մը որ աշխարհիս համար ազէտք մը պիտի ըլլար եւ որ երկայն ատեն ծանրօրէն պիտի ճնշէր երկու երկիրներուն քաղաքականութեանը վրայ : . . . Ինչ որ կը համարձակիմ ինզորել , սա է որ խոստովանին թէ ուղղութեանը մէջ զոր գրոշմեցի Յրանսայի արտաքին քաղաքականութեանը , երբեք մտքէս չհեռացուցի այն գաղափարը թէ կը ներկայացնէի ինչ որ Կամպէթթա անունեց «ամենէն բարձր բարոյական անձը որ գոյութիւն ունի աշխարհի վրայ» : Ամենքս ալ միեւնոյն համոզումով ողբերուած , պիտի ունենանք հարկաւոր ուժը՝ վաղուան դժուարութիւնները լուծելու համար : Յոռտես չեմ ես . եւ կարելի չէ յոռտես ըլլալ երբ մարդ գիտէ թէ ի՛նչ է Յրանսան եւ թէ այն փրփուրին տակ , զոր ունանք չեմ գիտեր ի՛նչ գարչելի հաճոյք մը կը զգան միշտ յուզելու կ'ապրի եւ կը գործէ ժողովուրդ մը գերազանցապէս պարկեշտ եւ առողջ , իննայսէր որքան աշխատող , որ գիտակցութիւնն ունի թէ իր ճակատագիրը չէ աւարտած , որ միշտ կարող է թրթռալ մեծ դատերուն , ազնիւ զգացումներուն համար եւ որմէ շատ բան կարելի է յուսալ եթէ հոգ տարուի որ անոր նա յուսածքը միշտ յառած մնայ գերագոյն արգարութեան ու բարձր քաղաքակրթութեան իտէալի մը վրայ» :

Վերջին տողերը կը ցուցնեն , խորխտաբար ու յստակաբար արտայայտուած , ամբողջ բարոյական ուղղութիւն մը՝ Յրանսայիներքիջ ու արտաքին կեանքին համար , եւ ատի ֆըրանսական մեծ ուղղութիւն է : Արդէն իսկ ձեռք ձգուած արդիւնքները յուսալ կուտան սրայդ ուղղութիւնը պիտի յաղթանակէ : Մենք ջերմաբար կը բանձանք որ այս վերածնող Յրանսան յաջողի մինչեւ ծայրը հասնիլ , իր պայքարին որ անհանար խոչընդոտներ ունի հարթուելու , եւ ըլլայ նորէն , այն Յրանսան որուն մարդկութիւնը պէտք ունի որպէս զի հաւատք եւ մեծ ստանայ քաղաքակրթական զժնդակ շորձը շարունակելու :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



Կը հրատարակենք Նուպար փաշայի ծրագիրը , ոչ թէ իբր քաղաքական ուղղութիւն մը զոր այսօր կարելի ըլլայ ներկայացնել Հայ ժողովրդին կամ Եւրոպային , որովհետեւ կացութիւնը յեղաշրջուած է հիմա , եւ թերեւս այս ծրագիրը ուրիշ բան չէ այլեւս բայց եթէ գեղեցիկ մեռել մը : Կը հրատարակենք զայն իբրեւ տոբիսման մը , որ կարեւոր է Հայ ժողովրդին այս վերջին կէս դարուն պատմութեան ուսումնասիրութեանը համար :

Մ Է Կ Ք Ա Ն Ի Ն Օ Թ Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄՏՏՈՒԵԼԻԻԲԱՐԵՆՈՐՈԿՄԱՆՑ ՄԱՍԻՆ

Եւրոպական պետութիւնները , փափաքելով որ Արեւելքի մէջ տեսականութեան հանգամանք ունեցող իրերու վիճակ մը հաստատուի , իրենց ուշադրութիւնը դարձուցին , ինչպէս Պալքանեան նահանգներուն , նոյնպէս եւ Փոքր-Ասիոյ այն մասին վրայ որ օրրանն է հայ ցեղին : Բ . Դուռը ինքն իսկ հարկը զգացած է այդ ճարտարագործ , աշխատասէր եւ ուշիմ ազգութիւնը չձգելու այն ողորմելի վիճակին մէջ ուր կը գտնուի , հեռու Եւրոպայէն եւ անոր ներկայացուցիչներէն : Անօգուտ է խօսիլ հոս իրենց հայրենիքին մէջ մընացող Հայերուն կացութեանը վրայ . անօգուտ մանաւանդ անոնց այդ կացութիւնը բաղդատել իրենց կովկասի մէկ միլիոն ազգակիցներուն հետ : Բ . Դուռը , քանի որ ՍանՍթեֆանոյի դաշնագրին մէջ յանձն առած է բարելաւութիւններ մտցնել Հայոց վարչութեան

մէջ , քանի որ այդ ժողովուրդը Գիւրտերուն գէմ պաշտպանելու ստիպողականութիւնը ընդունած է , հաստատած եւ խոստովանած է ուրեմն այն յոռի վարչութիւնը որուն տակ Հայերը կը հեծեն եւ այն լքեալ վիճակը ուր կը գտնուին քիւրտ ցեղերուն հանդէպ :

Հայերը քաղաքական գոյութեան մը , քաղաքական անկախութեան մը աչք չունին . քաղաքային (civil) ազատութիւններ կ'ուզեն , հաստատութիւններ որոնք երաշխաւորեն իրենց ապահովութիւնը , իրենց ինչքերը , իրենց կիներուն ու աղջիկներուն պատելը , իրենց կեանքի իրաւունքը՝ վերջապէս :

Եթէ այս քաղաքային ազատութիւնները , որոնք 1840 են ի վեր հանգիստաւորապէս խոստացուած են կրելանէի Հաթթի Երեթիին մէջ , եւ յաջորդ Հաթթերով շեշտուած են , իրականապէս գործադրուած ըլլային , այդ աշխատասէր հայ ցեղը , շատ տարիներէ ի վեր իր երկրին կերպարանքը փոխած կ'ըլլար Երեւանի ուսուցչական նահանգին ժողովուրդը եւրեւո՞ւն տարուան ընթացքին մէջ կրկնապատկուած է :

Հայ ազգը կը խոստովանի Ն . Վ . Սուլթանին եւ անոր մեծանուն նախորդներուն վեհանձն զիտաւորութիւնները : Եթէ այդ զիտաւորութիւնները ապարդիւն մնացած են , եթէ հրովարտակուած բարենորոգումները մնում տառի ձեւը պահած են , պատճառը այն է որ անոնց գործածութիւնը յանձնուած է կարգ մը պաշտօնեաներու որոնք անոնց նշանակութիւնը չէին հասկնար , որոնք անոնց հարկաւորութիւնը չէին զգար , կամ որոնք անոնց հակառակ էին կրօնական համոզումներով կամ անձնական շահի նկատումներով :

Ինչ ընութիւն ալ որունենան ուրեմն այն բարենորոգումները զորպիստութիւնները հարկաւոր պիտի նկատեն շնորհել այդ ուշիմ ցեղին որ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ բնական միջնորդն է , առաջին նկատողութիւնը զոր պէտք չէ աչքէ հեռացնել եւ առանց որուն ո եւ է բարենորոգում ընդունայն պիտի մնայ , ընտրութիւնն է այն անձերուն . այն պաշտօնեաներուն որոնք զայն իրագործելու պիտի կոչուին : Արդ , որովհետեւ պաշտօնեաները մինչեւ հիմայ ընտրուած են մասնաւոր ու անանձնաշնորհուած զասակարգի մը մէջէն , նոր հաստատութեանց համար յաջողութեան էական պայմանը այն է որ անուանուի Ընդհանուր Կառավարիչ մը , պաշտօնեայնեալ ուրիշ կարգէ մը ընտրուած , այսինքն քրիստոնեաներուն մէջէն , եւ քանի որ խնդիրը Հայաստանի վրայ է , Ընդհանուր Կառավարիչը Հայ մը ըլլայ :

Ինչ ալ ըլլայ այդ բարձր պաշտօնատարին ազգութիւնը կամ բարոյականը , աւելորդ է կարծել թէ անիկա պիտի կարենայ այդ զօնար գործին ձեռք զարնել , եթէ ամէն օր ինքզինքը ենթակայ զգայ յանկարծական պաշտօնակութեան մը : Ն . Վ . Սուլթանը ,

իր գահակալութեան ճառին մէջ , իր կայսրութեան չարիքներուն աղբիւրներէն մէկը համարած էր այն զիւրութիւնը որով պաշտօնեաները կ'անուանուին կամ կրճարաժարեցուին : Ն . Կ . Վեհափառութիւնը , իր հպատակներուն բարւոյն համար , կրնար շնորհել իր հայկական նահանգներուն՝ կառավարիչ մը որ ապահով ըլլայ վեց կամ եօթը տարուան շրջանի մը համար իր պաշտօնին գլուխն ըլլալու :

Ընդհանուր Կառավարիչ մը ընտրութիւնը ո եւ է բարենորոգման էական պայմանը ըլլալով , Պետութիւնները , հիմնուելով ՍանՍթէֆանօյի սկզբնական դաշնագրին վրայ ( ԺՁ . յօդուած ) , հետեւաբար առանց զպչելու Ն . Կ . Վեհափառութեան գերագոյն հեղինակութեանը , կրնան իրենց հաւանութեամբ գործակցել այդ ընտրութեանը , ինչպէս որ կ'ըլլուի Լիբանանի կառավարչին ընտրութեանը համար , եւ այսպէսով այդ ընտրութիւնը պաշարել ամէն բաղձալի երաշխաւորութիւններով :

Ընդհանուր Կառավարիչը , այս պայմաններուն մէջ ընտրուած եւ Ն . Վ . Սուլթանէն պաշտօն ստացած՝ գործադրութեանն ու ընթացավարութեանը հսկելու այն բարենորոգումներուն զոր Ն . Վեհափառութիւնը պիտի հրովարտակէ , պէտք է որ պաշտօնապէս ըստանայ հարկաւոր հեղինակութիւնը՝ այդ գործը կատարելու համար իր պատասխանատուութեան տակ :

Բայց որոնք են այդ բարենորոգումներն ու բարւոգումները : Հայ ազգը կը կարծէ թէ կարելի պիտի ըլլայ զիւրաւ զանոնք սահմանել , երբ չարիքին աղբիւրները մէկիկ մէկիկ մատնանիչ ըլլուին :

Առաջինը , յայտնապէս , Գիւրտերուն արշաւանքներուն ու աւարառութեանց խնդիրն է : Պէտք է դապել , սանձել անոնց ջոկերը : Մինչեւ ցարդ այդ բանը չեն ըրած . եւ սակայն ոչինչ աւելի զիւրին էր զօրագունդերու հրահամանատարներուն համար . կամ միջոցները պակասած են եւ կամ թէ կամքը : Ժողովրդին ապահովութիւնը ամէն վտանգէ զերծ կացուցանելու համար , ստիպողական եւ իմաստնօրէն հեռատես գործ մը չէ՞ իրեն յանձնել ինքզինքը պաշտպանելու հոգը : Քրիստոնեայ թէ մահմետական , իրենց առաջին պէտքը ապահովութիւնը չէ՞ միթէ :

Ընդհանուր Կառավարիչը իշխանութիւնը պիտի ունենար ուրեմն պահակագործի մարմին մը կազմակերպելու , որուն պաշտօնը պիտի ըլլար հսկողութիւն ընել եւ հանրային հանգարտութեան ամէն խանգարիչներուն գէմ երկիրը ապահովել : Այդ մարմինը պիտի բաղկանար՝ առանց խտրութեան , մահմետականներէ եւ քրիստոնեաներէ , որոնք առաջուց զիւրաւ սահմանելի գրութեան մը համեմատ պիտի ընտրուէին : Այդ մարմնոյն պետերուն անուանումը ընդհանուր կառավարչէն կախում պիտի ունենար , որովհետեւ ան է Ն . Վ . Սուլթանին առջեւ պատասխանատուն նահանգին

բարեկարգութեանն ու անդորրութեանը : Մահմանական ու քրիստոնեայ տարբերուն միացումը կազմակերպեալ մարմնոյ մը մէջ՝ պաշտպանութեանն ու ապահովութեանն միեւնոյն շահուն համար , բնութիւնը կ'ունենար երկու տարբեր իրարու մօտեցնելու : Մերձեցում որ Հայաստանի մէջ շատ աւելի դիւրին է , որովհետեւ դիւղական ժողովուրդը , թէ՛ հումանման ծագմանը , թէ՛ ւստարապէս կըրուած թշուառութեան պատճառով , միեւնոյն պէտքերը ունի , հետեւաբար միեւնոյն բաղձանքները :

Ասկից զատ , կայսերական զորագունդերու հրամանատարները , հանրային ապահովութեան վերաբերեալ ամէն տեսակ խնդիրներու համար , պէտք է որ հնազանդէին Ընդհանուր կառավարչին եւ ոստիկանական մարմնոյն օգնէին իր գործը ի գլուխ հանելու :

Նիւթական ապահովութիւնը այսպէս հաստատելէն յետոյ , հարկաւոր պիտի ըլլար զբաղիլ գործաւնութեանց ապահովութեամբ , պաշտօնեաներու եւ ժողովրդին մէջեւ յարաբերութեանց ապահովութեամբ , այսինքն Արդարութեան կազմակերպութեամբ : Արդարութեան , առանց զատարանական կազմակերպութեան , գործաւնութեանց համար ապահովութիւն չկայ՝ պաշտօնեաներուն սովորութեանց եւ գործելու կտրուկ եղանակներուն դէմ , հետեւաբար երաշխաւորութիւն չկայ բարենորոգմանց եւ բարեօրմանց տեւականութեան եւ լրջութեան համար : Դատերը կը տեսնուին այժմ՝ վարչական Մեծլիաներուն կողմէ՛ որոնց անդամները , հարկահաւաքներ կամ ատոր նման մարդեր են , վարչութեան գործերուն ուղղակի կամ անուղղակի կերպով խառնուած , եւ ատկից զատ , Դատավարութեան Օրինազրքին եւ օրէնքներուն նախնական տարրերն անգամ հասկանալու անկարող . այս կերպով , այդ Օրինագիրքը իրենց ձեռքը գործիք մը կը դառնայ օրինական կամայականութեան , որ կը կիրարկուի ժողովրդի մը վրայ որ անոնցմէ աւելի անկարող է զայն հասկանալու :

Շատ փափուկ գործ մը պիտի ըլլար որոշել առաջուց թէ ի՛նչ բնութիւն պէտք է ունենայ զատարանական կազմակերպութիւնը զոր պատշաճ է հաստատել ժողովրդին քաղաքային եւ առեւտրական յարաբերութիւնները կանոնաւորելու համար : Այդ կազմակերպութիւնը որչափ ապահովութեամբ պաշարուի՝ քիչ է , վասն զի ան է բովանդակ վարչութեան կանոնաւորիչը : Բայց ինչ որ առաջուց կարելի է հաստատել , այն է որ հիմնուելիք զատարանները պէտք չէ որ հիմակուան մեծլիաներուն պէս վարչութեան գործերուն մէջ ոչ մէկ կերպով մասնակցութիւն ունենան : Ընդհանուր կառավարիչը պէտք է որ ուսումնասիրէ խնդիրը եւ զայն ուսումնասիրութեանը յանձնէ ձեռնհաս անձերու յանձնաժողովի մը եւ այդ ուսումնասիրութեանց արդիւնքը ներկայացնէ անոր գործադրութիւնը հրամանագրելու պաշ-

տօն ունեցող իշխանութեանց : Այս կերպով , կարելի է վստահ ըլլալ թէ արդարութեան կազմակերպութիւնը պիտի համապատասխանէ , որչափ որ հնարաւոր է , երկրին մտաւորական ու ընկերական վիճակին : Որովհետեւ Արդարութիւնը պիտի ծառայէ իբր վարչութեան սանձիչ ու վերաստուգիչ , Ռուսումնասիրութեանց Յանձնաժողովը պիտի որոշէ զատարանական իշխանութեան ձեռնհասութեան սահմանները եւ սա կէտը մանաւանդ թէ դատարանները ո՛ր աստիճան կարողութիւն պիտի ունենան զատելու պաշտօնեանները՝ իրենց պաշտօնավարութեանց մէջ գործած զեղծումներուն համար :

Ընդհանուր կառավարիչը պէտք է որ արտօնութիւն ունենայ օտարազգի տարրը իրեն օգնութեան կանչելու Արդարութեան կազմակերպութեան այդ ա՛յնքան էական գործին մէջ . ինքը պիտի որոշէ թէ ի՛նչ չափով պիտի ընէ այդ բանը : Հայերը կը մտածեն որ եթէ այդ տարրը՝ որ է նկարագրի անկախութիւն եւ գիտութիւն , մանկ , ո եւ է չափով , Բարձրագոյն Ատեանի մը կազմաւորութեան մէջ , երկրին ընկերական վիճակը չի հակառակ իր զատարաններուն ձեռնհասութիւնը տարածուի պաշտօնեաներուն վրայ՝ առանց գործած զեղծումներուն համար , եւ թէ ընդհակառակն ատով այդ ընկերական վիճակը պիտի զարգանայ այս վերաստուգմամբ :

Ասկից զատ կը մտածեն թէ բարենորոգմանց լուրջ իրագործումը այդ ընդարձակուած Արդարութեան մէջ պիտի գտնէ իր ճշմարիտ հիմն ու նեցուկը :

Անգամ մը որ ժողովրդին ապահովութիւնը երաշխաւորուի Պահակագօրքի (gendarmarie) եւ Արդարութեան կազմակերպութեամբ , ուշադրութիւնը կը դառնայ ուրիշ շարքի մը վրայ զոր Արեւելքը ճանչցող ամէն մարդ մասնանիչ ըրած է արդէն , այն է կալուածական տուրքին ձեւը , տասանորդը , եւ տասանորդ հաւաքելու եղանակը , անհրաժեշտ է որ այդ տասանորդը փոխուի հողին տարածութեան եւ որակութեան համեմատութեամբ վերցուած տուրքի մը : 26 տարուան մէջ , Պոմպէի նահանգին երգործական հարստութիւնը կրկինէն աւելի աճեցաւ , տասանորդին շնորհիւ (հողատուրք) փոխուելու պատճառով : Իրաւ է որ Հայաստանը կալուածատուր (cadastre) չունի . բայց կարելի է կալուածատուրի պակասը ո եւ է կերպով լրացնել , ինչպէս որ ըրին Հնդկաստանի կամ ուրիշ երկիրներու մէջ ուր այդ այլափոխումը տեղի ունեցած է :

Այս երեք բարենորոգումները , եթէ լրջօրէն ձեռնարկուին եւ գործադրուին , կը բաւեն երկիրը զարգացնելու , զայն կերպարանափոխելու , բայց անոնց գործադրութիւնն ու կանոնաւոր ընթացքը ապահովելու համար , Ընդհանուր կառավարիչը պէտք եղած նիւթական միջոցները ունենալու է :

Հայերը, ինչպէս արդէն ըսուեցաւ, աչք չունին ոչ քաղաքական անկախութեան մը, ոչ օսմանեան պետութենէն ո եւ է բաժանման . իրենց նպատակը բոլորովին հակառակն է : Յաւակնութիւնը չունին որ իրենց երկրին հասոյթները իրենց ուզածին պէս եւ միմիայն իրենց պէտքերուն համար գործածուին : Իրենց համար ուրիշ բան չեն ինդրեր եթէ ոչ իրաւունք ունենալ իրենք իրենցմէ տուրք ժողովելու՝ ընդհանուր տուրքերը կայսերական գանձուն յատկացնելէ յետոյ, որպէս զի այդ կերպով մասնաւոր հասոյթներ ստեղծեն նա հանգին մասնաւոր ծախքերուն համար, ինչպէս են Պահակաբօքի, Արդարութեան, ամէն ազգի դպրոցներու եւ կրօնական հաստատութեանց . Հանրօգուտ շինութեանց, եւն :

Մէկ կողմէ, Հայերը կը կարծեն թէ իրենց մասնաւոր եւ տեղական պէտքերուն համար իրենք իրենցմէ տուրք հաւաքելու այս իրաւունքը պիտի օգնէ հրամանագրուած բարենորոգմանց ու բարեօրմանց իրագործման, որովհետեւ պիտի ապահովէ ծախքը Վարչութեան զանազան պաշտօնէութեանց որոնք պիտի կուտան այդ բարենորոգումները գործադրելու եւ անոնց կիրարկմանց վրայ հսկելու . այդպէսով այդ պաշտօնէութեանց վճարումները պիտի կախում չունենան ո եւ է իշխանութենէ որ կրնայ տեղական պէտքերուն եւ բարենորոգմանց իրագործման համար անոնց չափ հոգածութիւն ու շահագրգռութիւն չունենալ : Միւս կողմէ, Կայսերական կառավարութեան շահը Ն . Կ . Վեհափառութեան հպատակներուն շահերուն ամբողջութեանը հետ համանմանըլլալով, Կայսերական կառավարութիւնը իմաստուն վարչութեան մը սկզբունքներուն համաձայն պիտի գտնէ որ երկրէն հաւաքէ միայն այն տուրքերը որոնք հարկաւոր են պետութեան ընդհանուր ծախքերուն համար, եւ տեղական վարչութեանը թողու մասնաւոր ու տեղական պէտքերուն համար բաւականչափ հասոյթներ :


Իր սեպհական վարչութեանը ծախքերուն յատկացեալ այդ հասոյթները գանձելու համար նահանգին կողմէ ձեռք առնուելիք եղանակը հետեւեալ կերպով կրնար կարգադրուիլ . Ընդհանուր Կառավարիչը, եւ անոր հրամաններուն համեմատ, այլ եւ այլ գաւառակներու կառավարիչները, իրաւունք կ'ունենան, իւրաքանչիւր գաւառակի գլխաւոր քաղաքին մէջ՝ տեղին երեւելիներէն բաղկացեալ ժողով մը գումարել : Այդ զանազան ժողովներուն կազմաւորման ձեւը այժմէն պէտք չէ որ որոշուի . սկիզբները, Ընդհանուր Կառավարիչը եւ գաւառակներու կառավարիչները իրենք իսկ պիտի ընտրեն անգամները՝ այդ երեւելիներուն ու ամենէն աւելի վստահութիւն ներշնչող անձերուն մէջէն . ընդհանուր ժողովը որ պիտի գումարուէր նահանգային գլխաւոր քաղաքին մէջ, պիտի բաղկանար պատգամաւորներէ զոր պիտի անուանէին գաւառակներու ժողովները :

Այդ ժողովները կամ մասնաւոր այդ ընդհանուր ժողովը միակ իշխանութիւն մը պիտի ունենար, այն է այլ եւ այլ պաշտօնէութեանց ծախքերուն համար պէտք եղած տուրքերը սահմանել : Այդ ժողովները կամ խորհուրդները ոչ մէկ կերպով պիտի չմիջամտեն ոչ Արդարութեան վարչութեան, ոչ նոյնիսկ Վարչութեան մէջ : Ապագային . փորձառութիւնը եւ երկրին ընկերական վիճակին զարգացումը պիտի նշանակեն վերջնական եղանակ մը այդ խորհուրդներու անգամներուն ընտրութեան եւ անոնց շնորհուելիք իշխանութեանց ընդարձակմանը համար : Բայց մեզ այնպէս կը թուի թէ սկիզբները, որպէս զի շիտթութիւն յառաջ չգայ, ինչ որ անխուսափելի է, ժողովրդի մը մէջ որ իր սեպհական շահերը վարելու գործին բոլորովին օտար մնացած է, անոնց իշխանութեան սահմանաւորումը խոհեմ եւ քմաստուն բան մըն է :

Հայաստանի նահանգին կազմակերպութիւնը, այսպէս իր ընդհանուր գծերով պատկերացուած, կիրող է բարորութիւնը ապահովել նահանգին բոլոր բնակիչներուն, մահմետական թէ քրիստոնէայ, ասկէնքն ալ հպատակ Ն . Կ . Վեհափառութեան, ամենքն ալ վարչութեան մը մէջ հաւասարապէս շահ ունեցող : Այս կազմակերպութեան նպատակն է ամենուն բարորութիւնը ապահովել . հետեւաբար, մահմետական եւ քրիստոնէայ հասարակութիւններուն թուոյ փոխադարձ համեմատութիւնը երկրորդական կարեւորութիւն մը կը ստանայ : Ոչինչ պիտի փոխուի քաղաքական կացութեան մէջ . միայն վարչութեան մէջ նոր պաշտօնեաներ պիտի գրուին, որոնք, մէկ քանի հաստատութեանց ու մասնաւոր Արդարութեան կազմակերպութեան շնորհիւ պահպանուած, պաշտօն պիտի ունենան գործադրել այն բարենորոգումները զոր Ն . Վեհափառութիւնը հրամանագրել պիտի բարեհաճի, եւ չթողուլ որ անոնք մեռեալ տառի ձեւին մէջ մնան, ինչպէս մինչեւ ցարդ խոստացուած բոլոր բարենորոգումները : (\*)

ՆՈՒՊԱՐ ՓՍԾԱ

Բարիկ . 1878



(\*) Այս ծրագրի սկզբներէն քարգնեսնուրիւնը նրասարակուած է Լոնսոնի Նայնթիւթի սենթիւրի անասերքի 1878 Տարուան սեպտեմբերի րուոյն մեջ :

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

Նըշմարեցի ժամանակը, գունաթափ ալեւոր,  
 Նըստած քարի մը վըրայ՝ կը խոճոճէր ալընկոր,  
 Խորշոմալից կերպարանքն արծաթեանց կ'երեւար,  
 Անոր բոլոր կը ծրփար շողատեսիլ լուրթ խաւար:  
 Ու անապատ էր այդտեղ, չէին ծըլեր խոտ եւ սէզ,  
 Կը տեսնայի միմիայն դեղին գետին եւ երեզ:  
 Երկրիս վըրայ կը նիւրհէր մահաքուն թաւ հովանի,  
 Խաղաղութիւնն անաւոր էր հոտ եւ ոչ ընտանի:  
 Քամի մը բուռն կը փըչէր, եւ ընդարձակ ամային,  
 Եւ խորխուլեալ անհամար սորերը ձայն կուտային:

Եւ ծերունին՝ թարթափներն ալապատրի պէս ձիւնեղ  
 Փակ կը բըռնէր, անշըշունչ, մարդոց նըման բազմամեղ:  
 Երկու կըծիկ կը գլորէր գողէն մինչեւ ի գետին.  
 Մին արծաթի պէս փայլուն եւ միւսը թուխ ու մըթին.  
 Երբ կը փաթթէր ան ձեռացը վըրայ թել ըսպիտակ՝  
 Կը լուսանար հեռաւոր անհուն ոլորտքն երկնից տակ.  
 Եւ երբ սեւ թել կը փաթթէր՝ կուտար գիշերն ան ինձի:

Եւ կը հընչէր գոռ քամին ինչպէս անօթ պըղընձի,  
 Կը զօղանջէր համօրէն աշխարհ—բարբառ անքընին:

Եւ սոսկացի որ այնչափ արագ դաժան ծերունին  
 Կը դարձընէր այդ թելերը, խելամուտ եղայ ես  
 Թէաւասիկ իմ օրերս ան կը կարճէր փութապէս:  
 Եւ վազեցի զանոնք չոր ձեռուընեղէն խըլելու.  
 Բայց ինձի պիչ նայեցաւ եւ կանգ առի ես հըլու:

Մըրբկաւէտ լըսեցի մորնչիւն. Անմի՛տ պատանի,  
 Ի՞նչ անխորհուրդ երկիւղ զքեզ այսպէս կ'անու կը տանի.  
 Դու կ'երկընչի՞ս անձանօթ եւ գաղտնալից միջոցէն,  
 Երկբայութեան ալիքներն արդեօք ըզքեզ կը կոծեն:

Բայց այժմ ի՞նչ կը տեսնաս որ քեզ չըլլայ անձանօթ,  
 Ի՞նչ կը տեսնաս ստուգալից եւ քըննութեան անկարօտ.  
 Խաբէութիւն են հաւատք ու կասկած, վիշտ ու խընդում,  
 Անմեկնելի է անուրջ՝ կեանքըդ, զըւարթ կամ տըրտում:  
 Թո՛ղ դու հիւսեմ, պատանի, քեզ վաղանցուկ աւուր թել.  
 Ոչ երկարել զայն ջանս եւ ո՛չ ջանս կարճատել:

Ալեւորին խօսքերէն հոգիս կըրկին զօրացաւ.  
 Ա՛լ քալեցի անդանդաղ եւ խոնջ, անյոյս եւ անցաւ.  
 Երկար ատեն քալեցի գետնին վըրայ քարաշատ,  
 Մերթ լոյս կ'ըլլար եւ մերթ մութ. միա՛յն էի եւ չընչաւ:  
 Եղանակներն առջեւէս կը վազէին դաս առ դաս:  
 Եւ կը հընչէր գոռ քամին, կը բարբառէր հանապաղ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եգիպտոս . . . Աղեքսանդրիան՝ նաւահանգիստ մը, սեւ ցեխոտ փողոցներու մէջ դիզուած վաճառքներ, ցած սայլեր, ճերմակ էշեր, աղտոտ իշապաններ . անդին՝ Գահիրէն արեւէ տապկած քաղաք մը չոր, քառակուսի սպիտակ շէնքեր, ցած տուներ, կոյր ֆէլլաններ, ու հեռուն՝ երկու երեք եռանկլունածեւ բուրդերու քով երկայնացիցարմաւենիմը . անանկարը որով Եգիպտոսը կ'երեւակայէի զայն չայցելած :

Ո՛րքան կը սխալէի : Այսօր Եգիպտոսը Եւրոպա դարձած է . մաքուր լայն փողոցներ որոնց վրայ առանց կաղալու կրնաս քալել, հոյակապ ու նրբաճաշակ շէնքեր, հանրակառուքեր, ելեքարական կառուղիներու քաղաքավար բնակիչներ . եթէ տունէդ դուրս ելլաս, աղտոտ կզկուած շուներու չես հանդիպիր . մաքուր հագուստով, փայլուն կոճակներով զինուորներ ու ոստիկաններ կը տեսնաս, հանդիպած դէմքերդ լիբը ամբարտաւան կամ վախկոտ աշուրներով քեզի չեն նայիր . քֆրանք ու հահոյանք ականջիդ չեն զարներ . եւ սակայն հոս ալ մարդիկ ֆէս կը կրեն . ու կ'ապշխ թրքի լուծէն զեռ նոր ազատած այս երկրին մէջ քաղաքակրթութեան այս արագ տիրակեցողութիւնը տեսնելով . կ'ապշխ ու սիրտդ կը ճմլուի տխուր խորհրդածութեանց ներքեւ, ու հառաչներ ուռած կրծքէդ դուրս կը ժայթքին յիշելով երկիրդ . կը զգաս թէ անէծքի երկիր մըն է ան ու աչքդ կը թրջի ինչու որ անիծեալ ըլլալով հանգրձ կը սիրես զայն . . .

Սորհրդաւոր ու պաշտելի աշխարհ, այս հին Փարաոններու, մոմիացած Ռամսէսներու մեծաշուք հայրենիքը, որ այսօր նոր քաղաքակրթութեամբ մը կը վերածնի, բայց իր յատուկ տիպարը կը պահէ միշտ ի շնորհս տեղացի Արաբներուն :

Աղեքսանդրիայէն Գահիրէ երկաթուղին արագօրէն գիմացդ կը պարզէ իսկատիպ բնութեան մը գեղանկարը ու աչքդ կը յանկուցանէ : Բնութեան մէջ Արաբը կը գտնաս եւ Արաբին մէջ կը նշմարես՝ բնութիւնը իր գոյններով ու պատկերներով : Իր արմաւենիներուն պէս Արաբացին ալ բարձրահասակ ու ոսկրոտ է . իր արեւէն տոչորած մորթովը չոր ու նիհար ու բարակ, նման է երկրին ծառերուն սրունք պըր-

կուած ու մկանուտ՝ կը բուսնին հոս հոն փնջեր կապելով . հողին գոյնը, սեւի մօտ գորշ, իրենին պէս է, ու կը խորհիս թէ իրօք այն հարազատը անկէց ելած բուսած է : Աջ ու ձախ աւաններ իրարու կը յաջորդեն եւ տափակ երկրին վրայ հազիւ թէ թիզ մը բարձր կը թռչին քեզ՝ ա՛յնքան ցած են եւ կը խառնուին հողին հետ որմով շինուած են : Ասանկ հարթ հաւասար յաւիտեան կ'երկննայ դաշտանկարը, ուր ստէպ կը ցոլան Նեղոսի առուացած ջրերը, եւ շատ միօրինակ եւ ձանձրաւալի պիտի թուէր ան եթէ երկայնածիզ արմաւենիներ շարքով, հոս հոն, իրենց շնորհալի ուրուագիծը չցցէին հորիզոնը կտրելով, եւ անոնց երկայն երկայն ոտներն ու տերեւները թեթեւ քամիէն շարժելով, ծփուն ու լայն օրօրմամբ, Արաբուհիներու շնորհալի շարժումները, անոնց փէշերուն ու ծալքերուն ծածանումը կը յիշեցնեն : Ուր նայիս, ուր երթաս, ուր որ դառնաս, արմաւենի միշտ դիմացդ կը գտնաս եւ ան միշտ միտքդ կը գրաւէ, կը ստիպէ որ վրան խորհիս—սրբազան ծառն է որ բարձրէն իր օրհնէնքը կը սփռէ երկրին վրայ—եթէ արաբացի մը ծնած ըլլա՛յի, անոր հասակին հմայուած, անզգայ՝ սյրոյ առեգակին կիզումին նայելով, միայն անոր սաղարգոտ կատարին որ բացուած հովանաբի նման կ'օրօրուի նայելի շարժումներով, հոգիս ու մարմինս պիտի զովանային :

Ձմեռուան եղանակին մէջ Գահիրէն . . . գահ մը դրախտի՝ ուր աշխարհիս չորս կողմէն կը վազեն կը թափին անոնք որ արեւի պէտք ունին, —նոր արեւապաշտները :

Ստէպ ման կուգամ քաղաքին շրջակայքը ուր աշուրներս միշտ կը հետեւին արաբուհի աղջիկներու որոնք բոպիկ, սեւ ծուէններու, պատառատուն լաթերու մէջէն, սիրուն հրաշակերտներ, քանդակուելու արժանի փոքրիկ տղեր կը շարժեն, յտակ գիծելով, ճեղքուած ու ազատ բուսած մասիկներով, կելորիկ կրունկով որուն վրայ, մետաղէ օղակին մէջէն, բարակ պճեղը կ'երկննայ կը կորսուի փէշերուն մէջ . . . Ա՛խ այն յափշտակիչ ու սիրագրգիռ արաբ աղջկանց խմբերը, նազելի քալուածքներնուն ճօճումը, շնորհածալ երկայն պատմութեաններուն ուրուագիծը ծալքերու եթերային ծփումով . . . այն խմբանրկարը գլուխներու որոնց վրայ ծրար մը, սափոր մը, կողով մը կամ որ եւ իցէ առարկայ մը գրած են զոր ստէպ ձեռքովին կը բռնեն, երե-

ւան հանելով լայն թեզանիքէն գուրս ելլող նուրբ ու մտտ թեւեր:

Զմայլեցայ անոնց վրայ ու երազներ հիւսեցի դիտելով անոնց բարակ ձկուն իրանին սիրուն օրօրումը, արբշիռ աչօք վայելեցի անոնց հարուստ ու սերտ լանջերը որոնք ցըցուած պինդ կը հրեն թուխ կտաւը. ահա Եզրիպտոսի է՛ն ազնիւ ու թարմ պտուղները...

Իրիկուն մը, արեգակը նոր մարը մտած էր ու մտածեցի երթալ լուսնի լուսով տեսնել բուրբերն ու Սփինքսը զորոնք արդէն ցերեկով տեսած էի. ցառքեցի հեծելանուխ վրայ եւ ինկայ ճամբայ միս մինակս. Գասր-էլ-Նիլ կամուրջէն անցնելով վայելեցի Նեղոսի աննըման հոյակապ գեղանկարը՝ ողողուած կրակի գոյն չէկ երանգներով. կը հոսէր Նեղոսը ծանրաշարժ ձերուների պատկանելի զընացքով, իսկ վրան բիւր ու հազար փոքր եւ մեծ նաւակներ կ'երթեւեկէին՝ երկայն սրածեւ ձերմակ առաջատներ պարզած որոնք ահագին սպիտակ ծիծեռներու թեւերուն թրւիչքը ունէին: Կ'երկննար սուրբ գետը չորս դին լուսթիւն սփռելով, եւ բնութիւնը իրօք կ'ամփոփուէր կը լոէր՝ գոգցես խոկալու համար լոյսին փախուստէն առաջ. ճիշտ այն պահն էր ուր ամենայն ինչ ստուերներով կը պատի. Նեղոսի երկայնքը արմաւենիների կարգով կը շարուին նուրբ ու երկայն հասակներն գէպ ի վեր ցցած, եւ հեռաւոր մէջին չղարչին ներքեւ իրենց շնորհալի բուներուն զիծերը աւելի կը վախճան. իսկ կատարներն տերեւներու փնջերը կ'այլակերպին, մա՞ղ թէ փետուր. երբեք տերեւ չես բեր. այս փնջերը հորիզոնին վրայ հոս հոն կը աւապուին եւ իրենց տնշարժութեան մէջ կարծես շարք մը սարդեր ըլլան ուր մթակապոյտ անամպ երկնից վրայ աներեւոյթ ոստաններ հիւսած են. խորհրդաւոր ու անշարժ կը սպասեն օգային այն ահագին մամուկները որոնցէ ծիծեռնակը խոյս կուտայ...

Ես յոփշտակուած, կանգ առած մնացի. ժամը կ'անցնէր: Գիշերը տիրապետեց ամենուրեք. արդէն բարձր է լուսինը. Նեղոսի արծաթակերտ ժապաւէնը հեռուները օձապտոյտ կը ծաւալի: Ես կը հետեւիմ անոր՝ հեծելանուխ վրայ սուբալով, թռչունի պէս օդերը ճեղքելով, իլաւցնէ վերացեալ: Սակայն հոս ճամբան կը դառնայ, ակամայ կը հեռանամ այս սքանչելիքէն ու կը մտնամ ծառուղւոյ մը մէջ որ մինչեւ բուրգերը մղոններով

կ'երկննայ. խոչոր ծառեր, տերեւախիտ ու սաղարդահարուստ, ուրկից լուսինը կարող չէ թափանցել: Չորս դիս մթնցաւ, հեծելանուխ գնացքը ծանրացուցի, ստուերներու անվստահ յատակի մը վրայէն գոգցես անիւները կը հոլովին: Աջ ու ձախ, ծառոց կոճղերու մէջէն երբեմն դաշտանկարը կը պարզուի ջինջ ու յստակ. լուսնին սպիտակ լոյսին ներքեւ, աւաններ ու գիւղեր, խրճիթներ ցած քառակուսի, լուռ ու մթին կը ննջեն. հազիւ երբեմն շան հաչիւն մը:

Ծառուղին տակաւին կը տեւէ, մղոններ արդէն կարած եմ. կը զգամ որ վերջնակէտին մօտ եմ եւ ահա, քովնոյ՛ ծառերուն մէջէն՝ ձախ կողմը բուրգերը երեւցան, մէկ, երկու, երեք... կարծես կուզերու կարաւան մը լուսնի լուսով որ երթալով փոքրանալով կը հեռանան անապատին մէջ... անոնց մօտ, գրեթէ ոտքերուն տակը, ահա Գաֆր գիւղը քառակուսի գորշ ու սպիտակ ցած շէնքերով. գիւթիչ սիրուն նկար մըն է ան. անոր զիմացը Նեղոսի մէկ ջրանցքէն եկած ջրեր լճացած կը ծաւալին. հոն ամենայն ինչ կը նիրհէ. հեռուէն լուսնի լոյսին ներքեւ՝ խոկմանց աշխարհ մը, ոգիներու բնակութիւն մը գոգցես այդ ջրակոյտը... սիրտս տրտմեցաւ, մաւ հուան երգեր, ախուր եղանակներ, ցաւագին օրօրներ երգելու տենչանք մը դիս կը մարմաջէր: Ա՛խ այդ ջրերուն գաղտնիքը, շարժուն մթութեանց, հեղուկ ստուերներուն սեւ փայլուն ցոլքերը... Այդ ջրակոյտը խորհուրդներու մեռելատունն է. յատակը, ազլամուղջ ու սեւ դիակներ, որոնց ոգիները՝ մակերեսը ելած՝ սահուն նուազկոտ ալիճքիմամբ լռին կը ցոլան:

Սարսուռներ ունեցայ. վերջապէս ծառուղին կ'աւարտի, անկից գուրս կը նետուիմ, չորս կողմս լոյսով ողողուած, հեծելանուխ կը քշեմ: Շուռնչս բուրգերուն մօտ առի: Քանի մը քայլ անդին չուք մը գետնէն բարձրացաւ, անոր ետեւէն չորս հինգ չուքեր ծնան կանգնեցան ու հետզհետէ չուքերու ամբոխ մը շուրջս առաւ: Սպիտակ ու սեւ թիկնոցներու մէջ փաթթուած Արաբացիներ են, ու որնք բուրգերուն եւ հին աւերակաց մօտ կիկերոնութեամբ կ'ապրին: Հեծելանուխ անոնց շէյխին յանձնեցի, ու զարմացմամբ, գրեթէ երազի մէջ, այն ստուերներու ամբոխը դիտեցի. իրականութիւնը անըջական տեսիլ մը թուեցաւ ինձ, զարբերու վրայէն անցայ, ա-

նոնց խորհորդները խզուեցան ու հեռաւոր անցեալ մը դէմս ներկայացաւ . ա՛լ իմ եսս կորսնցուցի , ուրիշ մըն եմ . . .

«Խը՛ խխ» եւ ուղտ մը դիմացս ծնրադրեց , երկայն վերարկուներհագած լայն թեզանիքով Արաբներ մօտեցան ինծի ու զիս թիկունքէս , թեւերէս լոննելով օդնեցին ու անոր վրայ խնամօք նստեցուցին , յանկարծ օդերուն մէջ բարձրացայ դահի մը վրայ : Լուսթեամբ կ'երթայինք աւազին վրայէն ուր շուքերնիս կ'երկննար . ուղտիս ծանրաքայլ շարժումներուն հետ օրօրուելով վեհափառ կը յառաջանայի , իսկ անոնք լայնածալ երկայն պատմութեաններնուն մէջ , գողցես մոզեր՝ աչուքնին սեւեռած փայլուն աստղին վրայ , կ'առաջնորդէին ինծի :

Ասանկ , օրօրուելով , տատանելով , մտմտալով , անցայ հին աւերակներու մէջէն , որոնք աւելի կը ստուերանային բուրգերուն շուքին ներքեւ :

Ահա՛ Սփինքը . . . գլխուն վրայ , երկինքը , փայլիլուն աստղ մը կարկաչներով կը ցուլայ : Ճակատ առ ճակատ ճիշտ դիմացը ուղտս կեցուցի : Ամփոփուած՝ գահիս բարձունքէն դիտեցի զայն . կենացս ամենավեհ գիշերն էր . . . թաթերը երկնցուցած առիւծածեւ նստած էր անիկա գլուխը բարձր . դէմքը՝ պատկառելի վսեմութեամբ լի , խաղաղ հզօր արտայայտութիւն մը ունի . դարերէ ի վեր խոկմանց մէջ կը թուի ան , ու նայուածքը՝ անցեալին պաղանիքներովը լեցուն՝ իրեն նայողին հոգւոյն վրայ կը ճնշէ . իրօք խորհուրդներու աստուածն է ան :

Յանկարծ , ինքզինքս չնչին ու փոքր զգացի , ինծի թուեցաւ թէ լուսնի լոյսին տակ ան սկսած էր հեզնական ժպիտով ինծի նայիլ . լուսնին զարձայ նայեցայ , ան ալ հեզնածիծաղ կը ժպտէր : Այլ եւս ուղտէս վար իջայ :

Ո՛վ Սփինքս , մեծ ես դուն , հզօր ու հոյակապ . . .

Եւ անոր դիմացը հողիս ինքնայօժար խոնարհեցաւ :

Ահա դէմս անապատը , որուն տեսքը գիշերով վայելելու համար՝ բարձրացայ հեռուն աւազակոյտի մը վրայ : Ինքզինքէս դուրս ելած՝ անոր մթին հեռաւորութիւնները լափեցի . հողիս անոր հոգւոյն հետ միացաւ , խառնուեցաւ ու լայնցաւ :

Սպիտակ վերարկուին մէջ փաթթուած ձիաւոր մը լուսնի լոյսին տակ , ծփուն , փէշերը

հովին , միջոցը քառատրոփ կտրեց անցաւ : Հեւալով հետեւեցայ անոր աչքովս , մինչեւ որ իր թոթոուն ստուերապիծը բազէի թոփշքով միահարթ խորութեանց մէջ անհետացաւ : Աստեղաց քթթումներուն ներքեւ , շրթներս դողդջուն , յուզեալ կը մնայի : Պահ մը անցաւ , ու հեռուն , շնագայլերուն լալազին երկայն ոռնումները գիշերային միջոցները հընչեցուցին :

ՄԻՐ-ԵՐՕ

Գահերէ

ՊԱՏՄԻՐ ԱՍՏԸՄՈՒՆ



Մըշարո՛ւռ յուսին , որ հաւքերսսսսս  
Լքում ես ամեն բըշուտի ձայնին ,  
Լքսի՛ր նստ ինձ , ես էլ եմ բըշուտ  
Ճակասագրոյ—որդի եմ Հային :

Երբ շըջան կ'առնես իմ հայրենիքով ,  
Աւերակներում , մոխիրներու մեջ  
Անեւ որ անունն նիրհոյ փոյե փոյ  
Որք եղբայրներիս հաւքուրի՛ր ինձնից :

Մեղձ օրօր երգիւր սիրասուններուս ,  
Անո՛ւշ զըրուցներ պսսսիւր ինք իրում .  
Ա՛խ նոցա բըշուտ վիճակը ակոյս ,  
Երբ կա՛յ Աստուած , պսսսի՛ր Ասըժուան :

ԵԿԷ՛Ք ԵՂԲԱՅՐՆԵՐ

Անօթի եիփ ու եղսփ շա՛ս շայ ,  
Բայց բաղդը ծաղրեց ձեր արցունքն ազդու .  
Եկի՛՛ք , եղբայրներ՝ բաղդից հարստում ,  
Արրսիս հակզրստեան հոյժում նիրհեղու :

Ա՛խ դոս մերկ եիփ , ծարս ու յոզնա՛ծ .  
Բա՛ղդ , բա՛ղդ գոչեցիփ , ես փախաւ հետու .  
Եկի՛՛ք եղբայրներ՝ բաղդից լոռցրում ,  
Արրսիս հակզրստեան հոյժում հակզեղու :



ՄԱՅՐԵՐԸ ԵՆ ԽՈՍՈՒՄ . . .

Մայրերն են խօսում արեան ծովերից ,  
Պղտոր արցունքի երգերով ազդու ,  
Բե՛զ հեճ , ո՛վ Ասուած . անհասոյց վերից  
Ձե՛ս շքում արդեօք կըսկիծը մարդու . . .

Մայրե՛րն են խօսում արեա՛ն ծովերից :  
Ա.Ր.Ա.Մ ՉԱՐԸԳ

Լայպցիգ



ՄՈՍԱՊ ԼԵՍԻՄ

Բարից 20 փետր . 1899

Վերգելիոսը կարգացած էք . . . Մշակա-  
կանը մանաւանդ :

Կարծեմ սապէս կը սկսի՝ «Վա՛շ երջա-  
նիկ մշակաց , գերեանց նսի՛ն թէ գիտիցեն» :  
Եթէ այսպէս ալ չէ ասոր մօտ բան մըն է :

Բարից , Թէաթր Տրամսէի հրապարակին  
վրայ , ցուցափեղկի մը մէջ տեսայ մանրա-  
գիտական հաւնոց մը , բոլորտիքը քիչ մը ա-  
ւազ ցանուած եւ ութը տասը վառեակ որոնք  
աւազին մէջ նետուած հատիկներ կը կտցէին :  
Անցնող դարձող բազմութեան հետզհետէ  
կ'անջատուէին խարտեաչ գործաւորուհիներ ,  
նրբահասակ , աղուոր կիներ , որոնք հետա-  
քըքըքի ու հմայուած աչքով կը կենային ցու-  
ցափեղկին առջեւ եւ կը գիտէին այդ կեն-  
դանի գիւղանկարը : Ելեքարական լոյսին  
տակ , ցոլացիկ ապակիին մէջ , իրաւ այդ  
վառեակները շատ սիրուն կ'երեւային : Ես ալ  
պահ մը կանգ առի եւ հաճութեամբ դիտեցի  
այդ տեսարանը , մինչդեռ շուրջս կեցող կի-  
ներու մազերուն զգլխիչ հոտը սուսգո ի վեր  
կ'ելլէր :

—Ա՛հ , ի՛նչ սիրուն , ի՛նչ գեղեցիկ են , կը  
մտմային կիները իրարու , գրեթէ յուզուած :

Գուցէ իրենց երեսակայութեան մէջ այդ  
քանի մը վառեակները ամբողջ գիւղ մը կը  
պատկերացնէին : Արեւը որ լերան ետեւէն  
մարը կը մանէ , հովիւը երկայն ցուպով ,  
սրինգը մէջքէն կախած , որ լեռնէն կ'իջնայ  
ոչխարներովը , աղուոր աղջիկ մը որ կաթ  
կը կթէ , ցորենի հասկեր , պտուղներով

բեռնաւորուած ծառեր , մարգագիտին , ծաղիկ-  
ներ , պզտիկ առուակ մը , պարարտ կովեր ,  
խումբ մը աղջիկ որոնք կը պարեն , խումբ  
մը պատանի որոնք կը նուագեն եւ խումբ մը  
գեղացի որոնք դինի կը խմեն :

Ու յիշեցի Մշակականը որուն մէջ շինական  
կեանքին հեշտանքները կ'երգէ Վերգելիոս :

Ուրիշ անգամ մըն ալ յիշած էի Վերգելիոսը ,  
Եգիպտոսի մէկ անկիւնը , ագարակի մը մէջ ,  
ուր պիտի անցընէի երկու տարի :

Իրա՛ւ , «Վա՛շ երջանիկ մշակաց» երբ ցու-  
ցափեղկէն կը նայինք իրենց :

Ես ճանչցայ այդ գերերջանիկներէն շատեր  
որոնց մէջ երջանկագոյններէն էր անշուշտ  
Ապու Խամիսի ֆէլլահը :

Տնակիս մօտիկ , չորս մէթր քառակուսի  
հողի վրայ կանգնած էր իր հիւղակը , մէկ  
օրուան մէջ , Նեղոսի տիղմով ու չոր պրտու-  
ներով : Երկու կին , հինգ զաւակ , շունմը ,  
երկու եզ , էշ մը , քանի մը հաւ ու աքա-  
ղազ մը ունէր երանելի Ապու Խամիսին : Մե՛զք  
որ Մշակական չէր կարգացած ու իր երջան-  
կութեան գիտակցութիւնը չունէր , «Ձիւ-  
րեանց նսի՛ն թէ գիտիցեն» :

Ապու Խամիսի , ամէն օր մութին կ'ելլէր  
իրեններովը , երբ դեռ դաշտը ծածկուած էր  
խոնաւ ու թանձր մշուշով : «Ալլա՛հ» մը կ'ար-  
ձակէր սրտին խորէն , ալօ՞թք թէ հայտո-  
յանք , ա՛լ Աստուած գիտէ , եւ թքնելով ,  
հաղալով , աքալով ու գողգալով բան ու  
բրիչը կ'առնէր ու ճամբայ կ'ելլէր , կիներն  
ալ միասին՝ նոյն մշակական գործիքներով  
զարգարուն : Անդրանիկ մանչը կը հետեւէր  
իրենց , եզները ետեւնուն ձգած , երկու աղ-  
ջիկները մէյմէկ խոշոր կուժ գլխերնուն վրայ ,  
Նեղոսի ճամբան ձեռք կ'առնէին ջուր բերե-  
լու համար , ու երկու պզտիկները , դեռ քալե-  
լու , հետեւաբար գործելու , անկարող , ալ-  
բակոյտի մը վրայ իրենց խանգարուած քունը  
կը շարունակէին :

Մինչեւ իրենց դաշտը երթալու համար , Ա-  
պու Խամիսին ու իր խումբը պէտքէր որ անց-  
նէին շատ մը ջրանցքներէ , մինչեւ մէջ-  
քերնին ջուրի ու ցելխի մէջ քալելով :

Վերջապէս անոս դաշտն են ու գործի կը  
սկսին : Եզները կը լծուին արօրին , Ապու  
Խամիսին ձեռք կ'առնէ մածը , զաւակն ալ  
խթանը , ու ծանր , դժնդակ , չարչրկուն  
գնացք մըն է կը սկսի դաշտին երկայնքը :

Ու կամաց կամաց արեւն է որ կը բարձրա- նայ հարկունէն, բանաստեղծներուն Փերոսը, կիզիչ, անհանդուրժելի, Ապու Խամիսի եւ իրենները չեն զողզողար հիմա, արեւն քըր- տինք կը թափեն, կ'էրին կը մրկին:

—Ալլա'հ, Ալլա'հ, ես էն Նէպի:

Այդ դժոխքի նախաձային մէջէն Նէպին օգ- նութեան կը կոչին խեղճերը, Մարգարէ'ն, Ռէսու'լը՝ որ հիւսիսային հով մը փչել տայ ծովին կողմէն:

Ու հեւ ի հեւ, ոլոր ոլոր քրտինքներ թա- փելով չոր հովին վրայ, որ կարծես կը ծծէ զանոնք անյաղ ու անկուշտ հեշտանքով մը, արօրը կը վարեն գաշտին երկայնքը:

Վա'չ երջանիկ մշակաց, . . .

Կէս օրին ճաշի ատենն է: Ապու Խամիսիի ազդիկները կը բերեն երկու շաբաթ առաջ եփած ու քարացած հացերը ու կը սկսին ար- տին մէջէն հաշիչ կոչուած խոտերը ժող- վել, որոնք պիտի կազմեն իրենց միակ կերակուրը: Արեւին ներքեւ կայնած, ու ըովհետեւ անկարելի է տաք հողին վրայ նստիլ, ճաշը կ'ընեն արասրնօք ու կը սկսին գործի մինչեւ որ Փերոս՝ իր խորովողի պաշտօնը կատարելէ յոգնած՝ կ'երթայ հանդչիլ արեւ- մուտքի վերմակներուն տակ:

\* \*

Ապու Խամիսիի միօրինակ կեանքին մէջ գեղանկար անակնկալներ պակաս չեղան երկու տարուան միջոցին ուր իրեն մօտիկ ան- ցուցի:

Իր կիներէն մին, յունիսի մէջ, ցերեկ ա- տեն, յանկարծամահ եղաւ արեւազարկէ, գաշաը աշխատած միջոցին:

—Ալլա'հ աքպար, Աստուած մեծ է, մը- տածեց Ապու Խամիսի փիլիսոփայօրէն:

Ուրիչ օր մըն ալ տղուն ոտքը սխալ շար- ժումով մը արօրին երկաթին տակ մնաց ու ջախջախուեցաւ: Երկու օր սոսկալի տառա- պանքներ կրելէ ետքը մեաւ Ախմէտ, տաա- նըինը տարեկան:

Այս անգամ Ապու Խամիսիի փիլիսոփայու- թիւնը անզօր մնաց, իր մանչ տղան, իր անդրանիկը, իր աջ բազուկն էր որ կը կոր- սընցնէր: Ու օրերով, անկողնիս մէջէն, առտունները կը լսէի խեղճ մարդուն ձայնը որ դաշտ գացած միջոցին լալազին կը գոչէր:

—Ես՝ ուէլէտ, ես՝ ուէլէտ . . . տղա՛ս, տղա՛ս:

\* \*

Քանի մը ամիս ետքը կարգը Ապու Խամի- սիին եկաւ: Նեղոսէն ու ջրանցքներէն հեռու դաշտի մը մէջ աշխատած պահուն կը ծարաւի- հետը ջուր առնելու մոռցած է եղեր, ու կը ստիպուի ծարաւը անցընելու համար խմել ընա- տափի ջուրէն: Մաստաֆ կ'ըսեն այն նեղ ջրանցքներուն որոնց մէջ կը ժողվուի բը- բինձի ու բամպակի արտերուն աղառտ ջուրը եւ որոնց մէջ ընդհանրապէս օձի բոյներ կը գտնուին: Ապու Խամիսի կուշտուկուռ կը խմէ այդ ջուրէն ու իրիկունը հիւղակ մտած ատեն անոնլի խիթ մը զինքը գետնէ գետին կը տապալէ: Ծուռ դարմանի կը վազեն բա- րեկամները, սակայն Շեխ Եուսուֆ Ապու Հարամիի աղօթքները ու ջատուկ կնոջ մը՝ Ջէյնապ պիթի Ռամատանի՝ նուսխաները ան- զօր կը մնան թունաւորման զիմացը ու Խա- միսի կը մննի նոյն գիշեր:

Ահա՛ բուն Մշակականը:

\* \*

Ռամսէսներու ժամանակակից եգիպտացի դպիր մը պապիրոսի մը վրայ նկարագրած է հողագործին կեանքը, քանի մը տողով, եւ ան է որ իրաւունք ունի:

«Հողագործը կեանքը անասուններուն մէջ կ'անցընէ, հողին կը հանէ իր կանաչեղէն- ներուն եւ խոտերուն համար. բաց գաշտին մէջ կերակուրը կ'եփէ եւ կոշտ ու թանձր լաթեր կը հագնի: Բաց օդին կը շարչրկուի, հիւղակին մէջ՝ կը խեղդուի: Հողին փակած է կապանքով մը եւ եթէ փորձէ անկէ ազա- տել ու քիչ մը հանդչիլ հիւղակին մէջ, ծեծ կ'ուտէ եւ տէրը զինքը կը վռնտէ:»

Հմայիչ չէ այս պատկերը, բայց ցուցա- փեղկ չկայ:

\* \*

Եւ սակայն եթէ կոտրենք բոլոր ցուցա- փեղկերը, ի՞նչ կը մնայ անդին . . .

Ժողովողը այդ փորձը ըրած ու հասած է բը- նական հետեւութեանը. «Ունայնութիւն ու նայնութեանց» ու ա՛լ աւելի տխուր խորհըր- դածութեան մը «Մահուան օրը ծննդեան օրէն աղէկ է:

Չէ՛, Վերպիլիոսը աւելի կը սիրեմ. «Վաչ, երջանիկ մշակաց»: Հաւատալ թէ երջանիկ- ներ կան աշխարհի երեսը, զօրավիգ մը չէ՞ սպրիտու համար:

Չոր իրակամութիւնը հրապուրիչ չէ բնաւ. քիչ մը կեղծիք խառնենք ամէն բանի. ի- րերն ու իրողութիւնները շպարենք ու սսկե-

զօծենք եւ անկէ ետքը գոչենք . — «Վա՛շ, ինչ գեղեցիկ են : » Վտոեակներն անգամ երբ ցուցափեղկի մէջն են ու ելեքտրական լոյսին տակ, հաճոյք կը պատճառեն մեզի : Փորձել ինքզինքնիս խաբել եւ յաջողիլ . ահա՛ երջանկութիւնը : Ապրելու ամենէն խելացի կերպն է այս, մանաւանդ որ «Սաւարի օրերը շա՛տ պիտի ըլլան ու բոլոր գալիքը ունայնութիւն է : »

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ



### ՀԵՐՈՎԴԻԱ (\*)

(Շար .)



Թեթեւ ծիրանիէ գառքաշ մը զանի կը պատատէր մինչեւ սանգալները : Սենեակէն ըշտապաւ ելած ըլլալով, ոչ մանեակ ունէր ոչ գինդ . սեւ մազերուն մէկ հիւսքը թեւին վրայ կ'իջնար, եւ ծայրը երկու ստիւքներուն մէջտեղը կը խորասուզուէր : Ռուսկերը, չափազանց վեր ելած, կը բարախէին . յաղթանակի մը ուրախութիւնը դէմքը կը լուսաւորէր, եւ հզօր ձայնով մը, Չորրորդապետը ցնցելով,

— Կեսարը մեզ կը սիրէ : Ագրիպպաս բանտրն է :

— Ո՞վ ըսաւ :

— Գիտեմ :

Եւ աւելցուց,

— Որովհետեւ անիկա ցանկացեր է որ կայսրութիւնը կայիտսին ձեռքն անցնի :

Իրենց ողորմութիւններովն ապրելով հանդերձ, անի աչք տնկած էր թագաւորական տիտղոսին, զոր իրենք ալ կը փառասիրէին : Բայց ա՛լ վախ չկար ապագային համար :

— «Տիբերիոսի զնդանները դժուարաւ կը բացուին . եւ երբեմն կեանքը անապահով է այնտեղ» :

Անտիպաս հասկցաւ ինչ ըսել կ'ուզէր : Եւ թէպէտ անի քոյրն էր Ագրիպպասին, անոր վայրագ ակնարկութիւնը արգարացի

(\*) Տես Անանիս, թիւ 2 .

թուեցաւ իրեն : Այդ սպանութիւնները իրերու բնական հետեւանք մըն էին, արքայական տուներու ճակատագրական բան մը : Հերովդէսի տանը մէջ, ա՛լ անոնց հաշիւը չէր գիտցուեր :

Յետոյ, Հերովդիա իր ձեռնարկը պարզեց . ձեռականները կաշառած, նամակներ երեւան հանած, ամէն դուռ լրտես դրած, եւ յաջողած էր ամբաստանիչ Եւտիքէսը հրապուրել : — «Ոչ մէկ նեղութիւն աչքիս կ'երեւնար : Քեզի համար, աւելին չըրի՞ . . . աղջիկէս զատուեցայ : »

Ամուսնաթողութենէն յետոյ, Հոռոմ ձգած էր իր այդ գաւակը, յուսալով որ Չորրորդապետէն ուրիշներ կ'ունենայ : Երբեք անոր խօսքը չէր ըներ : Անտիպաս ինքնիրենը փնտոեց այս գորովի վերաբորբոքման պատճառը :

Վերաբիրնը պարզեցին եւ շուտով իրենց մօտ լայն բարձեր բերին : Հերովդիա անոնց վրայ ինկաւ, եւ կուլար, կունակր դարձուցած : Յետոյ, ձեռքը աչքերուն քսեց, ըսաւ որ ա՛լ իր գաւակին պիտի չմտածէր, թէ երջանիկ էր ինքը . եւ յիշեցուց Անտիպասին հոն, ատրիոնին մէջ իրենց խօսակցութիւնները, իրենց հանգիպումները շոգեբազմիքներուն մէջ, պտոյտները Սրբազան ուղիին վրայ, եւ իրիկունները, մեծ վիլլաներուն մէջ, շաւրուաններուն մրմունջին մօտ . ծաղկէ կամարներուն տակ, Հոռոմի դաշտորայքին դիմացը : Կը նայէր անոր ինչպէս երբեմն, քակտուելով անոր կուրծքին, փաղաքուչ շարժումներով : — Հերովդէս մէկդի հրեց զայն : Սէրը զոր կը ջանար վերարծարծել, ա՛յնչափ հեռու էր հիմա : Եւ բոլոր իր դժբաղդութիւնները անկից յառաջ կուզային . որովհետեւ ահա գրեթէ տասերկու տարի էր որ պատեւրազմը կը շարունակուէր : Ան ծերացուցած էր Չորրորդապետը : Ուսերը կամարածեւ կը ցցուէին մանիշակագոյն եզերոյքով թուխ պարեգօտի մը մէջ . ձեռմակ մազեր մօրուքին կը խառնուէին, եւ արեւը, որ ամպհովանիէն ներս կը թափանցէր, անոր թաղծագին ձակատը լոյսով կ'ողողէր : Հերովդիային ձակատն ալ ծալքեր ունէր . եւ դէմ առ դէմ, դժնեայ ձեւով մը իրար կը դիտէին :

Լերան ճամբաները մարդիկ սկսան երեւալ : Հովիւներ իրենց եզները կը խթէին, տղաք էշեր կը քաշէին, վարաւանդասպաններ ձիեր կ'առաջնորդէին : Անոնք որ Մաքերուէն անդին

բարձունքներն ի վար կ'իջնէին , կ'անհետա-  
նային զղեակին ետեւը . ուրիշներ զիմացը  
հեղեղատէն վեր կ'ելլէին , եւ քաղաքը հաս-  
նելով , իրենց բեռները կը պարպէին բակե-  
րուն մէջ : Չորրորդապետին հայթայթիչներն  
էին , եւ ծառաներ՝ որ կոչնականներուն առ-  
ջեւէն կուգային :

Բայց արեգակնակին խորը , ձախ կողմը , Ե-  
սենացի մը երեւցաւ , սպիտակ պատմուճան  
հագած , բոկոտն , ստոյիկեան ձեւով մը :  
Մաննայի , աջ կողմէն , կը վազէր՝ վաղը  
վերցուցած :

Հերովդիա գոչեց անոր . — Սպաննէ՛ դայն :

— Կեցի՛ր , ըսաւ Չորրորդապետը :

Երկուքն ալ անշարժ մնացին :

Յետոյ դուրս ելան , իւրաքանչիւրը զսա-  
սանդուխէ մը , ետ ետ քալելով առանց նայ-  
ուածքնին իրարմէ բաժնելու :

— Կը ճանչնամ դայն , ըսաւ Հերովդիա ,  
Փանուէլ է անունը , եւ կ'ուզէ Եւքանանը  
տեսնել , եւ դուն կուրութի՞ւնն ունիս զանի  
ողջ պահելու :

Անտիպաս առարկեց որ կրնար օր մը օգտա-  
կար ըլլալ : Երուսաղէմի դէմ անոր յարձա-  
կումները իրենց կողմը կը շահէին բոլոր մնա-  
ցած Հրէաները :

— Չէ՛ , կրկնեց Հերովդիա , անոնք իրենց  
բոլոր տէրերը կ'ընդունին , եւ հայրենիք մը  
կազմելու անկարող են :

Գալով անոր որ Նէէմիասէն ի վեր պահպան-  
ուած յոյսերով ժողովուրդը կը յուզէր , լա-  
ւազոյն քաղաքականութիւնը զանի ջնջելն էր :

Չորրորդապետին համեմատ , շտապելու պէտք  
չկար : Եւքանանը վտանգաւոր : Կարելի չէր :  
Եւ կը կեղծէր խնդրալ :

— « Առէ՛ » : Եւ Հերովդիա նորէն պատմեց այն  
անարգանքը զոր կրած էր օր մը երբ Գաղատայ  
կ'երթար ապրաստմ քաղելու : « Գետին եւ  
զերքը ջուրէ ելլողներ հագուստնին կը հագ-  
նէին : Հողաբլրի մը վրայ , մօտը , մարդ մը  
կը խօսէր : Մէջքը ուղտի ստեւ մը ունէր ,  
եւ գլուխը առիւծի գլխու կը նմանէր : Հա-  
զիւ թէ զիս նշմարեց , մարգարէներուն բոլոր  
անէծքները վրաս թքաւ : Բիւրերը կը փայլա-  
տակէին . ձայնը կը մանչէր . բազուկները կը  
բարձրացնէր կարծես կայծակը փրցնելու համար :  
Անհնար էր փախչիլ . կառքիս անիւները մինչեւ  
սոնակներն աւազի մէջ էին : Եւ կամաց կա-  
մաց հեռացայ , վերարկուիս տակ ապաստա-  
նած , ու սառ կտրած՝ բոլոր այդ նախատինք-

ներէն որոնք մորկայոյզ անձրեւի նման կը  
թափէին : »

Եւքանան կը խանդարէր իր կեանքը : Չայն  
բռնած ու չուաններով կապած ատեննին , զի-  
նուորները հրաման ունէին զանի մեռցնելու՝  
եթէ զիմադրէր . հեզ եղաւ : Բանտին մէջ  
օձեր դրած էին . օձերը մեռան :

Այս որոգայթներուն ապարդիւնութիւնը կը  
կատուեցնէր Հերովդիան : Եւ արդէն , ինչո՞ւ  
իրեն դէմ կը մաքառէր . ի՞նչ շահ ունէր :  
Բազմութեանց առջեւ անոր ազազակած խօս-  
քերը՝ տարածուած էին , չորս կողմ կը պը-  
տտէին . ամէն տեղ կը լսէր զանոնք . օղը  
կը լեցնէին : Լէգէոններու դէմ՝ քաջութիւն  
պիտի ունենար : Բայց այդ ուժը , սուսեր-  
ներէն աւելի վտանգաւոր , եւ անըմբռնելի,  
ապշեցուցիչ էր . եւ արեգակնակին վրայ կ'եր-  
թեւեկէր , բարկութենէն կապուտցած , բառ  
չգտնելով բացատրելու համար ինչ որ զինքը  
կը խեղդէր :

Կը մտածէր նաեւ թէ Չորրորդապետը ,  
հանրային կարծիքին տեղի տալով , թերեւս  
զինքը արձակելու ելլէր : Այն ատեն , ամէն  
բան կորսուած էր : Տղայութենէն ի վեր ,  
մեծ պետութեան մը երազը կը սնուցանէր : Անոր  
հասնելու համար էր որ իր առաջին ամուսինը  
թողլով միացած էր այս մարդուն , եւ հիմա  
կը խորհէր որ անի զինքը խաբեր էր :

— Աղէ՛ կ'նեցուկ մը գտայ՝ քու ընտանիքիդ  
մէջ մտնելով :

— Իմ ընտանիքս քու կ'ինիդ համարժէք է ,  
ըսաւ պարզօրէն Չորրորդապետը :

Հերովդիա երակներուն մէջ եռալն զգաց  
իր քահանայ եւ թագաւոր նախահայրերուն  
արիւնին :

— Բայց քու պապդ Ասկալոնի տաճարը  
կ'աւելէր : Միւս նախահայրերդ՝ հովիւ , աւա-  
զակ , կարաւանապետ էին , հրո՞ս մը , Յու-  
գոյի հարկատու՝ Դաւիթ արքայէն ի վեր Բու-  
լոր իմ նախահայրերս քու կ'իննեցնող նուաճած են :  
Մակաբայեցւոց առաջինը ձեռք վանեց Հերո-  
նէն , Հիւրկանոս ձեզ բռնադատեց թլփատուե-  
լու » : Եւ դուրս թափելով պատրիկեանի ար-  
համարհանքը ոսակին համար , Յակոբի ոխը  
Նդովմի դէմ , անոր երեսին տուաւ իր անտար-  
բերութիւնը նախատինքներու հանդէպ , իր  
թուրութիւնը փաբիսեցւոց նկատմամբ որ զինքը  
կը մասնէին , իր վատութիւնը ժողովրդին  
առջեւ որ անոր կ'ինը կ'ատէր : « Իուն ալ ժո-  
ղովրդիդ պէս ես , խոստովանէ՛ , եւ կը զըղ-

Չաս քարերուն շուրջը պարող արաբ աղջիկը ձգած ըլլալուդ : Անոր քովը գնա նորէն : Ապրէ՛. անոր հետ իր կտակէ տանը մէջ . մոխրի տակ եփած անոր հացը կե՛ր . անոր մաքինե-րուն մածունը կլլէ՛ . անոր կապոյտ երեսները պա՛գ, եւ մոռցի՛ր զիս : »

Չորրորդապետը ա՛լ մտիկ չէր ընել : Տան մը տամալին կը դիտէր, ուր դեռատի աղջիկ մը կար, եւ պառաւ մը՝ ձկնորսի կուղի չափ երկայն եղեգէ կոթով հովանոց մը ձեռքը բռնած : Կապերտին մէջտեղը, ճամբորդութեան մեծ կողով մը բաց կը մնար : Գօտիներ, քողեր, ոսկեզարդ գորշապահանգներ, խառնիխուռն կը յորգէին անկից : Աղջիկը մերթ ընդ մերթ այդ առարկաներուն վրայ կը ծռէր եւ զանոնք օդին մէջ կը թռթուէր : Հագած էր, Հոռոմայեցի կի-ներուն պէս, խոպոպեալ շապիկ մը ու զմուխտէ ծոպերով պեպլոն մը, եւ կապոյտ փոկեր կը պարփակէին անոր մազերը, անշուշտ շատ ծան-րարեուն, որովհետեւ ատեն ատեն ձեռքը հոն կը տանէր : Հովանոցին շուքը անոր վերեւը կը պտտէր, զայն կիսովին ծածկելով : Անտի-պաս երկու երեք անգամ նշմարեց անոր փա-փուկ պարանոցը, մէկ աչքին ծայրը, փոքրիկ բերնի մը անկիւնը : Բայց կը տեսնէր, ազդ-րեղէն մինչեւ ծոծրակը, անոր իրանը որ առա-ձգական կերպով մը կը ծռէր ու վարէն վեր կը ցցուէր : Այդ շարժման կրկնումին կը սպա-սէր եւ շնչառութիւնը կը տենդոտէր . աշուր-ներուն մէջ բոցեր կը վառէին : Հերովդիս կը դիտէր զայն :

«Ո՛վ է ան» . հարցուց Չորրորդապետը : Հերովդիս պատասխանեց թէ տեղեկութիւն չունէր եւ յանկարծ հանդարտած ելաւ գնաց : Ճեմիլիքին տակ Հերովդէսին կը սպասէին Գալիլիացիները, դպրապետը, արօտապետը, աղարաններու վերատեսուչը եւ Բաբելացի Հը-րէայ մը՝ որ իր ձիաւորներուն հրամանա-տարն էր : Ամէնքը մէկանց բարձրադաղակ ողջունեցին իր գալուստը : Յետոյ աներեւու-թացաւ ան դէպ ի ներքին խուցերը :

Նրբանցքի մը անկիւնը Փանուէլը երեւցաւ .  
—Ա՛, նորէ՞ն : Եւքանանին համար կուգաս անշուշտ :

—Եւ քեզի համար : Ամենակարեւոր բան մը ունիմ քեզի իմացնելու :

Եւ առանց Անտիպասը ձգելու, անոր ետեւէն մտաւ մութ սենեակ մը ,

Լոյսը կ'իյնար վանդակապատէ մը, ձեղնածնօ-տին տակ երկայն տարածուելով . պատերը ներ-

կուած էին նուսուֆարի գոյն , գրեթէ սև : Խորը կը փուռէր երեսնոսէ անկողին մը, եզի մորթէ փոկերով : Ոսկի վահան մը, անոր վերեւ , կը շողար ինչպէս արեւ մը :

Անտիպաս մէկ ծայրէն միւսը գնաց , ան-կողնին վրայ պառկեցաւ :

Փանուէլ ոտքի կիցած էր : Բազուկը բարձ-րացուց , եւ ներշնչեալ ձեռով մը՝

—Բարձրեալը ատեն ատեն իր գաւակներէն մէկը կը ղրկէ : Եւքանան անոնցմէ մէկն է : Եթէ զայն կեղեքես . պիտի պատուհասուիս :

—Ինքն է որ զիս կը հալածէ , գոչեց Ան-տիպաս : Անկարելի արարք մը պահանջեց ինձմէ : Այդ օրէն ի վեր կը բղթտէ զիս : Եւ սկիզբները՝ խիստ չէի : Նոյն իսկ Մաքերոսէն մարդիկ զրկեց որ գաւառներս տակնուվրայ ընեն : Վա՛յ իրեն : Քանի որ կը յարձակի վրաս , ինքզինքս կը պաշտպանեմ :

—Անոր ցասումները շատ բուռն են , պա-տասխանեց Փանուէլ : Հոգ չէ : Պէտք է ար-ձակել զայն :

—Կատաղի գազանները չեն արձակեր , ըսաւ Չորրորդապետը :

Նսենացին պնդեց .  
—Մի՛ վախնար : Արաբիս, Գալիլիս, Սկիւ-թիս պիտի երթայ : Անոր գործը պէտք է որ տարածուի մինչեւ աշխարհիս ծայրը :

—Մեծ է իր զօրութիւնը . . . Ակամայ, կը սիրե՛մ զինքը :

—Ուրեմն , արձակ թող զայն :

Հերովդէս գլուխը շարժեց : Գը վախնար Հե-րովդիսայէն , Մաննայիէն , եւ անձանթէն : Փանուէլ ջանաց զայն համոզել , իր ծրա-գիրներուն իբր երաշխիք՝ մէջ բերելով Նսե-նացուց հնազանդութիւնը թագաւորներուն : Յարգանք կը վայելէին այդաղքատ մարդիկը, տանջանքներով աննուաձեւի , վուչէ զգեստ-ներ հագած , եւ որոնք սպազան կը կարգա-յին աստղերուն մէջ :

Անտիպաս յիշեց անոր քիչ առաջ ըսած մէկ խօսքը :

—Ի՞նչ է այդ կարեւոր բանը զոր կ'ուզէիր իմացնել :

Սեւամորթ մը վրայ եկաւ : Մարմինը փո-շիէն ձեռմկեր էր : Կը հոնտար ու բառ մը միայն կրցաւ ըսել .

—Վիտելլիո՛ս :

—Ի՞նչ : Եկա՞ւ :  
—Տեսայ զինքը : Երեք ժամ չանցած՝ հոս կ'ըլլայ :

Նրբանցքներուն սրկապանները երերացին՝ կարծես հովէն : Խժլգուկ մը դղեակը լեցուց , ժխոր մը վազող մարդոց , քաշկոտուած կարասիներու , գետին թափող արծաթեղեններու . եւ աշտարակներուն կառարէն փոզարգներ՝ կը հնչէին՝ ցրուած ստրուկները կանչելու համար :

ԿԻՒՍԹԱՎ ՅԼՈՊԷՍԻ

(Շարունակելի)

ՁՄՐԱՆ ԵՐԳ

Հայ աշխարհի սարե՛ր , ձորե՛ր ,  
Խաղճ՛ն առուակք , ձոխ հովիտ ,  
Ա՛խ ցուրտ ձրմնս , դաժան օրեր  
Տարան ձեր փայլն ու ժրպիտ . . .

Հայի յոյսե՛ր , Հայի իղձե՛ր ,  
Այնքա՛ն փայլուն , լուսավառ , —  
Ձեզ կաշկանդից կեանքի ձրմնս ,  
Պատեց կեանքի սեւ խաւար . . .

Եւ դու , ա՛զգ իմ , հէգ , յուսախար ,  
Անօթեւա՛ն , ցանուցի՛ր .  
Դեռ չըհասած ցանկալի ափ ,  
Դու կէս ճամբին մընացիր . . .

Բայց դու մի՛ լար , հայ ժողովուրդ ,  
Աւեր երկրիդ լուս վըրկայ .  
Հացն անզօր է , սուգն—անխորհուրդ ,  
Ախուվախում կեանք չըկայ :

Նայի՛ր . . . լացով կեանքի թըփից  
Ո՞վ է քաղել զարնան վարդ .  
Հեռ՛ւ քեզնից սուգ ու թախիծ ,  
Հեռ՛ւ քեզնից ցաւ ու զարդ . . .

Որպէս պողպատ կըրակն ինկած ,  
Դու ամբացի՛ր , կարծրացի՛ր .  
Նո՛ր ոյժերով , նո՛րից վառուած՝  
Ապրի՛ր , յուսա՛ ու գործի՛ր .

Գործը կեանք է . . . անդուլ գործում  
Քեզ չի յաղթել բիրտ ձրմնս .  
Գործի՛ր , ազգ իմ , երկրիդ ծոցում ,  
Եւ փայփայի՛ր զարնան սէր . . .

ԱԼԵԲՍԱՆԴԻՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ



Մ Ա Հ Ը

Պարոն Պրայտ տանխմարքացի երիտասարդ մըն էր , նուրբ ու երազոտ խառնուածքով . կեանքը անցուցած առանց խոտվքի՝ հանգարտ երջանկութեան մը մէջ , մէկէն հոգւոյն բոլոր ուժերովը աղջիկ մը սիրեց . դժբաղդաբար անիկա մեռաւ քիչ ատենէնս եւ Պրայտ , ընկձուած այս անակընկալ եւ ուժով ցաւին տակ որ մէկէն կը թռամեցնէր իր թարմ սիրտը , ինքզինքը տուաւ գիտութեան եւ մանաւանդ փիլիսոփայութեան , յուսալով մոռնալ իր մեծ դժբաղդութիւնը . իր հասկացողութեան ձկուհու թիւնը անմիջապէս զինքը մղեց նիւթապաշտութեան . բայց իր նկարագրին անուշաթիւնը եւ երազուն միտքը զինքը արգիլեցին անպատկառ նիւթապաշտ մը ըլլալէ . առաքեալի մը անձնուրաց ձգտումները զգաց իր համոզումները ուրիշներուն հաղորդելու . խարսեայ մօրուքը հակած կուրծքին վրայ , կապոյտ քաղցր աչուքներով որոնցմէ անասման բարութիւն մը կ'արտայայտուէր , կը խօսէր ամենուն հետ . ամենէն խոնարհներէն մինչեւ ամենէն գոռոզները չէին կրնար զինքը չսիրել . անուշ ձայնը որով ամենուն երջանկութիւն կը խոտանար , որով կը հաւատար լոյսի ճառագայթում մը ձգել մոլեխանդութենէն կամ նախապաշարումներէն միջոցաւ հոգիներու մէջ , անանկ հրապուրիչ շեշտ մը ունէր որ երաժշտութեան մը պէս մտիկ կ'ընէին եւ սրտերը կը արօփէին անբացարեղի յուզումով մը :  
Ինքը՝ ինչպէս ամէն անոնք որ իրենք իրենց մէջ վսեմ կոչում մը զգացած են , խորունկ համոզում մը ունէր ըսածներուն եւ կը հաւատար որ եթէ ճշմարտութեան սերմեր ցանուէին մարդոց մէջ , ամէն ցաւ պիտի վերջանար , ամենքը երջանիկ պիտի ըլլային : Սակայն մարդկութեան համար ունեցած անհուն սէրը հաղիւ թէ կ'ամոքէր իր խորտակուած սիրտը . իրիկունները երբ կ'առանձնանար սենեակը , կը զգար որ սիրտը միշտ կ'արիւնէր եւ հետզհետէ կը բացուէր իր մէջ դարհուրելի պարսպ մը :  
Անքուն անցուցած գիշերները , իր կորսնցուցած սիրելիին յիշատակովը միտքը թափառուն , ի գուր կը ջանար զայն սանձել ուսումնասիրութիւններու մէջ . եւ ակամայ կը խորհէր բնութեան այն անզուժ օրէնքին որուն մահ կ'ըսեն եւ որ այնքան չարաչար կերպով հալածած էր զինքը :  
—Անիկա թերեւս ծաղիկ մը եղած է , թերեւս հովն է որ կ'անցնի քովէս : Անիկա երազներս է որ պարապ ու տխուր գիշերներս կը լեցնէ , ինծի ձեռք կուտայ , քայլերուս առաջը բացուած վիհերն անցնելու , բայց ի՞նչ ընեմ , անիկա ան չէ ինչ որ էր , ինչպէս որ սիրեցի , ան մեռա՛ծ , մեռա՛ծ : մեռա՛ծ է . . .

Ու գրքերը կը նետէր խենդի պէս, ճակատը կրակի մէջ, անդամները գողալով, զէմքը ձիւնի պէս ձերմակ:

Աչքերը մոլորուն, կարծես մթնոլորտին մէջ կը փնտռէր պաշտելի էակին մասնիկները, զանոնք միացնելու, անոնցմով ամբողջ մը շինելու, զԱնիկա վերստեղծելու համար:

Յետոյ յոգնած կ'իջնար տեղ մը շնչապառ ինչպէս եթէ հոգին հորիզոններ վազած անցած ըլլար, եւ պահ մը կը մնար առանց մասձուսի, առանց խոտիքի. բայց իր տանջող խոհերը կը խուժէին միտքը, ուղեղը կը սանտրէին իրենց անհամար ճիւղաւորումներով, եւ յուսահատարար կը խորհէր:

— Եթէ նիւթերը իրենց մէջ խնամութիւններ ունին, եթէ անոնք անմահ են, ինչու Անոր ցրուած մասնիկները զէպ ի ինծի չեն գար, զէպ ի իմ սիրտս չեն մղուիր հո՞ւ իմ դէմս:

Եւ ձեռքովը ջղուտ ու արագ շարժում մը կ'ընէր՝ կարծես զանոնք բռնելու, իրար ձուլելու համար:

Հետզհետէ սկսաւ տկարանալ, զէմքը կը հալէր օրէ օր, աչքերը անսովոր փայլով մը կը թափառէին եւ մէկու մը երեւոյթը ունէր որ շուրջը եղածները չի տեսներ, չի լսեր. վերջապէս հիւանդացաւ. ծնողքը զայն Արեւելք զրկեցին յուսալով որ ճամբորդութիւնը եւ տաք արեւը զայն պիտի բուժէին:

Պրայտ, սիրտը աւելի արիւնոտ, Եգիպտոս գնաց:

Աւագոտ հովիտներուն մէջ, արեւին հզօր տաքութեանը մէջ լողանալով, կ'երթար բուրգերը գիտել. Սփինքսներուն խիստ գիւմագծերը, անթափանցելի աչքերը իրեն երազներ կուտային եւ միտքը խոտված՝ անոնցմէ երկնցած սեւ շուքը դիտելով գետնին վրայ, միշտ կը տառապէր:

Բուրգերը կը բարձրանային զէպ ի վառ կապոյտ երկինքը, ու Մահուան այդ մեծ եւ պարզ տաճարները իրեն այնպիսի զգայութիւն մը կուտային որ կարծես կեանքը կը դադրէր իր մէջ, արիւնը կը սառէր եւ կը զգար նոյն սպաննող ջերմը ճակատին մէջ, մինչ զէմքը ձիւնի պէս կը ձերմկնար իբր թէ մահուան մատը զպած ըլլար անոր:

— Ես ալ պիտի մեռնիմ, ես ալ պիտի հատնիմ, այն բանը որ իմ մէջս «Ես»ը կը շինէ, «Ամբողջս» կը կազմէ, զիս պիտի թողու, եւ իմ գոյութեանս կտորները պիտի ցրուին ինչպէս եթէ ձեռք մը իր մէջ բռնած փետուրները մէկէնիմէկ հովին ձգէր:

Սակայն ներսէն միսթարող ձայն մը կ'ըսէր իրեն.

— Նիւթը չի կորսուիր, նիւթը անմահ է:

Ու Սփինքսները՝ գաղտնապահ եւ վսեմ աչքերով, իբր թէ իրենց մէջ պահուած ըլլար ընտելեան ամբողջ խորհուրդը, իրեն կը նայէին, ճակատնին բարձր, տնխոով իրենց

առիւծի թաթերուն վրայ: Գիշերը կ'իջնար եւ բուրգերը կը մխրձուէին մութին մէջ, աւելի երկնալով, գրեթէ երկնքին գրպաչելով:

Ինքը աւելի հիւանդ կը վերադառնար, փողոցներէն անցնելով անտարբեր, եւ փրկարար դեղի մը պէս որ ցաւերը կ'ամոքէր, միշտ կը կրկնէր մտքէն.

— Նիւթը չի կորսուիր, նիւթը անմահ է. Ան չէ մեռած, դուն չպիտի մեռնիս:

Բայց տանջուած ուղեղին մէջ հետզհետէ տարակոյտ մը կը մտնար որ կը խանգարէր հաղիւ ներգաշնակուած մտածումները. իր նիւթապաշտ փիլիսոփայութիւնը զոր այնքան ամուր կը կարծէր, կը սկսէր խախտիլ Մահուան մտածումին առջեւ: Այդ անէացումը չէր կրնար ըմբռնել, զանիկա այնքան անիրաւ, այնքան անողոք կը գտնար որ ամբողջ հոգին կը խոտվէր եւ սենեակը հասնելուն պէս՝ ջղային ծայրայեղ գրգռումներու անձնատուր, կը դալարուէր անբացատրելի տանջանքներու մէջ. երբ կը հանգարտէր, ինքզինքը օտարացած կը զգար իր շուրջի իրերուն հետ. անուգամ մը, պատահմամբ, ծաղիկներ կային սենեակը. իրեն այնպէս եկաւ որ հոգեովը այդ թերթիկներուն մէջէն կը թափանցէր մարդկային բեկորներու. կարծեց որ անոնց բարկ անուշահոտութիւնը սրտի տրոփներ են որ զէպ ի ինքը կուգային հանդարտ ալիքներու պէս. կարծեց որ նայուածքներ հիւսած էին անոնց թափանցիկ եւ նուրը շինուածքը, թէ կորսուած երազներ ծնունդ տուած էին անոնց: Անկէց ետքը ամէն առարկայ, ամէն բան տանջանքի առիթ մը եղաւ իրեն համար. գիւշերը մութին մէջ իր զէմը գրուած օտար մը կը տեսնէր եւ իրեն այնպէս կուգար որ պարապ գանկ մըն է:

— Ուղեղը ո՞ւր է, մտածումները ո՞ւր են:

Իրիկուն մը խենդի պէս ցատքեց անկողնէն, իրեն այնպէս եկաւ որ իր ուղեղն ալ կը քաշէին գանկին մէջէն, թէ ինքը կը տարբալուծուէր, կ'անօտրանար հետզհետէ:

Հետեւեալ օրը մեկնեցաւ Եգիպտոսէն եւ Պոլիս գնաց:

Մէկէն անուշ մեղամաղձոտութիւն մը ամոքեց իր ցաւերը. աչքերը հանգչեցան քաղաքին ներդաշնակ հորիզոնին մէջ: Գլխուն մէջ ցաւ մը կը զգար, թեթեւ, որ գինովութեան մը պէս իրեն մոռցնել կուտար իր խենդեցնող մտածումները, եւ կը պտրտէր երկայնատեն դաշտերու մէջ քաղաքէն դուրս Միայն մինարէները դեռ գինքը կը վրդովէին եւ վախնալով աչքերը կը դարձնէր անոնց սուր սիլուէթներէն որոնք տեսանելի աղօթքներու պէս զէպ ի երկինք կ'ուղղուէին:

Աչքերով կը հետեւէր փողոցը յամբօրէն քալող, շղարչներու մէջ փաթթուած կիներու որոնք՝ կենդանի երազներու պէս խորհրդաւոր կ'անցնէին միտքը վայրկեան մը զբաղեցնելով

եւ յետոյ մարեղով հեռաւորութեան մէջ :

Օրմը իր ապաքինուած սիրտը վերսկսաւ ցաւել . Անոր յիշատակը զինքը նորէն տանջեց, միտքը գրաւեց՝ եւ մինչեւ իսկ մղուեցաւ մահուան խորհելու : Գատըքէօյ կը բնակէր . զուրս ելաւ ու սկսաւ թափառել Հայտար Փաշայի դաշտին մէջ . չափազանց նիհարցած էր . խարտեաշ սուր մօրուքը աւելի թոյլ կ'իջնար կուրծքն ի վար :

Գետինը խոտերուն վրայ ինկաւ , չկրնաւ լով քալել . գիմացը գերեզմաննոցին սեւ ծառերը կը շարժէին մութ կոհակներու պէս եւ անոնց սօսաւիւնը մինչեւ իրեն կուգար :

— Ի՛նչպէս հողը ազահութեամբ կուլ տուած է ա՛յնչափ սերունդներ . ո՛րչափ զանկեր կան հոն իրենց մասձումներէն գրկուած , սրտի մնացորդներ առանց արօրի :

Դէմքը հետզհետէ աւելի կը ճերմկնար , աչքերուն մէջ բիբերուն կապոյտը կը հալէր կարծես տենդին մէջ եւ միայն երկու բիծեր կ'երեւային ակնակապիճներուն մէջ :

Եւ իրեն այնպէս եկաւ որ սօսաւիւնը կը մօտիկնար , սեւ հեղեղ մը զինքը կ'ողողէր սանջուած հոգիներու , որոնք իրենց խաբուած երազները կուլային .

— Ամէն բան սուտ է ր սո՛ւտ է : . .

Ու բացարձակ անէացումին գաղափարովը մոլորուած , ինչպէս եթէ անհուն պարսպի մը մէջ ըլլար , գլուխը դարձաւ , կարծես երկինքը իր վրայ կ'իջնար , գերեզմաննոցին սեւ ծառերը դէպ իր կողմը կը ծռէին եւ ճերմակ քարերը կը փախչէին միեւնոյն արհաւիրքէն բռնուած :

Թեթեւ շշուկ մը զանի ինքզինքին բերաւ . երկայնահասակ նիհար ու թուխ մարդ մը կայնած էր քովը . ուսերէն վար ցնցոտիներ կ'իջնային հազիւ մարմինը ծածկելով . ոտքերը բոպիկ էին . երկու ձեռքերը միացուցած գաւազանին վրայ , խաղախով գլուխը անոր կողմը հակած , կը նայէր : Նախ զայն մուրացկան կարծեց , բայց դէմքին անուշ արտայայտութիւնը , ժպտուն աչքերուն գրեթէ երկնային երջանկութիւնը ուշադրութիւնը գրաւեցին . երկայն ճերմակ մօրուք մը կ'իջնար արեօէն թուխցած եւ գրեթէ մերկ կուրծքին վրայ , եւ շրթունքները մեքենաբար կ'արտասանէին .

« Լեռները պիտի խախտին եւ ամպերու պէս պիտի քալեն . . . դայեակները պիտի գետինը ձգեն իրենց սնուցած սողաքները . . . եւ բոլոր յղի կիները պիտի վիժեն . . . »

Յետոյ քովը նստեցաւ մտերմօրէն եւ անոր դառնալով ըսաւ .

— Օտարակա՛ն , քու դէմքիդ տժգունութիւնը եւ աչքերուդ փայլը ինձի կ'ըսեն որ դժբաղդ ես :

— Ի՞նչն ո՞վ ես , հարցուց Պրայտ :

— Ես Աստուծոյ ընտրեալն եմ , անոր փառքին համար երկրային ամէն բան թողած եմ եւ օրերս կ'աճեցնեմ անոր աղօթելով . իմ

զանձս սրտիս մէջն է եւ ոչ ոք կրնայ գրաւել , ես ճերմիջ եմ :

Տարօրինակ ճառագայթում մը դէմքին կընձիռները պարզեց . մօրուքը դանդաղօրէն ինկաւ կուրծքին վրայ եւ դէպ ի Պրայտը դառնալով .

— Օտարակա՛ն , ես չեմ գիտեր թէ դուն ո՞վ ես , բայց եթէ ո եւ է ցաւ քու սիրտդ կը տանջէ , ինձի հետ եկուր :

Պրայտ անձկութեամբ հարցուց անոր . — Ո՞ւր պիտի տանիս ինձի :

Տերվիշը վայրկեան մը չպատասխանեց , յետոյ անոր դարձաւ .

— Մուհամմէտին հարցուցին . — « Երբեմն սերտը կը ժանգոտի մետաղի պէս , ի՞նչ ընելու է զայն փայլեցնելու համար » — Մուհամմէտը պատասխանեց . — « Սուրան կարգացէք եւ գերեզմանները այցելեցէք » .

— Գերեզմաննո՛րը . . .

Տերվիշը թեւէն բռնեց մեղմօրէն զայն դէպ ի գերեզմաննոց տանելով . Պրայտ կը հետեւէր անշշուկ : Գերեզմաննոցին մէջ սեւ ծառերը սպաւոր հոգիներու պէս կը տատանէին մեղմօրէն . փաթտոցաւոր քարեր կարծես իրարու հասնելու մշտնջենական ջանքով իրարու վրայ կը հակէին . անանուխի բարկ բուրմունք մը գետնէն վեր կը խնկուէր անձայն աղօթքի մը պէս . եւ սոխակները , մենիկ բնակիչները սեւ նոճիներուն , կ'երգէին իրենց ամենէն անուշ , ամենէն նուրբ մեղեդին . Պրայտ գետինը ինկաւ ուժասպառ . ուսերէն վար կարծես հողերը կ'իջնային գաղջ ջուրի հոսանքներու պէս . սիրտը լեցուեցաւ , եւ սկսաւ լայ , նախ կատաղօրէն , յետոյ թեթեւ հեծկտանքներով . հովը զանդաղարար կ'անցնէր , կարծես բեռնաւորուած աղօթքներով եւ անուշահոտութիւններով , եւ ծառերը իր վրայ կը հակէին իրենց զով շուքովը զայն գգուելու :

Տերվիշը , անոր քովը ոտքի վրայ , ձեռքերը գաւազանին միացուցած , եւ կէս մէջքին ծռած՝ կը մրմնջէր .

— Լեռները պիտի խախտին եւ ամպերու պէս պիտի քալեն . . . դայեակները գետինը պիտի ձգեն իրենց սնուցած սողաքը . . . բոլոր յղի կիները պիտի վիժեն . . . եւ մարդիկ գինով պիտի թուին . . .

ՉԱՊԻԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ՃԱՒԱՐԱԿԻՆ ՔԵՐԹՈՒԱԾԸ

Աշնան գիշերները երկար կ'ըլլան ու կեանքը որ գուրսը կը սառի, աշխատութիւնը որ ցուրտէն կ'ընդարմանայ՝ թոնիրին տակ նըշուող առաջին կրակովն ու ծխացող առաջին բոցովը տաքցած՝ ներսը, մութ երդիքին տակ կը վերակսի, իրիկունը՝ ճրագլուսով կարծուած կարծաւին շուրջը կամ հաւախօսին՝ ճաճացող ճախարակին առջեւ: Դէմ լուսուն, զեռ Այգը իր կուսական ճերմակ կաթը չկթած Ազօթը՝ րանի կուրծքն ի վար, հորիզոնին սրտին վրայէն առուանոսելով, եւ Արեւը իր կրակէ շրթունքներով զեռ այդ կաթը չծծած, երբ խօսնակին վերջին բարբառը գիւսական մութին արձաւիրքը չէ գոսացեր զայն իր կապանքեւրէն ազատելով, այն պահուն ուր զեռ երկրնքի եղեամբ կը մաղուի երկրի քամիին թեւերուն վրայ, չքաւոր փողոցին, աւերակ տան եղանակն է որ կ'երգէ, տխուր երգերուն ամենէն յուզիչը, ջայրին նուազը պառակն մատներուն տակ:

Պատկերը կ'իսակործան օճախէ մը ներսն է: Պատին մէջ բացուած պատուհանին վրայ հողէ ճրագաման մը իր կտուցի ծայրէն պղտոր լոյսի օղ մը կը կախէ, լուսաւորելով մերկ սեւեռակին բոլոր ցուրտ ամաշութիւնը ու ձեռքի ճամբան, երկաթէ բարակ ճաղը՝ որուն վրայ պառակն կ'իսաւեր աչքերը պիտի հետեւին քուլային անհատնում թելը հաւքելու բարդելու: պառաւը որ ահա կ'իսով ծոած կը դարձնէ, կը դարձնէ մանիչը՝ անցեալ օրերու յիշատակին հետ գլուխ գլխի, միայնակ ինչպէս իր տանը մէջ, նոյնպէս հողիին հետ:

Ճախարակը կը դառնայ ու բամպակը, միղմօրէն իր աղուամազը ճաղին բերնին ծամոց տալով, անծայր թելի կծիկը կը քակէ. ու տխուր եղանակ մը փրթելով, ջայրին կուրծքէն թէ հողիէն, հասնող քուլային, բարկըցող զերծանին օղբը կը կրկնէ կը հեծեծէ: Չորցած կուպերուն տակ գիւթական ծարիր մը քաշուած ըլլար կարծես, երկու վատուժ արցունքներու մէջէն՝ պառաւը նոր աշխարհի մը պարիսպէն ներս կը նայի. եւ դէպ ի ետ հեռուոր հորիզոնին վրայ պղտիկ պատուհան մը կը բացուի՝ ուրկէ իր անցած կեանքին ու իրեններուն արդէն իջեւանը հասած կարաւանին ամբողջ ճամբան կը դիտէ: Ամփոփուած ինք իր մէջ՝ ինչպէս մանուկը լճի մը եզերքէն իր պատկերին վրայ ծոած՝ կ'երազէ այն տարիները ուր մատաղ աղջիկ մը ինք, գուցէ բազմաթիւ եղբայրներու մէկ հատիկ քոյրը, աչքի լոյսը իր մօրն ու պապուն, սիրուածը, անուշն էր ամենէն: Յետոյ իր նշանտուքը, սիրոյ ու գրգանքի տարիները. ու աւելի ասդին՝ մօր պաշտամունքն ու տառապանքը, արցունքն

ու երջանկութիւնը. իր զաւակներուն մանկութիւնը, երիտասարդութիւնը, վերջը վերջը՝ իր պառաւութիւնն ու զրկանքները եւ զգացած բոլոր անպատմելի զգացումները: Բայց չէ՛, յիշատակի խաբէական խաղովը կ'երազէ պահ մը թէ իրաւ անգաւանալի բոլոր այս անցեալի բաները այսօրուան իրականութիւնն են, եւ թէ ինք երբեք մինակ չէ, ծերացած չէ, հին ուժն ու կորովն ունի, հին սիրելիներն ու հին օրերը ունի:

... Եւ ահա այդ գեղածիծաղ ու ժպտուն տեսիլքին վրայ չեմ գիտեր ինչ անձանօթ ձեռք մը, ճիւղիկ վայրագ անգթութեամբ՝ սեւ ծածկոց մը կը քաշէ ու երազը յուղարկաւորութեան կը փոխուի, որուն առանձին մեղելթաղը ինքը, պառաւը կը մնայ յիշատակի գերեզմանոցին մէջ:

Կը դառնայ մանիչը, դարձնելով ճախարակին հետ՝ տխուր յուշագրքին թերթերը, կեանքի չորս եղանակներուն օրերն ու ամիսները, մինչ մերկ պահին վրայ պառակն էլզուստուերը՝ շարժուն գիակի մը անազգեցիկ երերտուքով կը ծաղրէ անոր շարժուածքը եւ կրակարանին թաքուն մէկ տեղէն անքուն ծղրիդ մը անոր բերնին կը ծռկնայ:

Ու այդ տունէն ներս մարդ չի մտներ, օտարի ոտնաձայն այդ սեմին վրայ չի հնչեր, եւ սեւեռակին գուռը որ կը ճղբայ, երկրորդ շունչն է՝ իբրեւ յետին ընկեր պատաւին, սեւ կատու մը. կ'զելով տափակնալով ներս կուգայ ու կ'անցնի թոնիրին եզերքը, ոտները տակը ծալելով կը պառկի: Միեւնոյն այդ գունէն վազրի մը բոլոր զգուշութեամբ, պառակն միտքը կ'իջնայ ահա նորէն թէ ինչպէս Մահը ներս մտաւ, թաթերուն ծայրին վրայ կոխելով եւ մէկիկ մէկիկ շալակն առած կտրիճ թէ հասուն կեանքերն այս տան ու սերունդին՝ հեռացաւ գնաց... Կը զգայ եւ անձկանքով կը սպասէ իր կարգին, իրեն որ փոխադրուող ընտանիքի մը մէկ անպէտ իրն է հին տանը մէջ մոռցուած՝ դա՛խեցիէ պուտուկին ու կուժին հետ:

Կերկերածայն, փտտած դարձիկի հնչիւնով ձայն մը ձգած՝ անցեալ ժամանակի երգերէն կ'երգէ, պանդուխտի երգը յաճախ՝ սիրականի հասցէին, մահուան գետովը բաժնուած այս աշխարհի ափունքէն դէպ ի մէկալը. պանդուխտը ինք ու սիրականներն ալ նոյնքան օտար, կորսուա՛ծ քարտեալներ որոնց հետքը այդ կոյր աչքով կը փնտռէ ու չի կրնար, չի՛ կրնար գտնել հէ՛ գպառաւը: Կը փնտռէ, կը խարխափէ աւերակ առանձնութեանը մէջ ուր ծղրիդին ձայնը դէմ կը բռնէ իր ողբին, ուր երբեմն սարդը իր ցանցին վրայ վազած ատեն քանի մը հողեր կը թափէ առիքէն եւ միայն ու միայն ընկեր, զաւակ, ամուսին, թո՛ռ՝ այդ ճախարակն է, այդ կողկողացող անխմատ աղաղակն է՝ իրեն:

Պահ պահ հաղիւ գլուխը վեր առնելով դէպ ի նեղկիկ լուսամուտը կը նայի՝ իմանալու համար

Թէ լոյսը պատուհանին խղզած թուղթերը կը ճերմկցնէ՞ արդեօք . ու բերանաբաց յօրանջուտով ուսերուն եւ աչքերուն վրայ նստող քունը փախցնելէ ետքը՝ նորէն գլուխն իր առջեւ կը ծռէ , հեղ մըն ալ միտքը առջիտեսիլքին ձգելով՝ հոգին սիրելիներու յիշատակին վրայ կը կախէ : Եւ այդ երազները մերթ կը ցնցեն զինքը . ինչու որ գերեզմանի կապանքներուն տակ մեռելներու հետ հոգեխօսութիւնն է որ կ'ունենայ , մշուշապատ ցնորքի մէջէն մունջ խօսակցութիւն մը , հոգիի կարօտալից հայեցողութիւնը դէպ ի անիրական ձեւերը , դէպ ի ստուերային մարմինները :

Ժամերը կը սահին ու զարթումի առաջին նշանները կը լսուին . օրօրոցի անհանգիստ կամ մօր ծիծը կարօտցող երեխաներու սուր , բնդհատ լացը եւ ժամուն կոչնակին վանդիւնները՝ որոնք նոր օրուան հանգիստէր բացումը կը յայտնեն : Մանիչը կանգ կ'առնէ , պառաւը իր երեսները խաչակնքելով դէպ ի եկեղեցին կը շտկուի , փողոցին մթութեան մէջէն , հոն իր օրհասականի աղօթքն ընելու , բաց բազուկներով խնդրելու ուշացած Մահը՝ որ իր զբոնակն ալ ծեծէ , մարէ այն ճրագը որուն իւղը հատեր ու ա'լ չպիտի լեցուի , եւ որ կը պըլպըլայ բայց լոյս չիտար :

Եւ առտու մը , իր ջայրին առջեւ , գուցէ բամպակի թելը զեռափին մէջ , սկսող քունն չլմնցուցած՝ գլուխը ճախարակին դէմ հարս ու փեսի ողջագուրանքով պսակուած , գանգանեն ուրիշներ , ամենքն ալ օտար , որովհետեւ իր թելը հասած պիտի ըլլայ , թէեւ ջայրինը կիսաւարտ :

ՀՐԱԶ



Ա Ն Չ Ա Ր

—  
ԹՈՅՆԻ ԾԱՌ  
—o—

(ԱԼԵԲՍՍՆԴԻ ՊՈՒՆԿԻՆ)

Չոր , ամայի անապատում ,  
Յաւերթ կիզող արեւի տակ  
Անչարն , ասես , անեղ պահնորդ ,  
Կանգնած է լուռ ու մէն մենակ :

Անապատի ծարաւ կուրծքն է  
Լի զայրութիւնը նորան բուսցրել .

Ե'ւ ոստերի կանաչն անկեանք ,  
Ե'ւ արմատը թոյնով լեցրել :

Թոյն է ծորում չոր կեղեւից ,  
Հալչում տօթից միջօրէին .  
Եւ սառչելով , թանձրը , փայլուն  
Խէժի փոխվում երեկոյին :

Մահու ծառին շին մօտենում  
Ո'չ մի գազան , ո'չ մի թռչուն .  
Լոկ մըրրիկն է հետը չըփվում  
Եւ վարակուած թրջում հեռուն :

Եւ թէ ամպն է անձրեւ ցողում ,  
Թափառելով ծառի գըլխին .  
Անձրեւն իսկոյն թոյն է կըտրում ,  
Ու ոստերից թափվում գետին :

Բայց տես մի օր մարդը մարդուն  
Իշխանական խիստ հայեացքով  
Ղըրկեց թոյնտու այն ծառի մօտ ,  
Որ թոյն բերի նա իւր ձեռքով :


Եւ նա անխօս՝ ճամբայ ընկաւ ,  
Հընազանդած խիստ հայեացքին .  
Եւ յետ զարձաւ երկրորդ օրը  
Առաւօտեան—թոյնը ձեռքին :

Բերաւ նա թոյն—խէժ մահաբեր ,  
Եւ ոստ՝ չորցած տերեւներով .  
Նորա ճակտից մահու քըրտինք  
Թափվում էր սառն կաթիլներով :

Բերա'ւ . . . գողա'ց . . . եւ թուլացած՝  
Երեսն ի վայր փըռուեց գետին .  
Չոհուե'ց թըշուառ , անոյժ ըստրուկն  
Իւր զօրաւոր անյաղթ պետին :

Իսկ պետն հըզօր՝ բերած թոյնով  
Իւր հընազանդ գէնքը սըրեց .  
Եւ այդ գէնքով մահ սըփռելով ,  
Շատ աշխարհներ առաւ , տիրեց :

(Թարգմ. ուսու.) Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ



# ԱՐՈՒԵՍՏԻ ԷԶԵՐ

## ՆՈՎԵԼԼԻ

Անահիտի Գ. Թուով խօսած էինք Նովելլի մասին եւ իր խաղացած դերերուն մէջէն նշանակած էինք Շալոքի դերն իբրեւ իր ամէնէն կատարեալ ստեղծագործութիւնը: Այս Թուով կը հրատարակենք իտալացի մեծ արուեստագէտին լուսանկարը այդ դերին մէջ: Պատկերը հրաշակերտ մըն է ինքնին, Բամպրանտի Հրէաներուն նշանաւոր շարքին մէջ մտնելու արժանի: Նովելլի յաջողած է իր դէմքին տալ նոյն ինքն դիմակը Հրէութեան, հակասական խառնուրդովը անպատկառ հեղնութեան, յամառ հաւատքի, վիթխարի գծովութեան ու դիւտոյին



ՆՈՎԵԼԼԻ ՇԱՅՈՒՔԻ ԴԵՐԻՆ ՄԷՋ

խորամանկութեան: Երեք տարի անդազար ուսումնասիրելէ, ցեղին բոլոր զանազանութիւնները մօտէն քննելէ ետքն է սր Նովելլի կազմաւորած է իր տիպարը: Այս Հրէան սակայն, ընդհանուր Հրէութիւնը խտացնելով հանդերձ, Վենետիկի Հրէան է մասնաւորապէս, կերթօներուն շրջանին Հրէան, զոր Նովելլի կրցած է գրէթէ նոյնութեամբ գտնել Վենետիկի այսօրուան Հրէայ ծերունիներու մէջ որոնք—ինչպէս եւ Պոլսոյ ծեր Հրէաները—անփոփոխ պահած են հին հոգին, հին դէմքը եւ նոյն

խոյն հին հագուստները:



### ՎԱՐԴ ԵՒ ՍՈՒԱԿ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (\*)

(Շար.)  
Ե

Արդ, քիչ մը վստահութիւն ստանալով, սոխակը սկսաւ ամէն առտու իր քաղցրանուագ եղանակովը Վարդարանը հնչեցնել. այնպէս որ առհասարակ քաղաքացւոց մէջ շշուէն ինկաւ. չէին գիտեր թէ ո՞վ է կամ որո՞ւն սիրահա-

(\*) Տես Անահիտ, քիւ 1.

րուած է, բայց ատիկա հոգ չէին ընել, եւ ձայնին քաղցրութեանը զմայլած՝ ախորժանքով ունկնդիր կ'ըլլային:

Սակայն, ամենագեղեցիկ Անթառամ-Վարդը Ձեփիւտին պատմութենէն հասկցաւ թէ Սիրահար-Սոխակը եկած է. բայց չգիտնալ ձեւացնելով, սուրհանդակը կանչեց եւ ըսաւ՝ «այս ի՞նչ վրդովմունք է որ քաղաքս ինկեր է, եւ ո՞վ է ան որ այսքան համարձակութեամբ Վարդարանը կը հնչեցնէ. միթէ անքնա՞կ կը կարծէ այս տեղը. շուտով գնա՛ փնտռէ գտիր զանի եւ հասկցիր թէ ո՞վ է, որո՞ւն սիրոյն

համար այսքան համարձակ կ'ազդակէ , աղէկ մը տեղեկանալով եկուր ինծի իմացո՛ւր :

Գնաց Ձեփիւոք , եւ շատ փնտռելէ ետքը՝ դոնապանին տանը վերնայարկը գտաւ զայն , ճանչցաւ իսկոյն եւ բարեւելով ըսաւ . «Բարով ես եկեր , ո՛վ սիրահար աղնիւ երիտասարդ . ի՞նչպէս գտար այս քաղաքը եւ ի՞նչ կերպով կրցար մտնել այստեղ , եւ ի՞նչպէս համարձակեցար երեւալ եւ եղանակել հոս :

«Ըսի քեզի որ շատ նեղութիւն պիտի քաշես . թէպէտեւ ուրախ եմ որ ողջամբ հասեր ես , բայց վախնամ շատ տառապանք պիտի կրես , վասն զի ահա մեծ քրթմնջիւն ելեր է քաղաքին մէջ , եւ տիրուհիս զայրացած՝ կ'ուզէ գիտնալ թէ ո՞վ է ան որ այսքան վրդովմունք կը հանէ հոս» :

Սոխակը պատասխանեց . «Բարերար տէր , միթէ ես ինքնիրե՞նս եկայ այստեղ . ամենակարող Սէրը զիս հոս քաշեց , եւ ո՞վ է որ անոր հրամանին դէմ պիտի դնէ . ան ուժ տուաւ նեղութեանց տոկալու եւ ան առաջնորդելով ինծի ուղեցոյց եղաւ . եւ ահա անոր հրամանին կը հնազանդիմ :

Սուրհանդակը , ա՛լ ատեն չուենալով խօսակցելու , զարձաւ դշխոյին իմացնել թէ նոյն սիրահար երիտասարդն է զոր անտառին մէջ տեսած էր :

Թէպէտ շատ ախորժ զգաց թագուհին , բայց անոր սիրոյն հաստատութիւնը փորձելու համար , անայցայլ դէմք մը առնելով սուրհանդակին ըսաւ . «Գնա՛ եւ իմ կողմէս ըսէ իրեն թէ իր չափէն վեր է այդքան բարձրը ձգտիլը եւ իմ անուես բերան առնելը , սակայն որովհետեւ իմ մարդասէր բնութեանս չի յարմարիր ինծի մօտ եկողը խոչտանգելով վտարել , ուստի կը հրամայեմ որ լռիկ ու հանդարտ կեանք մը վարէ , որպէսզի չփոթութեան առիթ ըլլալով ամբոխը իրեն դէմ չյարուցանէ :»

2 .

Այս անորոշ ու երկզիմի պատուէրը իմանալով , Սոխակը տարակուսանքի վարանման մէջ ինկաւ , եւ չէր գիտեր թէ ի՞նչ մտածէր : Լուել չէր կրնար , երգել կը վախնար , եւ հանգչելու կարողութիւն չուէր . սակայն կամայ ակամայ ինք իր վրայ ճնշում բանեցուց եւ դշխոյին պատգամներուն հնազանդեցաւ :

Այսպէս թագուհոյն հրամանովը պարաւանգուած քանի մը օր լուռ մնաց , սրտին խորէն կը հառաչէր , եւ գիշերն ի բուն կ'ողբար կը հեծէր եւ կը խորհէր հնարք մը գտնել այս վիճակէն ելլելու : Վերջապէս տեսաւ որ լռելով համբերելով ոչինչ յառաջ կուգայ . որոշեց նամակ մը գրել եւ զրկել թագուհուոյն , որ թերեւս ի գութ շարժելով իրեն թոյլտուութիւն չնորհէ գոնէ երգելով իր օրերն անցընելու : Այս ակնկալութեամբ Շուշան-Մաղկէն թուղթ մը առնելով եւ լեզուին գրիչը արցունքներուն արիւններանգ մեղանին մէջ թաթխելով սա ձեւով գրեց իր նամակը .

«Ո՛վ տիրուհի իմ կեանքիս , լո՛յս ու զարդ աշխարհի , դուն որ զուարճութիւն ես աչքին , բերկրութիւն սրտին , եւ քու անուշ բուրմարդ՝ կենդանութիւն ոնգունքին , նայե՛ տառապանքիս եւ գթա՛ իմ խեղճութեանս , վասնզի մանկութենէս ի վեր սիրոյ գերի ըլլալով , տունէս ու ժառանգութենէս բաժնուած եւ դաշտերն ու լեռներն ինկած , անտաններուն մէջ կը փնտռէի իմ սիրոյս առարկան՝ զոր չճանչնալով առանց գիտնալու կը սիրէի . իսկ հիմա , ճշմարիտ սիրելին գտնելով եւ ամենաչքնաղ տենչալի անձիդ անուշ բուրումը առնելով , կ'այրիմ կը տոչորիմ . եթէ արժանի չեմ քու դէմքիդ գեղեցկութեանը նայելու , գոնէ թոյլ տուր ինծի որ քու սէրդ երգելով հանգչեցնեմ իմ հոգիս , որ ահա պատրաստ է քու սիրոյդ կրակին մատաղ ըլլալու : Սրգ՝ իմ կեանքս ու մահս քու ձեռքդ ըլլալով , հրամայե ինծի՛ ապրի՛ մ'կամ մեռնիմ : Ո՛ղջ կեցիր :»

Աւարտելով եւ կնքելով նամակը , տուաւ դշխոյին գործակալ թղթատար Շուշան-Մաղկին , որ միշտ ձեռքը պատրաստ տոմարներ ունէր եւ այս պաշտօնին կոչուած էր , եւ խնդրեց որ զայն թագուհուոյն տանի : Վարդը Սոխակին նամակը ընդունելով , կարգաց եւ հաճեցաւ անոր պատասխանել , եւ վարդագոյն թիրթ մը առնելով անոր վրայ սա ամոքիչ խօսքերը գրեց .

«Գիտցի՛ր , ո՛վ սիրահարներու քաջ ախոյեան , թէ իմ բարեբարոյ բնութեանս յատկանիչն է հիւրընկալ ու ներողամիտ ըլլալ ինծի եկողներուն , մանաւանդ անոնց որ իմ հրամանիս կը հնազանդին . բայց այն որ կը յուսայ ինծի հետ ո եւ է հաղորդակցութիւն ունենալ , պէտք է որ երկայնամիտ , հեզ եւ ժուժկալ ըլլայ եւ համբերութեամբ սպասէ իմ

հովանւոյս տակ սահմանադրուած ժամանակը՝ որպէսզի վարձատրուի. ուրիմն խոհեմ եղիք եւ զգոյշ քու ամէն մէկ վարմունքիդ մէջ, որ չար նախաձեռներէն վտանգ մը չկրես : Ո՛ղջ կեցիք : » Եւ տոմարը կնքելով տուաւ Շուշանին որ Սոխակին հասցնէ :

Սոխակը, Վարդին նամակը առնելով, մեկուսացաւ եւ անոր անուշ բուրմունքէն զուարթացած՝ ինչպէս գինիով, կը հոտոտէր զայն, սրտին ու աչքերուն վրայ կը դնէր եւ կ'ըսէր «Ահա դեղ ամենաբուժ՝ սպեղանի վէրքերու, եւ անդիշեր լոյս՝ աչքերն» . եւ անդադար համբուրելով ու հոտոտելով կը դիտէր, եւ չէր համարձակեր մատը կոխել՝ կնիքը բանալու : Հուսկ ապա, զողջունն ձեռքով նամակը բանալով, կարգաց, եւ անոր յուսադրական աւետաւոր խօսքերէն ուշաթափ ըլլալով գետինը ինկաւ : Յետոյ, ոտքի ելլելով, սաստիկ ուրախութենէն խելքը գլխէն թռած, գիշերն ի բուն այնպէս Վարդարանն իր քաղցր եղանակովը հնչեցուց որ պզտիկներն ու մեծերը սքանչացած մնացին :

ՉԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐ ԽՕՃԵՆՑ ԵՐԵՒԱՆԾԻ

(Շարունակելի)



„ՄՈՒՐՔԻՆՆԵՐ“

ԵՒ ՌՈՒՍԱՀԱՅ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՒՆԸ



Մարձը, որուն տասնամեակը տօնուեցաւ մէկ քանի ամիս առաջ, ուսասհայոց երրորդ մեծ ամսաթերթն է, Հիւսիսայիսայէն ու Փորձէն յետոյ, եւ եթէ այդ երկու նախորդներուն հըռչակը չէ ունեցած ոչ ալ փայլը, պէտք է խոստովանիլ թէ անոնցմէ աւելի ընդարձակ ծրագիր մը ունեցած է եւ աւելի տեւական կըրցած է ըլլալ : Առաջիններուն փայլը կը բացատրուի մէկ քանի մեծ անուաններով, Նալբանդեան, Բաֆֆի, Քամառ-Քաթիպա, Պալասանեան, Մկրտիչ Էմին, Քերոբէ Պատկանեան, անուաններ որոնք բովանդակ ազգին համար ունէին պայծառ ու հզօր նշանակութիւն մը . ասկից զատ, Հիւսիսայիսայն ու Փորձը, երեւան գալով այնպիսի շրջաններու մէջ ուր գեո ոչինչ կար հաստատուած, սեղծած են որոշ շարժում մը, Հիւսիսայիսայը՝ ազատական, հակակղերական եւ բարձրօրէն ազգասիրական ձգտումը արթնցնելով, եւ Փորձը գրական ու պատմական քննադատութիւնը հիմնելով ու բարձր գրականութեան ճաշակը զարգացնելով :

Մարձը եկած է շարունակել այդ սկսուած գործը : շարունակողի գերը, աւելի դժուարին, միշտ նուազ փայլուն կ'երեւնայ, եւ այն բոլոր գրողները որ Մարձին շուրջը հաւաքուած են, հակառակ որ անոնցմէ ոմանք ուսասհայոց արդի լաւագոյն տաղանդներն են, նախորդ անուաններուն մեծադուրդ ժողովրդականութիւնը չեն ունեցած . Իրիկն քննադատականները, Քամառ Քաթիպայի երգերը, Բաֆֆիի ուրուագծերը՝ Փորձին մէջ, Նալբանդեանցի սուր քրտնիկը եւ Նազարեանցի խանդավառ գաղափարապաշտութեան յօդուածները՝ Հիւսիսայիսային մէջ, ահա այն էջերը որ պակասած են Մարձին . բայց ասի Մարձին կարելի չէ մեղադրել, որովհետեւ այդ էջերը եթէ Մարձին մէջ երեւցած չեն, Մարձին զորք ալ ո եւ է տեղ, ուսասհայ մամլոյն մէջ, գոյութիւն չեն ունեցած այս ամբողջ վերջին շրջանին : Միակ մեղադրանքը զոր կարելի է ուղղել Մարձին, անհաւասարութիւնն է անոր պարունակութեան . Մարձը, նուազ թանձրածաւալ եւ աւելի ընտրուած ու հոծ : պիտի շահէր մեծապէս . Հիւսիսայիսայն ու Փորձը մինչեւ այսօր ծայրէ ծայր կը կարգացունէին խորժով . Մարձի տասնամեայ հաւաքածոյին համար նոյն բանը կարելի չէ ըսել . այնտեղ կը զաննէք ուսասհայոց արդի գրականութեան լաւագոյն էջերէն մէկ քանին, ինչպէս Շիրվանզադէի Արսէն Դիւսիսայեանը, Փափագեանի վիպակները, Պոռչեանցի Ցեցերը եւ Բղղիկ, Աղաեանցի յուշագրութիւնները, Լէօի Կորածները, Մատուրեանի, Արամ Չարըզի, Իսահակեանի, Շանթի, Դեմիրճեանի բանաստեղծութիւնները, բայց միանգամայն ահագին դէպ մը անմարտելի ուսումնասիրութեանց, ծանրատաղտուկ վէպերու եւ անհամ բանաստեղծութեանց : Այս գիտողութիւնը ներկայացնելէ յետոյ կը փութամ սակայն իսկոյն աւելցնել թէ երբեք ատով չեմ արդարացներ այն սիւտեմական հակակրութիւնը զոր Մշակը կը ցուցնէ Մարձին եւ որ կը զարմացնէ զիս անկողմնակալ քննադատութեան թերթի մը կողմէն՝ ինչպէս որ կ'ըմբռնեմ Իրիգոր Արժրունիին հիմնաբկութիւնը : Աններելի է չխոստովանիլ որ Մարձը իր կարեւոր տեղը ունի կովկասեան հայ գրականութեան մէջ, եւ անոր ուզողուած քննադատութիւնները պէտք է նպատակ ունենան ոչ թէ զայն ուրանալ ու չքուցնել, այլ զայն մղել կատարելագործուելու : Եւ այդ անիրաւ հակակրութիւնը, որ Մարձի տարածմանը արգելք ըլլալու չափ յառաջ գացած է, արժանիք մը եւս կ'աւելցնէ Պ. Արամյանեանցին որ, հակառակ նիւթական անձուկ պայմաններու, հակառակ անխնայ շարունակական հալածանքի մը, կրցած է, գեղեցիկ յամառութեամբ ու անձնուիրութեամբ մը, տոկալ եւ իր գործը կանգուն պահել : Ըսի թէ Մարձը ընդարձակած է նախորդ երկու մեծ ամսաթերթերուն ծրագիրը, եւ ատի ամենէն նշանակելի

արժանիքն է Մարմին : Սկիզբն ի վեր հայ գրականութեան խոշոր թերութիւնը եղած է չափազանց սեղմուած մնալը ազգային ու տեղական շրջանակին մէջ , չափազանց քիչ հազորդակցութեան մէջ մտնելը մարդկային ընդհանուր մտաւորականութեան հետ : Մեր հին մառնազիրները հայ եկեղեցիէն ու Հայոց պատմութենէն շատ քիչ անպամ դուրս ելած են : Նոր ժամանակներն երբ մէջ , աւելի ջանք ցուցուցած են Հայք , մանաւանդ արեւմտեան Հայերը , օտար մտքին հետ շփման մտնելու , բայց այդ ջանքերը մասնաւոր գոյն մը պահած են , զեռ չեն ընդհանրացած եւ զեռ չեն հասած հարկաւոր ընդարձակմանը : Արեւելեան Հայոց մէջ , Հիւսիսային ու Փորձն են որ Շիլլէրի , Լերմոնթոֆի թարգմանութիւններով եւ մէկ շարքի եւրոպական հարցերու վրայ ուսումնասիրութիւններով այդ ճամբան բացին : Մարմնը նպաստած է այդ ճամբան ընդլայնելու : Պ . Արասխանեանց , Լայրցիկ ու Բարիզ ուսում առած համալսարանական մը , եւրոպացած մտքով Հայ մը , իր ամսաթիւթիւն առաջին թուոյն մէջ իսկ իր հիմնարկութեանը իբր գլխաւոր նպատակ կը յայտարարէր ճիշտ այդ ուղղութեան զարգացումը : «Մինչեւ այժմ , կը գրէր , մեր հրապարակագրութիւնը փակուած է եղել գաղափարների համեմատապէս նեղ շրջանի մէջ , նորան զբաղեցնող խնդիրները եղած են Հայք՝ որպէս իր ազգի անդամ , որպէս կրօնական համայնքների անդամ , եւ հայ լեզուն , կրօնքը եւ եկեղեցին իրենց յարաբերութիւններով , եւ վերջապէս զբարոցը : Ամէն բան ինչ դուրս է այդ շրջանակից , հայ գրականութիւնից մեռողը սովորած է համարել ոչ իր խելքի բան , եւ ոչ իր իրաւունքի բան : Այսօրուանից հայկական գրականութիւնը իր գիրկն է առնում Մարմն անունով նորամին ամսագիրը : Նա աշխարհ է գալիս , երբ քանի տարիներից ի վեր հայ հասարակութիւնը մի ամսագրի հրատարակութիւնը կարեւոր է համարում , երբ հայ գրական շրջանները նրան անհրաժեշտ էին գատում . . . Ամէն անգամ երբ հայ գործողը կամեցել է մամուլի միջոցով արթնացնել մեր ազգի թմրած , հնութեան փոշիով ծածկուած մտքերը , բացել նրա աչքերը՝ կատարուող իրողութիւնը տեսնելու համար , ամէն անգամ երբ ուժգին պարկերով մամուլը կարողացել է հայ ազգի միտքը իր առանձնութիւնից դուրս բերել եւ չփել նրան ընդհանուրի հետ , գորանով իսկ ցոյց տալ նորա համեմատական ուժը՝ ընդհանուր մարդկութեան ծառայելու եւ մարդկութիւնը իրան ծառայեցնելու , այդ ամէն անգամները կազմած են մեր ժողովրդի զարգացման մի մի շրջանները» :

Եւ Պ . Արասխանեանց իր խոստումը կատարած է : Մարմնի մէջ երեւցած են ստուար թուով տեսութիւններ գիտական , ընկերական , իմաստասիրական , գեղեցկագիտական , գրական հար-

ցերու մասին , թարգմանութիւններ Լերմոնթոֆի , Բուշքիւնի , Հայնէի , Սէնքիէվիչի , Կեօթէի , Մորասանի , գործերու ուսումնասիրութիւններ օտար մեծ գրադէտներու վրայ . այդ ուսումնասիրութիւններն ու տեսութիւնները անթերի չեն միշտ , բայց էականը ինծի համար սա իրողութիւնն է թէ Մարմն է եղած այն հայ առաջին ամսաթիւթը որ այսքան ընդարձակ ու լայնորի ծրագիր ունենայ : Այդ ծրագիրը կրնայ շատ աւելի փայլուն կերպով գործադրուել . եւ ես ուրախ պիտի ըլլայի որ Պ . Արասխանեանց աւելի մեծ տեղ տար օտար մտքի արտայայտութեանց , եւ անոնցմէ միշտ կարեւոր ընտրել կարեւորագոյնները : Ո՛րքան հրաշակերտներ կան որոնց թարգմանութիւնը չունենալու ամօթալի կացութեանը մէջ ենք : Ինչպատարար , արեւմտեան Հայք , Պոլսոյ , Իզմիրի եւ Վենետիկի թարգմանութիւններով , շատ աւելի թուով գործեր հայացուցած են իտալական ու ֆրանսական գրականութիւններէն որ իրենց մասնաւորապէս մատչելի են , քան ուսահայք՝ ուսական ու գերմանական մատենագրութիւններէն որ իրենց աւելի մօտէն ծանօթ են . իսկ անգլիական գրականութիւնը , որուն կարեւորութիւնը ծիծաղելի պիտի ըլլար բացատրել , գրեթէ ամբողջապէս անծանօթ է օտար լեզու չգիտցող Հայերու : Ռուսահայք նախ պարտաւոր են ուս գրականութեան հրաշակերտները հայացնել , գործ մը զոր միայն իրենք կարող են կատարել , եւ որով օգտակար եղած պիտի ըլլային ընդհանուր հայութեան . ուս քաղաքակրթութիւնը Ասիոյ վրայ տարածուող մտաւոր տիրական զօրութիւնը ըլլալու սահմանուած է , եւ ուս մտածումն ու ուս արուեստը պէտք է ծանօթ դառնան Հայերու ամբողջութեանը . անհաւատալի է որ Կոկոլ , Տասթալեյսկի , Թուոկենիֆ , Թալստոյ , Կոնչարոֆ , Չելտոֆ , հայերէն թարգմանուած չըլլան (երկու երեք փոքր կրատներու թարգմանութիւնը նշանակութիւն չունի , ու Հրատարակչական Ընկերութիւնը , որմէ այս ուղղութեամբ շատ բան կը սպասուէր , զեռ շատ քիչ արգիւնք տուած է) : Մարմնը կրնար նպաստել իր չափովը այդ ծառայութիւնը մատուցանելու հայ գրականութեան : Նմանապէս , գերման գրականութիւնէն ամենակարեւոր գործեր կան զոր Հայոց ճանչցնելը անհրաժեշտ պարտք մըն է : Այս բոլորը իրաւունք ունինք սպասելու ուսահայ երիտասարդութենէն որ Ռուսիոյ եւ Գերմանիոյ համալսարաններուն մէջ կը պատրաստուի եւ Մարմնը պատշաճ շրջանակ մըն է ուր այդ գործը կրնայ ձեռնարկուիլ : Թարգմանութիւններէն զատ , Մարմնը կրնար աւելի ընդարձակ տեղ մը նուիրել Ռուսիոյ , ինչպէս Գերմանիոյ , մտաւորական ու ընկերական կեանքին բոլոր երեսոյթները մանրամասնաբար հայ հասարակութեան ծանօթացնելու : Եւ այս ամէնէն յետոյ , կամ թերեւս ամէնէն առաջ , կայ խնդիր մը անհուն կարեւոր-

րութիւն ունեցող, եւ զոր գրական մեծ ամսաթերթ մը կարող է լուծել. այն է ոճի ու լեզուի խնդիրը: Ոճը, գրելու արուեստը, տակաւին քիչ մշակուած է արեւելեան Հայոց մէջ. անտարակուսելի է որ արեւմտեան Հայք — եւ ասի կը խոստովանին մեր կովկասի լաւագոյն գրնողերը — շատ աւելի բարձր զարգացման մը հասուցած են ոճը քան իրենց արարատեան ազգակիցները. արեւելեան Հայոց գրականութիւնը անհամեմատ կերպով աւելի հարուստ է իբր նիւթ, իբր ժողովրդական կեանք, իբր հայկական գրոշմ, բայց ոճը տկար մնացած է (բաց ի մէկ քանի բացառութիւններէ, ինչպէս Նալբանդեան, Պալասանեան, եւ անոնք՝ ալ «լաւ գրողներ» են եւ ոչ թէ սթիլիստներ, ) իրենց ամենէն տաղանդաւոր գրագէտներուն իսկ պատմուածքը երկարաբան, ոճը դանդաղ, ու ճապաղ է, բացատրութիւնը նրբութենէ զուրկ, պարբերութիւնը սպաշականօրէն կազմուած: Վերջերս սկսած են ջանք մը ցուցնել ոճը կուկելու, եւ կը կարծեմ թէ ատոր մէջ արեւմտեան Հայոց նոր գրականութեան ազդեցութիւնը մաս ունի, ինչպէս նաեւ այն գերը զոր կը խաղան կովկասեան գրականութեան մէջ մտած արեւմտեան Հայեր, ինչպէս Վ. Փափազեան: Բարձրագոյն գրականութեանց գլուխ-գործոցներուն թարգմանութիւնը լաւագոյն սատարը պիտի ըլլայ կովկասեան գրականութեան մէջ «գրելու արուեստը» զարգացնելու. եւ արդէն արեւմտեան հայք իրենց ոճին նրբութիւնը կը պարտին այն սերտ հաղորդակցութեան զոր ունեցած են իտալական եւ մանաւանդ ֆրանսական գրականութեան հետ, բազմաթիւ թարգմանութիւններով եւ շարունակական ընթերցումներով: Այսպիսի փափուկ աշխատութիւն մը կարելի չէ սպասել ուղղակի Պ. Արասխանեանցէն որ գրագէտ մը չէ, արուեստագէտ մը չէ բայց կը բաւէ որ ինքը զգայ այդ պէտքը, շեշտէ այդ ձգտումը, եւ ջանայ որ իր շուրջը խմբուած գրական ուժերը այդ ուղղութիւնը ձեռնարկեն եւ յոռաջ տանին: Ոճին հետ, Պեր կովկասեան պաշտօնակիցները պէտք ունին մշակելու իրենց լեզուն ալ, իրենց հայերէնը, որ դեռ խառնակ է ու կարծր. եւ արդէն լեզուին այդ անխնամ վիճակը ոճին անզարգացման գլխաւոր պատճառներէն մէկն է, լեզուն ըլլալով ոճին նիւթեղէնը: Արեւելեան հայերէնը անշուշտ սկսած է դադրել երբեմնի այլանդակ խառնուրդը ըլլալէ, ուր ամէն բան կար բաց ի հայերէնէ. օտար բառերէն ջանք մը կը տեսնուի խորշելու, օտար բացատրութեանց թարգմանութիւնները մէկդի կը գրուին, համաձայնութիւնը կը ձգտի ճկունութիւն առնելու. բայց գեռ սկզբնաւորութիւն մըն է. եւ հարկաւոր է ուժեղ օրինակ մը որպէս զի կովկասեան գրաբարասը հայերէն ըլլայ: Մուրճը կրնայ արգիլել որ իր մէջ հրատա-

րակուած յօդուածները պարունակեն ո եւ է օտար բառ, ո եւ է օտար բառ. մեր ուսանայ եղբայրակիցները հասկնալու են վերջապէս թէ հայերէնը ունի բոլոր հարկաւոր բառերը բացատրելու համար ամէն տեսակ գաղափարներ եւ թէ բաց ի այնպիսի օտար բառերէ որոնք հայացած կրնան նկատուիլ, հայ լեզուին դէմ հայհոյանք մըն է օտար բառերու գործածութիւնը: Մուրճը, եւ անոր շուրջը հաւաքուած կովկասեան գրագէտները, պիտի ուզեն այս գործը որոշողաբար եւ զիտակցաբար կատարել. այն ատեն, իրական նոր շրջան մը բացուած կ'ըլլայ արեւելեան հայոց գրականութեան համար, եւ Մուրճի յաջորդ տասնամեակը կը տօնուի այլապէս նշանակալից հանդիսաւորութեամբ մը:

Ա. 20ՊԱՆԵԱՆ

Յ. Գ. Ստացանք Արասի եւ Ազգագրական հանդիսի վերջին հատորները: Արասը Հայոց գեղարուեստական ամենէն կատարեալ հրատարակութիւնն է, եւ կը ցաւինք անկեղծօրէն որ Պ. Գուլամիրեանց ստիպուած ըլլայ դառն գանգամներ յայտնելու հասարակութեան անտարբերութենէն: Կովկասի հայութիւնը որ կը վայելէ նիւթական բարօրութիւն մը, Արասի պէս մէկ քանի հանգէս կրնար ապրեցնել, եթէ գեղարուեստական զգացումը անոր մէջ իրօք տարածուած ըլլար: Արասը անթերի հրատարակութիւն մը կը թուի ինձի ոչ միայն հոյակապօրէն ճաշակաւոր սպագրութեան եւ արուեստագիտական մասին իրական ճոխութեանը համար, որոնք զայն հաւասար կը կացուցանեն եւրոպական ամենագեղեցիկ հրատարակութեանց, այլ նաեւ իր գրական պարունակութեանը համար որ շատ զանազանեալ է, շատ լաւ խմբագրուած եւ կը ներկայացնէ հայերէն մը որ թերեւս ամենին մաքուր հայերէնն է զոր ուսուսանայք ունին այս վայրկեանիս վերջին թուոյն մէջ կը գտնենք, ի միջի այլոց, Տասթալվաքի «Մեռելներու տանը յիշատակաբանը» հրաշակերտին թարգմանութիւնը, պատմական ուսումնասիրութիւն մը «Բակուրան» ի ցեղակից հայկական թագաւորութեան վրայ, տեղագրական յօդուածներ Վանի եւ շրջակայից մասին, կենսագրական մը Յ. Պարոնեանի, պարսկահայոց վրայ տեղեկութիւններ, եւ բազմաթիւ նկարներ, գեղարուեստական վերաբրտագրութիւններ, Գործծիտի, Չանկովսքի, Ֆեթվաճեանի գործերու, Հայաստանի տեսարաններ, շէնքեր, տիպարներ:

Ազգագրական հանդիսը մասնագիտական հրատարակութիւն մըն է որ եկաւ մէկ քանի տարիներէ ի վեր կարեւոր պակաս մը լեցնել հայ մամլոյն մէջ: Պ. Լալաբանց որ իր ուսումնասիրութիւնները կատարած է ի Բարիզ, կը վարէ այդ հանդէսը գիտակից մտքի մը ձեռնհա-

սութեամբը : Ինչ որ Սրուանձտեանցներ , Տիրգրանեանցներ , Պոռոչեանցներ սկսած էին հաւաքել անգիտակցաբար , հեքեթները , երգերը , ինչ որ ՀԱՅ գոյնը կը կազմէ աշխարհիս մէջ հնուց մինչեւ այսօր , Պ . Լալանեանցի խնամքով այդ բոլորը կը ժողովի մէթոտով , կը դասաւորուի եւ քննութեան կ'ենթարկուի : Բացի գիտական կարեւորութիւնէն , այդ աշխատութիւնը ինծի համար ամենէն էական նպատակն է հայ գրականութեան մէջ ազգային դրոշմին ճոխացմանը . գրականութեան մը հիմը պիւղն է , իր երգերով , իր սուանգութիւններով , իր թնալիակն բանաստեղծութեամբը . ասանց անոր , գրականութիւնը , արուեստականօրէն արտագրուած , նման կ'ըլլայ ծովի վրայ ծածանող բոյսերուն , որոնց արմատը հողի մէջ չի մտներ , եւ որոնք անիմաստ ու խախտ հրապոյր մը ունին միայն : Ազգագրական հասկնալիս վերջին թիւը կը պարունակէ ընդարձակ ուսումնասիրութիւն մը Ն . Լալանեանի՝ Չանգեղուրի վրայ , Համչենցի հայեր՝ Յ . Մուրատեանցի , Հայ Բողաներ՝ Վ . Փափազեանի , Գիւրտերը իրենց տանը մէջ՝ Հ . Առաքիլեանի , Շիրակի ժողովրդական երգեր՝ հաւաքուած Մ . Իսահակեանի , մարդարանական ուսումնասիրութիւն մը Ն . Լալանեանցի , Օկիւսթ Գոնգի եւ գրական իմաստասիրութեան վրայ յօդուած մը Ս . Թառայեանի , եւն . :

Ա . Զ .



կը հրատարակենք ստորեւ երկու գեղեցիկ էջեր Պ . Է . Լավիսի , որ տմենէն յարգելի դէմքերէն մէկն է արդի Ֆրանսային՝ իբրեւ պատմաբան եւ իբրեւ դասախօս : Երկու էջերը կը թարգմանեն հոգին ու արամադրութիւնները «առողջ Ֆրանսային» : Առաջին հատուածը վերջաբանն է «Բըվիւ տը Բարիսի» մէջ երեցած յօդուածի մը ուր Լավիս , Պ . Չարլզ Տիւքի հետ խօսակցութեան մը ձեով , Անգլիոյ հանդէպ Ֆրանսայի իրաւունքները կը պաշտպանէր , երկու մեծ աղբերուն միջեւ համաձայնութեան մը անհրաժեշտութիւնը հաստատելու նպատակով : Երկրորդ իրոխտ ու յատակ ջրատարով ունի է Յեղափոխութեան Ֆրանսային՝ ընդդէմ՝ կրօնավարութեան եւ բռնութեան պաշտպաններուն :



ՖՐԱՆՍԱ. ԵՒ ԱՆԳԼԻԱ.

... Ահաւասիկ ուրեմն մեր պաշտպանողականը , ահաւասիկ մեր փաստերը ձերիններուն դէմ : Գիտէք որ կրնայինք , ասկից զատ , դանդատիլ , եւ շատ բարձրաձայն , ձեր պետական մարդոց մէկ քանիին վերջին վարմունքներուն ու մանաւանդ ձեր մամուլին

համար , եւ յիշել վկայութիւնը Պ . Ճոն Մորլիի որ կ'ըսէր Ֆաշոտայի խնդրոյն առիթով՝ «Չեմ կարծեր թէ ձիւնկոյուրեան անիծեալ տարեգրութեանց մէջ—եւ ասիկա կ'ըսեմ խօսքերս կշռելով—այսպիսի պարագայ մը երբեք ներկայացած ըլլայ ուր գրգռուած եւ պոռչտուքները պէտք եղածէն այս աստիճան անդին անցած ըլլան » : Վայրկեան մը կրցանք կարծել թէ մատ մը հեռու էինք պատերազմէն :

Պատերա՛զմը . բայց ո՞վ գիտէ , հակառակ ձեր նաւային գերադանցութեան , թէ պատերազմը ի՛նչ պիտի յառաջ բերէր : Աշխարհիս արդի վիճակին մէջ ուր այնքան զէնքեր պատրաստ են այնքան բաղխումներու համար , գիտենք այժմէն թէ ինչպէս պիտի սկսէր ան , բայց ի՛նչպէս պիտի աւարտէր : Թերեւս չափազանց ապահով կ'երեւաք ապագային վրայ : Վայրկեան մը յուսացիք թէ Գուպայի խնդրոյն մէջ ձեր բռնած ընթացքովը անդրատլանդեան նոր գորութեան սիրտը ու թերեւս նիզակակցութիւնը պիտի շահէիք , եւ թէ Ամերիկայի վրայ կրթնած , Եւրոպան պիտի հպատակեցընէիք ձեր կամքին . Նիքարակուայի խնդիրը այդ մասին ձեր երազները փարատելու վրայ է : Մասնացիք թէ երբեք , Եւրոպայի մէջ , ընդհանուր դաշնակցութիւն մը պիտի չկրնար կազմուել ձեզի դէմ եւ թէ շատ թարմ յիշատակներ Վոթի շղթան անանցանելի պարիսպ մը պիտի կացուցանէին . եւ այսօր , ձենէ ոմանք կը ծանուցանեն իբրեւ հաւանական ինչ որ երէկ ձեզի , ինչպէս մեզի , անհնարին կ'երեւար :

Թողունք այս վարկածները : Մեր խօսակցութեանը մէջ , հաճեցաք ինծի խօսիլ այն խաղաղասէր զգացմանցը վրայ զոր անգլիացի ժողովրդին ստուար մեծամասնութիւնը կը տածէ Ֆրանսայի համար . տարակոյս մի՛ ունենաք որ Ֆրանսայի ժողովրդին ամենատոտուար մեծամասնութիւնը փոխադարձաբար նոյն զգացումները ունի ձեզի համար : Գուք եւ մենք չափազանց շատ պատճառներ ունինք իբարու հեռ չկողուելու համար : Մեր շահերը մեզի խաղաղութիւնը կը պատուիրեն : Մենք Ֆրանսացիքս չենք կրնար ձեռքէ հանել զձեզ որ յաճախորդներն էք մեր Արեւմուտքի նահանգներուն երկրագործական բերքերուն , մեր գինիներուն , Ֆոանչ-Գոնթէի մեր վաճառքներուն , մեր Լիոնի մետաքսներուն , եւն : Բայց դուք ալ ձեզ կողմէն գիտէք թէ մենք իբրեւ յաճախորդ ձեզի առաւել քան երբեք հարկաւոր

ենք յորմէ հետէ գերմանական արուեստագործութիւնը այդ տարապայման տարածումն ստացաւ : Ձեզի պէտք են մեզի պէս յաճախորդներ , գերմանական խախուտ ապրանքին եւ ձեր պարկեշտ շինուածքին տարբերութիւնը գնահատել գիտցող : Ձեր նորածեւութիւնները մերայնացուցինք մենք : ձեր կերպաններն ու ձեր կարասիները կը գնենք : ձեր ածուխն ու ձեր մեքենաները մեր բոլոր նաւափերուն վրայ կուգան կը դիզուին :

Մենք ձեր լաւագոյն յաճախորդներն ենք , եւ դուք մեր լաւագոյն յաճախորդներն էք : Մեր գործերուն ընդհատումը պատերազմով մը — որ դժնդակ ու երկարատեւ պիտի ըլլար — ձեզի ինչպէս մեզի համար անհաշուելի հետեւանքներ պիտի ունենար :

Բւրիչ կարգի փաստեր ալ կան , պէտք ունի՞մ զանոնք յիշելու : Մենք երկու մեծ հին ժողովուրդներ ենք , ազատ , քաղաքակիրթ ու մարդկային՝ ամէն ժողովրդէ աւելի : Յարգենք զիրար փոխադարձաբար : Մեր միջեւ պատերազմ մը՝ հարուած մը պիտի ըլլար , թերեւս մահացու , ազատութեան , քաղաքակիրթութեան ու մարդկութեան : Նոր Պետութիւնները մեր հին բարքերն արհամարհելու ձեւն ունին : նոր քաղաքականութիւնը շատ բիրտ կը յայտնուի : Չայն զսպելու եւ մեղմելու համար , Ֆրանսայի եւ Անգլիոյ միացեալ ջանքերը հազիւ կը բաւեն :

ԷՆՆԵՍԹ ԼԱՎԻՍ

(Ռըվիւ Տը Բառի , 1 փետր . 99)

**ՃՇՄԱՐԻՏ ՖՐԱՆՍԱՆ**

(ՆԱՄԱԿ ԹԱՆ ԼՐԱԳՐԻ ՏԵԹԵՆԻՆ)

**Պարոն Տնօրէն ,**

«Ֆրանսական Հայրենիքին Դաշնակցութիւնը» շատ գեղեցիկ անուն մը ունի , բայց զոր իրաւունքը ունին իրենցը համարելու մեր այսօրուան բոլոր Դաշնակցութիւնները , որովհետեւ մենք ամենքս ալ ֆրանսական հայրենիքին ծառայողներ ենք , միմիայն կարծիքներով իրարմէ բաժնուած :

Նոր Դաշնակցութեան Յայտարարութեանը մէջ , բանաձեւ մը ինձի մտատանջութիւն կը պատճառէ . «Ջանալ պահպանել ֆրանսական հայրենիքին աւանդութիւնները , զանոնք

հաշտեցնելով գաղափարներու եւ բարքերու յառաջդիմութեանը հետ : » Կ'ուզէի որ ինձի սային անուանացուցակը այդ աւանդութեանց զոր կը փափաքին պահպանել , եւ որովհետեւ , ասկից զատ , գաղափարներու եւ բարքերու յառաջդիմութեան հետ զանոնք հաշտեցնելու խօսքը կ'ընեն եւ այդ տեսակ համաձայնութիւններ առանց փոխադարձ զոհողութիւններու անհնարին են , կ'ուզէի նաեւ գիտնալ որ մեծագոյն զոհողութիւնները աւանդութիւններէն կը պահանջուին թէ գաղափարներու եւ բարքերու յառաջդիմութեանէն :

Յայտարարութիւնը շատ կարճ է : «Նկատելով» ներէն յետոյ , հինգ ֆոռազ միայն . առաջինը յիշատակեցի . երկրորդը կը մերժէ ազանդի ոգին , ինչ որ լաւ բան մըն է . բայց ոչ ոք ինք իրեն կը խոստովանի թէ ազանդի ոգի ունի , եւ մենէ իւրաքանչիւրը կը կարծէ թէ իր փոքրիկ մատուռը մայր եկեղեցին է . երրորդ ֆոռազը առաջնոյն կրկնութիւնն է ուրիշ ձեւի մը տակ՝ «Ամբասցեալ համերաշխութեան ոգին որ պարտի զօգել , ժամանակին ընթացքին մէջ , մեծ ազգի մը բոլոր սերունդները : » Ժամանակին ընթացքին մէջ , շատ ժամանակ կը նշանակէ . եւ բոլոր սերունդները , շատ սերունդ ըսել է : Ես չէի ուզեր մինչեւ հերարձակ Գալլիան կ'ըլլէ , ոչ իսկ մինչեւ փրանկներու գալուստը . նոյնիսկ մեզի աւելի մօտ , սերունդներ կան որոնց հետ չեմ գգար , ոչ ալ կ'ուզեմ զբալ , ո եւ է համերաշխութիւն :

Այդ Յայտարարին մէջ , որ այնքան կարճ է , անցեալը գրեթէ ամբողջ տեղը կը բռնէ : Մտքիս բնական բերումովը , դէպ ի խեղճ ապագան կը ձգտիմ ես : Պաշտօնովս , գիտեմ անցեալին զօրութիւնը եւ թէ ան ինքզինքը արդէն լաւ կը պաշտպանէ ու պէտք չունի օժանդակ սենսիֆայի մը :

Ժողովուրդ մը միշտ շատ բան կը պարտի իր անցեալին , բայց անցեալը ամբողջովին բարերար չէ : Վերջապէս աւանդութիւնները հաւաքական սովորութիւններ են , եւ սովորութիւնները , եթէ բոլորովին չ'ընջեն ազատութիւնը , զայն միշտ կը սահմանափակեն : Երբ աւանդութիւնները լաւ են , զէջ գործելու ազատութիւնը կը սեղմեն , բայց անոնք կրնան շատ յոռի ըլլալ : Աւանդութիւններուն չպատշաճեցնենք՝ ամբողջութիւնը մէկանց դատելու գրութիւնը . նախահայրերու պաշտամունքը օգտակար չեղաւ Չինացիներուն : Մեզի

կ'ըսեն . տեսէ՛ք Անգլիան , ի՛նչ յարգանք աւանդութեանց եւ ի՛նչ զօրութիւն : Բայց ապահով չեմ որ այդ աւանդութիւնները անխախտ մնացած ըլլան եւ չեմ կարծեր որ անոնք միայն բացատրեն Անգլիոյ զօրութիւնը : Ասկից զատ կրնայի պատասխանել . Տեսէ՛ք Բոլոնիան , տեսէ՛ք Սպանիան . առաջինը հաւատարիմ էր , եւ երկրորդը է մինչեւ հիմա աւանդութիւններուն , շատ հին եւ շատ փառաւոր , կ'ըսէր Բոլոնիան եւ կ'ըսէ Սպանիան : Աւանդութեանց պաշտամունքը այդ երկիրներուն մէջ ուրիշ արդիւնքներ յառաջ բերաւ քան Անգլիոյ մէջ :

Յայտարարութեան «նկատելով»ներուն մէջ բառի մը առջեւ կանգ առի . «Համոզուած ըլլալով թէ այս յուզումը չի կրնար տեսել առանց վտանգելու ֆրանսական հայրենիքին կենսական շահերը , եւ մանաւանդ այն շահերը որոնց փառաւոր աւանդը ազգային բանակին ձեռքն է : » «Մանաւանդ»ը լուեկայն կը հասկցնէ թէ ուրիշ կենսական շահեր ալ վտանգուած են , բայց անոնց անունը չէ տրուած : Թերեւս եթէ անոնք անուանուած ըլլային , յայտարարութեան ներքեւ տեսակ մը ստորագրութիւններ պակսէին . թերեւս ալ , առանց «նանաւանդ»ին , ուրիշ ստորագրութիւններ ետ քաշուէին : «Մանաւանդ»ը , շատ ճարպիկ , մտահոգութիւն կուտայ ինծի : Հոս ալ նախընտրելի էր որոշ թուում մը ներկայացնել , որովհետեւ եթէ հաստատարապէս կենսական շահեր հաւասարապէս վտանգուած ըլլային եւ եթէ մոլորած հանրային կարծիքը զանոնք հակասական կը կարծէր , ձեռք առնուելիք գատը , այսպիսի փաստարաններու արժանի գատը , հաշտեցումը պիտի ըլլար : Հաշտեցումը , ահա՛ ինչ որ ստիպողական է , զբուռարին ու գովելի (որովհետեւ զժուարին) : Հաշտեցումը , ահա՛ կատարուելու գործը : Ես դարձեալ շատ գոհ եմ տեսնելով որ մտաւորականներու գործունէութեան մասնակցումը հետզհետէ կ'ընդարձակուի : Երկայն ատենէ ի վեր է որ հետու մնացիւր էին ռամկավարական կեանքէն եւ ընկերական գործունէութիւնէն , Միշլէ , բացատրելով հանդերձ այս ձեռքն պահութիւնը , ողբալի կը գտնէր զայն , եւ անոր հետեւանքները կը նշանակէր . իր ատենուան մտաւորականներուն համար սապէս կ'ըսէր . « Դատարարակութիւն մը այնքան մակերեւութային որ մեր մէջ միտքը կը նրբացնէ ի վրաս գործունէութեան կարողու-

թեանց , մենէ իւրաքանչիւրը կը դարձնէ կէս մարդ մը , մտաւոր կէս , որ ամբողջ մարդ ձեւացնելու համար , կը սպասէ միւս կէսին , բնագրի ու գործունէութեան կէսին : Ընկերական ապահարգանք որ մէկ ազգը երկուքի կը բաժնէ եւ երկուքն ալամուլ կը դարձնէ , երեւան կուզայ ամէն մէկ մտքի եւ ամէն մէկ հոգիի անկատարութեան , ապիկարութեան մէջ : » Յաճախ խոկացած եմ այս սքանչելի խօսքերուն վրայ :

Ամբողջ այս շարժումը , այս դաշնակցութեանց ստեղծումը , այս գումարումները , այս ճատերը , փրկարար են : Կը մազթեմ որ առիկա հետզհետէ աւելի ոգեւորուի եւ զինքը յարուցանող ախուր շարժառիթէն ետքն ալ կենդանի մնայ : Ազատութեան բարքերն են ատոնք : Եթէ աւելի առաջ այս բարքերը ունենայինք , այս երկիրն ինչպէս կ'ըլլայինք . չարքներ ու խայտատակութիւններ . քաղաքականութեան պաշտօնական ներկայացուցիչները պէտք է չթողուլ որ առանձին գործեն ու խօսին :

Ուրեմն ասպարէզ իջնող այս նոր մտաւորականները մասնաւորապէս բանակին դատը պիտի պաշտպանեն , մինչդեռ իրենց պաշտօնակիցները , որոնք առջի վայրկեանէն կուրի մէջ նետուեցան , աւելի արդարութեանը դատը պաշտպանեցին : Բայց պէտք չէ մտածել թէ արդարութեան այդ պաշտպանները բանակին թշնամի եղած ըլլան երբեք : Նախ ամենէն ստիպողական գործը ձեռք առին , ահա իրողութիւնը : Անոնք գիտեն որ Փրանսաութիւնը օր պիտի չկրնար կենդանի մնալ առանց բանակի եւ թէ չկայ բանակ առանց կարգաւորութեան ու օրինապահութեան : Կը սիրեն փառաւոր յիշատակները եւ իրենց մէջ անջինջ կը պահեն ախուր յիշատակները : Անոնցմէ շատերը , բանախօսութիւններով կամ գրքերով , երիտասարդութեան փոխանձած եւ յանձնարարած են դիւցազնական պարտութեանց եւ արդար պահանջմանց ժառանգութիւնը : Երեսուն տարիէ ի վեր անոնց սիրտը սպաւորէ :

Այն զազափարը զոր անոնք ունին բանակին վրայ՝ շատ բարձր է : Իրաւ է որ զայն չեն նկատեր իբրեւ զուտ ուժ մը ամէն գործածութեան յարմար : Չեն սիրեր սուրը ինքն իրեն համար , սուրը ինքնին , որուն կրօնքը կը քարոզեն մեր արեւմտեան քաղաքակրթութեան մէջ մոլորած մէկ քանի ֆեթիշապաշտներ , այլ պատկառանքով կը նկատեն իբր բարոյա-

կան անձ մը՝ մեր բանակը , ուր ամէն մարդ կը ծառայէ պարտականութենէ մը մղուած , պարտականութիւնը հանդէպ ֆրանսական հայրենիքին , ամենէն մարդկայինը հայրենիքներուն : Ինչո՞ւ մտաւորականները եռանդազին չսիրեն Ֆրանսայի սուրը : Միւս սուրերէն վեր , Անգլիոյ եւ Գերմանիոյ սուրերէն վեր , Ֆրանսայի սուրը , անանձնաշնորհութիւնը , փառքը , գեղեցկութիւնը ունի զգայնական մը եւ մտաւորական մը ըլլալու :

(Թան , 2 յուն . 99) էՌՆԵՍԹ ԼԱՎԻՍ



**ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ**

Պ . Գ . Մ . ՊԵՂԵՂԵԱՆ , նախկին երեսփոխան և ծերակուտական Բուսմանիոյ խորհրդարանին , այժմ խորհրդական՝ Վճռաբեկ Ատեանին , հրատարակուելու սահմանուած նամակով մը իր կարծիքը յայտնած է մեր «Պատասխանատուութիւնները» յօդուածին վրայ : Պ . ՊԵՂԵՂԵԱՆ , որ Բուսմանիոյ հնագոյն հայ գաղթականութեան մեծ ընտանիքներէն մէկուն կը վերաբերի և պահած է իր ցեղին համար ամենաջերմ սէր և հիացում , փայլուն անդամներէն մէկն է Բարիզի Մուրատեան և Հայկազեան վարժարաններուն մէջ պատրաստուած այն հայ սերունդին որ արտոգրած է Մելքոն խանը , Մատթէոս Մամուրեանը , Յովհաննէս Սաղբլը , Միքայէլ Փորթուզալը , ևլն : Կը հրատարակենք իր կարծիքը որ մեզի համար արժէք ունի իբր կարծիքը ձեռնհաս և անկաս անձնաւորութեան մը :

Պուրբէշ 11 փետր . 99

**Սիրելի բարեկամս ,**

Կարդացի ձեր վերջին նախյօդուածը Անահիթի մէջ : . . . Կարելի չէր աւելի պայծառ ամփոփում մը ներկայացնել այն զէպքերուն որոնք խեղճ Հայաստանին ժամանակակից պատմութիւնը կը կազմեն : Դուք իրերը մօտէն տեսած էք , այդ ողբերգականակերպութեան գլխաւոր հեղինակները ճանչցած էք , եւ այն առողջ գատողութեամբ որ ձեր յատկանիշն է՝ կրցած էք որոշել պատասխանատուութիւնները որոնք Չախչախիչ են : Ատի իմ ալ կարծիքս եղած է , եւ ատենով զայն հաղորդած եմ երկայն նամակով մը մեր Զուռղ բարեկամին . մենք հիւանդազին աճում մը ունեցանք «ազգասէր»ներու որոնք առանց ծանօթութեան , առանց իմացողութեան , կը կարծէին որ պարտականութիւն ունին

ազգին ծառայել՝ իւրաքանչիւրը իր ներշնչմանը հետեւելով եւ ջանալով ամէն բանէ առաջ իր դրացիին պահանջման ծրագրէն աւելի անգին անցնելու : «Ով որ շատ բան մէկէն կ'ուզէ գրկել , գէշ կը սեղմէ» . այս բարոյականը կ'ելլէ բոլոր այդ պայքարէն , որ հարուստ եղաւ դիւցազնութիւններով ու զոհարերութիւններով , բայց շատ սղքատ իբրիւ յղացում :

Ի՞նչ դժբաղդութիւն որ Նուպարի պէս մարդ մը ուղած կամ կրցած չըլլայ այդ շարժմանը գլուխ կանգնելու . շատ մը կեանքեր խնայուած կ'ըլլային , շատ մը զոհողութեանց առաջին առնուած կ'ըլլար եւ ձեռք կը ձգուէր ինչ որ բանաւորապէս հնարաւոր էր ձեռք ձգել :

Ուրիշ բան չեմ կրնար ընել բայց եթէ գովել զձեզ այն քաջութեանը համար զոր ունեցած էք մտածածնիդ արձակ համարձակ արտայայտելու : Արգէն ձեզ կը բզկտեն կարգ մը լրագիրներու մէջ . ցաւակցութեան արժանի չէք ատոր համար , շնորհաւորութեան արժանի էք :

Գ . Մ . ՊԵՂԵՂԵԱՆ



**ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ**

— 0 —

ՀԱՅԵՐԸ Ի ԲԱՐԻՁ .— Մելքոն խան , պարսկահայ մեծանուն զիւանագէտը , որ վեց եօթը տարի առաջ պաշտօնէ հեռացած էր Նասրէտալին շահին հրամանով եւ Բարիզ կ'ապրէր պաշտօնական գործունէութիւնէ քաշուած , վերջերս հրաւիրուեցաւ Պարսիկ կառավարութեան կողմէ՝ Հոմի պարսկական զեսպանի պաշտօնն ընդունիլ : Մելքոն խան եւրոպական հուշակ ստացող Հայերէն մէկն է այս զաւրուն . Լոնտոնի պարսկական զեսպան եղած միջոցին , մտերմական բարեկամութիւնը վայելած է Անգլիոյ բարձրագոյն անձնաւորութեանց , սկսեալ Կալլէսի իշխանէն եւ լորտ Սուզպէրիէն . Պերլինի վեհաժողովին ընդունուեցաւ անձամբ ներկայանալ խորհրդին խնդրոյն համար , զոր յաջողուց : Մելքոն խան նուրբ ու իսկատիպ միաք մըն է , որ զիւանագիտական կարողութիւններուն կը միացնէ գրական եւ իմաստասիրական ընդարձակ մշակում մը , եւ Բարիզի գրական եւ աշխարհիկ շրջանակներուն մէջ ծանօթ

անձնաւորութիւն մը զարձած էր : Ունի իրեն յատուկ անձնելու եղանակ մը՝ Արեւելքի վերանորոգման գործին վրայ, որու մասին պիտի խօսինք ուրիշ անգամ : Մեկքոն խան դիւա- նագէտէ աւելի բան մը եղած է Պարսկաստանի համար, բարոյական վերանորոգիչ մը ձգտած է ըլլալ . իր պարսկերէն տետրակներով ու թերթովը զոր հրատարակած է, եւրոպա- կան արդի քաղաքակրթութեան Պարսկաստանի մէջ մուտքը եւ տարածումը ջանացած է դիւ- բացնել՝ քարոզելու ամենաճարտար ու ճապուկ գրութեամբ մը . եւ Պարսկաստանի մէջ այսօր նոր զուրոյց մը գոյութիւն ունի, որուն կա- ընլի է ըսել հիմնադիրն է Մեկքոն խան . իր պաշտօնի վերակոչումը ապացոյց մըն է թէ այդ դպրոցը իր ազդեցութիւնը տարածած է մինչեւ պարսկական արքունիքին մէջ :

—Վահրամ Սվաճեան, յունվ. 31ին, Էնոպի սրահին մէջ, նուագահանդէս մը տուաւ : Վէ- պէրէն, Բուպինշթէյնէն, Լիսթէն, Չայ- քովսքիէն, Շոբէնէն կտորներ զարկաւ, եւ իր հեղինակութիւններէն մէկ քանին : Ներկայ էր ընտիր բազմութիւն մը, ուր կը նշմա- րուէին մէկ քանի անձնաւորութիւններ բա- ըրիցեան բարձր ընկերութեանէն (կոմսուէի Բու- թոքա, կոմսուէի Մաքին, տիկին Ճաքաըն ամերիկուհին, կոմսուէի Տիւ Շաֆօ, եւն.) Բարիպեան մամուլը մեծ գովեստներով յիշա- տակեց այս նուագահանդէսը . «Պ. Սվաճեան հայ դաշնակահարը, կը գրէր ժուրնալսէ Տիւրքա, նուագահանդէս մը տուաւ, ուր իր զարնուած քին եռանդի, ապահովութեան, զօրութեան եւ քաղցրութեան միացեալ փայլուն յատկու- թիւնները շատ գնահատուեցան : Վէպէրի սոնոր մը, Ռուպինշթէյնի, Լիսթի, Կրիկի, Շո- բէնի կտորներ, եւ մանաւանդ շատ հե- տաքրքրաշարժ հայկական եղանակներ թոյլ տուին երիտասարդ վիոլոնդին՝ ի յայտ բե- բել շատ ճապուկ ու շատ ինքնատիպ տա- զանդի մը բոլոր հնարքները : » — «Իբրեւ դաշ- նակահար, կը կարծենք թէ Պ. Սվաճեան իր հաւասարը չունի այս վայրկեանիս, կը գրէր Ռաքիլ : Մեծ ձգտութեամբ, յատկութեամբ ու դեղարուեստական հզօր զգացմամբ մըն է որ երիտասարդ դաշնակահարը ածեց Շոբէնի մէկ ցալքանուագը, Չայքովսքիի օրրերգը, եւ հա- սարակութեան բուն ծափերը խլեց : Պ. Սվաճեան ինքզինքը յայտնեց նաեւ տաղան- զաւոր նուագատեղձ՝ լսելի ընելով շարք մը հայկական եղանակներ որոնք իրականապէս մոգեցին ունկնդիրները : Արուեստագէտին յա- ջողութիւնը մեծ եղաւ, եւ կը յուսանք որ պիտի կարենանք ընդհուպ զինքը մտիկ ընել մեր կիրակնօրեայ մեծ նուագահան- զէսներէն մէկուն մէջ : » Եւ իրօք, հաւա- նական է որ Սվաճեան յառաջիկայ աշնան հրաւիրուի Գոլոնի նուագահանդէսին մէջ զար- նելու : — Սվաճեան մեկնեցաւ Կովկաս ուր մտադիր է մէկ քանի նուագահանդէսներ տալ :

—Պ. Վաղարշակ Մեարոպեան, նախկին ա- շակերտ Պոլսոյ ազգային կեդրոնական վար- ժարանին, եւ որ Բարիպի հիւանդանոցներու եւ ապաստանարաններու եկրիոն է երեք տա- րիէ ի վեր, վերջերս աւարտեց դեղագործու- թեան ուսումը եւ վկայական ընդունեցաւ : Մեարոպեան, իր մասնագիտութենէն զատ գի- տական լուրջ ուսումնասիրութիւններ կատա- րած եւ արդէն բնական գիտութեանց յիստորիա- կու բաժիններուն (քիմիաբանութիւն եւ հանքա- բանութիւն) վկայական ստացած է : Այս միջոցիս բանթէօուեան հաստատութեան մէջ կ'աշխատի, ձեռնարկած է գիտական հետազօտութիւններ, եւ մենք փայլուն արդիւնքներ կը յու- սանք մեր երիտասարդ բարեկամէն որուն հզօր կամքը, անխոնջ աշխատասիրութիւնը եւ բազմակողմանի միտքը արժանի են յարգանքի :

—ԲԱՐԻՉԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ . — Գե- տրուար 4ի իրիկունը, ուսանողներու եւ գաղ- թականներու խումն բազմութեան մը առջեւ կատարուեցաւ բացումը «Բարիպի Հայ Ուսա- նողաց նոր Մատենադարան-Փողովաւայր»ին : Միութեան դիւանը, շնորհակալութիւն յայտնեց բարիպի հայ գաղթականութեան որ իր նպատակը կարելի դարձուց Միութեան պարտքերուն հատուցումը ու նոր փողովաւայ- րին բացումը, եւ յայտարարեց թէ այսուհե- տեւ Մատենադարանը, կանոնաւոր հսկողու- թեան մը ենթարկուած, Միութեան անդամ- ներուն բաց պիտի մնայ ամէն իրիկուն, դի- ւանին անդամներէն մէկուն ներկայութեամբ, եւ երբեմն գրական ու երաժշտական երեկոյթ- ներ տեղի պիտի ունենան հոն : Մենք վստահ ենք որ ցորչափ Միութեան դիւանը պահէ կազմակերպութեան ուղին, զոր ատենէ մը ի վեր մեր Բարիպի ուսանողները կորսնցուցած էին եւ զոր կը վերագտնեն հիմայ, իրենց ժողովաւայրը պիտի մնայ տեւական եւ հե- տադեմտէ աւելի փայլուն : Կը յուսանք թէ Բարի- քի բոլոր հայ ուսանողները, գոնէ ամէն ա- նոնք որ նախանձախնդիր են հայ ուսանու- ղութեան պատուոյն, պիտի չզլանան ո եւ է ջանք եւ անձնուիրութիւն իրենց Մատենա- դարանին կենդանութիւնը վառ պահելու համար :

Կը յուսանք մանաւանդ որ Միութեան դի- ւանը պիտի վերակսի ցոյց տալ այն եռանդը որով աշխատեցաւ Մատենադարանին վերա- հաստատման եւ զոր, բացումէն ի վեր, ձեռքէ ձգած ըլլալ կը թուի . մենք գիտենք որ մէկ քանի նախկին ուսանողներ, այժմ մասնա- գէտներ, եւ մէկ քանի հայ գրողներ որ Բարիպ կը գտնուին այս միջոցիս, տրամադիր են Ու- սանողական Միութեան Մատենադարանին մէջ բանախօսութիւններ արտասանել . կը սպա- սենք որ դիւանը քիչ մը աւելի փութկոտու- թիւն ցուցրնէ կազմակերպելու այն ամսական կամ կիսամսեայ հաւաքումները զոր խոստա-

ցաւ բացման յայտարարութեանը մէջ : Իր վերջին գումարումներէն մէկուն մէջ , Ուսանողաց Միութիւնը որոշեց Եւրոպայի հայ ուսանողաց տարեկան հաւաքումին իբրեւ ներկայացուցիչ զրկել պ . Տիգրան Յասյանը , ուսանող նկարչութեան եւ արձանագրութեան եւ աշխատակից Անանիսի : Հայ ուսանողներու տարեկան հաւաքումը ամենէն գեղեցիկ գաղափարներէն մէկն է որ մեր մէջ երեւան եկած ըլլան . Լայքցիկի հայ ուսանողներ , որ այդ գործին նախաձեռնութիւնը ունեցած են , արժանի են շնորհաւորութեան . եւ փափաքելի է որ այդ հաւաքումները տեւական սովորութիւն մը դառնան մեր ուսանողական բարձրուն մէջ . մտածման , զգացման , գործունէութեան եղբայրակցութիւն մը պիտի հաստատեն անոնք մեր երիտասարդութեան մէջ , եւ մեր կուսակցամով ժողովրդին համար առի բարեբար պարագայ մըն է :

Միութիւնէն զատ , որ Բարիզի հոյ ուսանողաց պաշտօնական մարմինն է , առնէ մը ի վեր գոյութիւն ունի այստեղ Ակումբ մը , որ ինքզինքը կը կոչէ «Ակումբ Բարիզի հայ ուսանողաց» . այս Ակումբը տուաւ վերջերս երեկոյթ-պարահանդէս մը , որ , ինչպէս իմացանք ներկայ գտնուողներէն , բաւական սիրուն յաջողութիւն մը ունեցեր է եւ , ինչպէս կը յայտարարեն Ակումբին յօդուածագիրները , իր ծախքերը կրցեր է գոցել : Այս Ակումբը քիչ շատ ազմուկ հանեց արտասահմանի հայ մամուլին մէջ , եւ անօգուտ չենք նկատեր անոր մասին փոքրիկ բացատրութիւն մը տալ : Այդ Ակումբը կազմուած է խումբ մը ոչ-ուսանող երիտասարդներէ , եւ երեք (կամ առաւաւելն չորս) ազատ ուսանողներէ : Այդ պարտնները իրենց գիւտը կազմեցին ընտրութեամբ մը որ կատարուեցաւ ուսանողներու ամենաստուար մեծամասնութեան բացակայութեամբ , եւ իրենց գործունէութիւնը սկսան Հայ Ուսանողութեան դէմ ռոնձգութեամբ մը . Ուսանողաց Միութիւնը , Անանիսի տնօրէնի առաջարկութեանը վրայ , որոշած էր , ժողովքի մը մէջ , ի յիշատակ Արովեանի երեկոյթ մը սարքել . այդ ժողովքէն հինգ օր յետոյ Ակումբը ի յիշատակ Արովեանի երեկոյթ մը կուտար իր ժողովավայրին մէջ եւ յաջորդ կիրակին հոգեհանգիստ մը կը կազմակերպէր Հայոց մատրան մէջ , «յանուն բարիզի հայ ուսանողաց .» բնական է որ Երևանի հայ ուսանողները պիտի գայթակղէին անանելով որ ոչ-ուսանողներ եւ կէս-ուսանողներ կը գործեն յանուն հայ ուսանողաց . պահանջեցին որ հոգեհանգիստը կատարուի յանուն երիտասարդներու խումբի մը . իրենց պահանջքը ընդունուեցաւ հազարաձայնութեան . եւ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ . առանց արդարութիւնը վերաւորելու : Այդ միջադէպէն յետոյ է որ Ուսանողաց Միութիւնը կազմակերպեց Արովեան երեկոյթը , որ այնքան փայլուն յաջողութիւն մը ունեցաւ : Տարակոյս չկայ որ այդ պարտնները բացար-

ձակապէս իրաւունք ունէին Ակումբ մը , նոյն իսկ տառը Ակումբ , հիմնելու . բայց իրաւունք չունէին զայն «Ուսանողաց Ակումբ» աւանանելու . եւ Ուսանողաց Միութիւնը պահանջեց այդ պարտններէն որ իրենց Ակումբին որոշ տխուր մը ընտրեն , տխուր մը որ Միութեան անսակ մը կրկնութիւնը չըլլայ . կրնային օրինակի համար «Ակումբ Բարիզի հայ երիտասարդութեան» անուանել իրենց Ակումբը : Այդպէսով Բարիզի հայ եւ օտար հասարակութեանց առջեւ իրենց ուրոյն գիրքը կ'ունենային , փոխանակ գոյութիւն ունեցող ուրիշ մարմնոյ մը անունը շահագործելու : Այդ պարտնները յամտեցան իրենց Ակումբին վրայ պահել ուսանողական անունը : Եւ կը շարունակէին իրենց ժողովավայրին մէջ տալ փոքրիկ «ուսանողական» երեկոյթներ , ուր ներկայ կը գտնուէին գրաչարներ , դերասաններ , յօդուածագիրներ , մելիքներ , եւ Բարիզի 60—70 հայ ուսանողներէն միայն երեք (կամ առաւաւելն չորս) կէս-ուսանող . . . եւ վերջապէս կազմակերպեցին պարահանդէս մը , միշտ յանուն Հայ ուսանողաց : Վաղը երեսասարգներու ուրիշ խումբ մը կրնայ հիմնել կաճառ մը հայ ուսանողաց , կամ Քլիւպ մը հայ ուսանողաց (բառը չէ որ կը պակսի) , եւ սիրուն երեկոյթ մը պիտի ըլլայ եթէ յառաջիկայ ձմեռ հայ ուսանողութիւնը ներկայացնող չորս հինգ խումբեր միանգամայն երեւան ելլեն երեկոյթ մը կազմելու : Պարահանդէսը նկարագրող ակնբական յօդուածագիրները իրենք իրենց թոյլ տուած էին մէկ երկու անգամ կառ ստութիւններ , զոր կ'ուզենք նշանակել . մին չ'ամջնար յայտարարելու թէ Ուսանողաց Միութիւնը եւ Անանիսի տնօրէնը ուզած են արգիլել այդ պարահանդէսը . . . մենք մեր պարտքը կատարեցինք այդ պարտնները զգուշացնելով որ տխուրս գողութիւն մը չգործեն , եւ ա'լ անկից ի վեր չենք զբաղիր իրենցմով (թէպէտ Ուսանողական Միութիւնը միշտ իրաւունք ունի , ամէն անգամ որ այդ Ակումբը բան մը կազմակերպէ , յայտարարելու թէ հայ ուսանողութեան պաշտօնական մարմինը չէ կազմակերպողը) : Ուրիշ մը Պոլսոյ Արևելքին մէջ կը բացազանչէ թէ Բարիզի հայ ուսանողութիւնը երբեք այսքան շողջողուն երեկոյթ մը կազմակերպած չէր , եւ այդ պատիկ չտեսը որ պարտններուն «մերկ լանջերը , կլորակ վիզերը եւ նուրբ իրանները» կը նկարագրէ Քիւրախտանէն եւ կամ լեռնցի մը բերանաբաց ապշութեամբ , եւ որմեծ երաժշտի տեղ կը դնէ ջութակին վրայ մուկի ձայներ հանող անտանելի խափշիկ կ'այլաւ . եւ «առաջնակարգ արուեստագէտ» ուսանունէ ֆրանսացի մէկ երկու աննչառ երգիչներ , այդ պարտնը պարտէր յիշել թէ Բարիզի Հայ Ուսանողութիւնը , Սասունի կուտորածներէն յետոյ , Ռոշֆորի նախագահութեամբ բողոքի միթիւնկ մը կազմակերպած է այլապէս կարեւոր քան այդ պարահանդէսը ,

Թէ այդ ուսանողութիւնը Լըուու-Պոլիէօին եւ Վանտալին բանախօսութիւններ արտասանել տուած է հայկական խնդրոյն վրայ, եւ թէ տակաւին անցեալ տարի կազմակերպեց բարոյական շատ ընդարձակ նշանակութիւն ունեցող երեկոյթ մը որուն մասնակցեցան Ֆրանսայի առաջին ողբերգակը Մուսէ Սիւլլի եւ երեք ամենամեծ արուեստագէտներ, տիկին Սըլիոն-Վէպէո, Ռամօ եւ Անժէլ: Բայց այս տարբերութիւնները զգալու համար պէտք է «կտրակ վիզերէն ու մերկ լանջերէն» զուրս դուռնախօսութիւններ ըրած ըլլալ: Եւ այդ պարոնը կը համարձակի սա պարբերութիւնը ստորագրել «Վերջերս բարիղի «Հայ Ուսանողաց Ակումբը» զրազած էր կազմակերպելու մեծ երեկոյթ-պարահանդէս մը, որ առաջին քայլը պիտի ըլլար, բարենպասակ գործունէութեան մը: ցոյց տալու համար հայ հասարակութեան թէ Բարիղի հայ ուսանողութեան փսած կեղեկին տակ կայ նայե թարմ ուժ մը ինքնաճանաչ ուսանողներու որոնք՝ վառուած գիտութեան ու զարգացումի անյագ տենչով, պատրաստ են ամէնվայրկեան անձնուիրաբար ստատել հայ տարրին մտաւորական յառաջդիմութեան գործին!» Այսպէս, Բարիղի հայ ուսանողութիւնը, որ այս վայրկեանիս իր մէջ կը հաշուէ Մանուէլեանի, Մեսրոպեանի, Էլմասեանի, Թահթաճեանի, Եսայեանի, Յարգիսեանի պէս անուններ որոնք պատիւ կրնան բերել ու եւ է ազգի ուսանողութեան, փսա՛ծ մարմին մըն է, եւ այս տարտամ ուսանողներն են որ իրենց պարահանդէսով ուժ պիտի բերեն անոր. . . եւ ո՞վ ըստ որ ուսանողութեան կենսականութեան ապացոյցը պարահանդէս կազմակերպելու մէջ կը կայանայ:

Այս քանի մը գիտողութիւնները կը ներկայացնենք իրերը իրենց տեղը գնելու համար, եւ յուսալով այն մէկ քանի պարկեշտ տղաքը որ կրնան գտնուիլ այդ երկրիմի Ակումբին մէջ, պիտի համոզուին վերջապէս—եթէ իրօք օգտակար ըլլալ է նպատակներ—որոշ գոյն մը տալ իրենց խումբին ու գործունէութեանը եւ պիտի ջանան աւելի խիստ ըլլալ իրենց յօդուածագիրներուն ընտրութեանը մէջ: Այդ պարոնները որոնք մտադիր են տարին երկու երեք պարահանդէս տալ, որոնք ամէն շաբաթ գրական երեկոյթ կը սարքեն (ուր իրենք կան միայն խօսող եւ ունկնդիր) եւ որոնք մտադիր են քիչ ատենէն հանդէս մը հըրատարակել, իրենց այս ծայրայեղ եւ անհամեմատական գործունէութեամբ իսկ կը հաստատեն թէ «ուսանողներ» չեն. ուսանողներուն պարտքն է չարաչար աշխատիլ իրենց մասնաճիւղը կարելի եղածին չափ շուտ ու լաւ աւարտելու. այդ էական պարտքէն յետոյ, անոնք ունին միանգամայն պարտականութիւն իրենց ժողովավայր մը հաստատելու ուր երբեմն հաւաքուին, եւ զիրենք ներկայացնող գործագիր մարմին մը՝ որպէս-

զի տարին անգամ մը կազմակերպէ՝ հանդիսաւոր երեկոյթ մը, ուսանողութիւնը հաղորդակցութեան մէջ գնելու համար հայ եւ օտար հասարակութեանց հետ. այսպէս կ'ընեն ամէն ազգի ուսանողներ, եւ մերիններն ալ այսպէս պէտք է ընեն, եւ ա՛յս քան. Հանդէս հրատարակելը եւ տարին տասերկու ամիս պարահանդէս ու երեկոյթ կազմակերպելը ուսանողութեան համար վնասակար եւ անիմաստ գործունէութիւն մըն է: Կա՛մ այդ պարոնները «ուսանող» են, ու այն ատեն պէտք է որ ուսանողի կեանք անցընեն եւ ուսանողներու ամբողջութեանը կողմէ ընտրուած Ուսանողական Երեկոյթեանը գործակցին. կամ «ուսանող» չեն, եւ այն ատեն իրաւունք ունին կազմակերպելու ամէն ինչ որ կ'ուզեն, բայց առանց գործածելու անուն մը որ իրենցը չէ:

—Պ. Կ. Բաւմաճեան, որ ծանօթ է իր բեւեռագիրտական ուսումնասիրութիւններով, պիտի հրատարակէ քիչ ատենէն հանդէս մը, ԲԱՆԱՍԷՐ անունով, որ միմիայն պիտի պարունակէ բանասիրական նիւթեր, յօդուածներ ազգային հնախօսութեան, պատմութեան եւ մատենագրութեան, հին արձանագրութեանց ու բեւեռագրերու վրայ, քննադատութիւններ հայերէն ձեռագիրներու վրայ, լեզուաբանական ուսումնասիրութիւններ, հըրատարակութիւն արեւմտեան Եւրոպայի մատենագրամաց հայ ձեռագիրներու ցուցակներուն եւն: Հ. Ս. Պարոնեան պիտի աշխատակցի Բանասերին, հոն սկսելով հրատարակել իր Մասեկսցանկը ուր նշանակած է այն բոլոր հին ու նոր օտար հեղինակները որ Հայոց մասին գրած են: Բանասերը կը ծանուցանէ աշխատակցութիւնը հայ եւ օտար արեւելագէտներու: Առ այժմ, պիտի հրատարակուի վիմագրութեամբ միայն, մինչեւ որ քաջալերութիւն գտնէ եւ կարենայ տպագրութեամբ երեւալ: Բանասերը պիտի լոյս տեսնէ տարին չորս անգամ. տարեկան բաժանորդագիրն է 20 ֆրանք իւրաքանչիւր համար, առնուազն հարիւր էջէ բաղկացած, կ'արժէ 6 ֆրանք. դիմել առ Պ. Կ. ԲԱՄՄԱՋԵԱՆ, 112 Boulevard Rochechouart, PARIS

Յաջողութիւն կը մաղթենք այս շահեկան եւ օգտակար ձեռնարկին:

—ՀԱՅԵՐՆ Ի ԹՈՒՐԻՔԻԱ. —Կ. Պոլսէն մեզի կը գրեն թէ Ամէն. Տ. Մատթէոս Իզմիրլեան Անգլիոյ Թագուհւոյն «պատուակալ տաներէց» անուանուած է:

—Պոլսէն տխուր մանրամասնութիւններ կը հաղորդեն մեզի Օրմանեան պատրիարքին վրայ: Այդ անձը մեզի ատենով ներշնչած էր հմուտ ու լուրջ եկեղեցականի մը գաղափարը, եւ կը յուսացուէր որ պիտի հանդիսանար պատրիարք մը այնչափ ճարտար որչափ ազգասէր:

Բայց այլ եւս դժուար է այսպիսի յոյսեր օրօրել. Օրմանեան իր ամբողջ ճարտարութիւնը ի գործ կը դնէ . . . իր քսակը պարարտացանելու, եւ հերոսիկներու մէջ կը կորսուի՝ պարզապէս հերոսիկներու սիրոյն հասար, իբրեւ ճշմարիտ նախկին բուրսակահար մը : Զարդերէն յետոյ չէինք սպասել որ դիւցազնական արարքներ ընծայէր մեզի . նոյն իսկ գոհ եղանք ի սկզբան, տեսնելով որ խաղաղեցուցիչ քաղաքականութիւն մը կը սկսի . կը կարծէինք որ այդ բոլորը դիւանագէտ գործունէութիւն մըն էին որուն միջոցով վերջ ի վերջոյ իրական արդիւնքներ ձեռք պիտի ձգէր ազգին համար . եւ ահա երկու տարի է, ուրիշ բան չենք իմանար բայց եթէ անդադրում այցելութիւններ սուլթանին, եւ նշանաւոր կամ յուզարկաւորութեան անհաստատ պատարագներ, եւ ատկից զատ ոչինչ . եւ ոչ իսկ նշոյլ մը բարենորոգման, եւ ոչ իսկ քանի մը բանտարկեալ արձակուած . . . ոչինչ : Եւ մեզի հազորդուած տեղեկութիւնները, որոնց ստուգութեանց վրայ չենք տարակուսիր, որովհետեւ բազմաթիւ անձերէ միեւնոյն մանրամասնութիւնները ընդունած ենք, մեզի կը ներկայացնեն Օրմանեան մը ոչ միայն ապիկար, այլ շնորհալի ու զգուշի, քինախնդիր, շահամուտ, արժանապատուութեան զգացումէ զուրկ, հլու գործիք : Սուլթանին առաջին քարտուղար Թահսին պէյին եւ Տատեան Սրթին փաշային ուրոնք իրենց ուզածին պէս կը խաղցնեն զինքը : Կը հրատարակենք մէկ քանի հատուածներ Պոլսէն զրկուած նամակի մը . «Օրմանեան իր բոլոր գործերը կը տեսնէ Թահսին պէյին ձեռքով որուն տեսակ մը գործիքը դարձած է : Հասարակ պաշտօնեայի մը պէս, չարաթը երկու երեք անգամ Թահսին պէյ պալատը կը կանչէ զինքը, Հայոց պատրիարքը իր ափին մէջ ունենալը Սուլթանին քով իր ազգեցութիւնը մեծցնող պարագայ մը դարձուցած է . ատով Օրմանեան ու եւ է յարգանք կարսնցուցած է պալատին մէջ, եւ ատոր համար է որ երկու տարուան մէջ ոչինչ կրցաւ ձեռք ձգել, հակառակ իր դիւանագէտի համբաւին, բայց եթէ այս վերջերս, ժողովրդին ծայրայեղ թշուառութենէն մղուած, գինուորական տուրքին մէկ տարի ալ յետաձգումը եւ արկածելոց համար կառավարութեան հաւաքած ստակէն 2000 ոսկի, ինչ որ ոչինչ է ինքզինքը persona grata համարողի մը համար : . . . Տըղայամութիւնը ու գրամասիրութիւնը մեծ գեր ունին իր բոլոր վարմունքին մէջ. պատրիարքարանի պաշտօնեաներուն՝ որոնք երբեք պատուանշան ուզած չունէին՝ ելաւ պատուանշան առաւ, զիրենք շահելու համար. կ'արժէ՞ր ասանկ շնորհ մը խնդրել երբ այնքան կարեւոր խնդիրներ կան առկա . . . Օրմանեան տարին 600 կամ թերեւ 1000 ոսկիի չափ անձնական պարգեւ մը կը ստանայ այլ եւ այլ անուններով (Րամազանին ճիշ իխուսի,

ինքան, ելն .) . չենք բոնր որ տրուած ստակը չառնէ, բայց Օրմանեան իր դրամասիրութիւնը յառաջ տարաւ մինչեւ այդ պարգեւները՝ տրուելէն առաջ՝ ուղիւ աւտիճան, «ես կարօտ» ի քաղաքականութիւնը բռնեց, ստակի պէտք ունենալը զպացուց . ասոնք ամօթալի բաներ են պատրիարքի մը համար : . . . Օրմանեանը այս ճամբուն մէջ առաջնորդողը Տիպրան Նէրսէսեան ըստած սրիկան եղաւ, որ անոր քեռայրին եղբայրն է եւ պատրիարքարանի այժմեան գործակատարը . այս կարնեցի նախկին վաչխառուն, որ մինչեւ քանի մը մէծիտիէ կաշառք կ'առնէ բանտէն Հայեր ազատելու խոստումով, այս դձուճ ապիկարաւ որ գաղտնի տեղեկութիւններ կը հաղորդէ (եւ պատրիարքին ալ հաղորդել կուտայ) պալատին՝ հասարակ խափիէի մը պէս, այդ վատը որ շատերու աքսորութիւն պատճառ կ'ըլլայ եր որ պատրիարքը օրէ օր աւելի կը մղէ ընդդէմ ազգին թուրք կառավարութեան վրայ կրթնելու քաղաքականութեանը, վերջին պատուհան է զոր ազգը կրնց . իր ըրած չարիքը անհուն է . Օրմանեան դիտնալով հանդերձ անոր կաշառակերութիւնները ու ուճիրները, զայն պաշտօնի վրայ կը պահէ . պալատին մէջ ալ բնականաբար կը պաշտպանեն զինքը, որովհետեւ ճիշտ իրենց ուզած մարդն է . . . Վերջերս, ուրիշ դէպք մըն ալ մեր զժողովութիւնը զգուսնքի հասցուց Օրմանեանի դէմ . Մելքոն Կիւրճեան Պոլիս գալ ուզած էր . իր գալէն առաջ, բարեկամներէն մէկը Օրմանեանին եւ Սրթին փաշային դիմած եւ ապահովութիւններ խնդրած էր, երկուքն ալ լի ու լի ապահովութիւն տուած էին . Կիւրճեան եկածին պէս բանտարկուեցաւ . ափկին Կիւրճեան իսկոյն կը դիմէ Օրմանեանին, եւ գիտէք ի՞նչ կ'ըսէ Օրմանեանը այդ շուարած խեղճ կնոջը . «Բու էրիկդ իմ եղբայրս հիւանդանոցի բժիշկ եղած աւտեան անոր դէմ շատ բաներ գրած էր . . . » եւ ճամբու կը դնէ զայն . ըսողներ կան թէ Օրմանեանը ուղղակի Թահսին պէյին թելադրած է որ լաւ կ'ընեն պղտիկ ամսականով մը այդ մարդը Պոլսէն հեռացնելով . . . Կիւրճեան Բալու աքսորուեցաւ 500 զրուշ ամսականով . . . Սուրհանդակ լրագրին հրատարակմանը դէմ ելած արդելներուն մէջ ալ Օրմանեան մատ ունեցած է . պիտէք որ այդ լրագրին արօտնութիւնը առնուելէն յետոյ, յսնկարձ հրատարակումը արգիլուեցաւ, սա խեղկատակ պատճառաբանութեամբ թէ Սուրհանկ-քաղիւ-դիւ կը նշանակէ եղեր . . . այդ բառախաղին հնարիչը Օրմանեան չէ, այլ Գէջեանը, բայց Օրմանեան աւելին ըրած է . պալատը բացէ ի բաց յայտարարած է թէ՛ «արդէն զոյութիւն ունեցող թերթերովը հազիւ կրնամ ազգը կառավարել, այդ նոր թերթը կարելի է իմ քաղաքականութեանս կը հակառակի . աղէկ կ'ըլլայ որ տեղի չտրուի այս պատահականութեանց : »

Աստուծոյ հրէշու թիւններ են : Աշքեան աստնց քառորդը չէր բրած :

Ուրիշ նամակէ մը կը քաղենք հետեւեալ հատուածը , ուր Օրմանեան կ'երեւայ իբր ճշմարիտ դաւաճան Սոյ կաթողիկոսական աթոռին դէմ . «Կառավարութիւնը շատոնց կը փափաքէր որ Միսը Պորտոյ վիճակին հետ ձուլուի . եւ Պոլսոյ պատրիարքը ըլլայ Գիլիկոյ հայ բնակչութեան ուղղակի հոգեւոր պետը : Պատրիարքը ի սկզբան համամիտ էր այս գաղափարին — կ'ըսուի նոյնիսկ թէ ինք էր զայն յղացողը . — բայց խառն ժողովին վերջին նստին մէջ ստիպուեցաւ համակերպիլ ժողովականներու մեծամասնութեան փափաքին , բոլորովին մէկզի դնելով այդ խնդիրը . գաղափարին կուսակից էր քաղաքական ժողովին ատենապետ Տատեան փաշան , մինչդեռ կրօնական ժողովին երկու ատենապետները , Կրիզոստոմ Յովնանէսեան եւ Վահրամ Մանուկունի եպիսկոպոսները բոլորովին հակառակորդ : Կաթողիկոսական այս խնդրոյն առթիւ , Խրիստեան Հայրիկ կոնդակ մը զրկած է Պատրիարքարան , ձուլման ամէն փորձ պախարակելով եւ առաջարկելով անմիջապէս նոր ընտրութեան ձեռնարկել . այն պարագային ուր կարելի չըլլայ արժանաւոր մէկը ընտրել , Հայրիկը կը յանձնարարէ Աշքեանը զրկել . պատրիարքին քսամենի պարտազանցութեան կամ մանաւանդ գրուածանութեանը վրայ Հայրիկին այս փութկոտ եւ ուժով միջամտութիւնը մեր զգացած զգուանքին եւ յուսահատութեանը մէջ քիչ մը սիտփանք բերին » :

Իզմիրլեանէն յետոյ , որ հայ ցեղին վարկը բարձրացուց Եւրոպայի առջեւ իր նկարագրի գորութեամբը եւ հոգիի գեղեցկութեամբը , այսպիսի պատրիարք մը պղծում մըն է պատրիարքական աթոռին . չէինք սպասեր որ Իզմիրլեանի յաջորդը հերոս մը ըլլար անոր պէս . պայմանները փոխուած են , եւ ամէն մարդու տրուած չէ հերոս ըլլալ . բայց չէինք ալ երեւակայի որ խափիէ մը պիտի ըլլար «երկաթէ պատրիարքին» յաջորդը . . .

—Վանայ մէջ տիրող ծայրայեղ թշուառութեան պատճառով , մէկ քանի գիւղեր ստիպուեալ են վերջերս կաթողիկոսութիւն ընդունիլ , պատառ մը հացի համար : Պոլսոյ մամուլը վայնասուն փրցուց , պատրիարքը ցնցուեցաւ , օգնութիւն զրկեց Վան , եւ կրօնափոխները նորէն մայրենի եկեղեցւոյ գերկը դարձան : Խեղճ ժողովրդի մը անօթութենէն օգտուելով կաթողիկոսութեան դարձընելու այդ գրութիւնը զոր Դոմինիկեանները ի գործ կը դնեն Վանի մէջ հետու է Աւետարանին հետ ո եւ է կապ ունենալէ . բայց ի՞նչ մտածել մեր պատրիարքարանին , մեր կղերին վրայ ահատարի մըն է որ Վանեցոց սղորմելի վիճակը ծանօթ էր ամենուն , Պոլսէն ոչ առաջնորդ մը զրկուեցաւ վտանգուած հօտին գլուխը կանգնելու , ոչ գրամական օգնութիւն հասցուե-

ցաւ սովին դէմ դանոնք պաշտպանելու . հիմա , երբ քանի մը գիւղ կաթողիկոսութիւն կ'ընդունին , մեր կղերը կը ցնցուի , ու գործել կը սկսին . ու տեսնուեցաւ որ երբ ուղեցին , կրցան գործել . ուրեմն պատրիարքարանը Վանեցոց օգնութեան կը հասնի չէ թէ որովհետեւ անօթի են այլ որպէսզի կաթողիկոսութենէ ետ դառնան . . . Պէտք չէ՞ր որ մեր կղերը առջի վայրկեանէն շարժած ըլլար , եւ հիմա ի՞նչ իրաւունքով կը գատափետեն Վանի Դոմինիկեանները , որոնք ջարդերուն ատենը պաշտպանեցին Հայերը , եւ սովի ատեն միակը եղան հաց տուող . այդ մարդիկը իրենց պարտքը կատարած են իրենց բմբուած եղանակովը . բան մը չունինք անոնց ըսելիք . նոյնիսկ շնորհակալութեան պարտականութիւն մը իրենց նկատմամբ . մեր ամբողջ գանգատը պէտք է ուղղուի մեր ապիկար կղերին , որ ժողովրդին անօթութեանը առջեւ անտարբեր ու թոյլ մնաց , եւ սկսաւ շարժիլ երբ «ծուխ»եր պակսիլ սկսան . . .

—Պ . Ջանչեան մեզի կ'իմացնէ թէ չորրորդ որբանոց մըն ալ պիտի բանայ , իր հրատարակած « Եղբայրական Օգնութիւն » գրքին հասոյթովը , Տիրապէքիբի մէջ : Միւս կողմէ եւրոպական թերթերու մէջ կը կարգանք թէ Սուլթանը հրամայած է փակել օտար որբանոցները . մանրամասնութիւններ կը պակսին դեռ , բայց կ'երեւայ թէ միմիայն բողոքականներու (գերմանական եւ անգլո-ամերիկեան) որբանոցներն են որ գոցուած են . ի՞նչ մղման տակ սուլթանը տուած է այդ այլանդակ հրամանը . Անգլիոյ կառավարութիւնը բողոքած է Սուլթանին՝ այդ խնդրոյն համար . Ուէսթմինսթրի դուքսը Եւրոպայի ժողովուրդներուն հրաւեր կը կարգայ օգնութեան հասնիլ Հայաստանի սովեալներուն եւ որբերուն . իսկ Սուլթանը—հրէշալին հեգնութիւն—Եւրոպայի բողոքին կը պատասխանէ յայտարարելով թէ ինքն իսկ պիտի բանայ . . . թո՛ւրք որբանոցներ՝ հայ որբերուն համար : Չենք կրնար ի վեր չհանել կէտ մը զոր ոչ ոք դիտել տուաւ տակաւին . Սուլթանը իր այդ հրամանը տուած է հիմնուելով Հայոց պատրիարքին բողոքին վրայ որ գանգատեր է թէ օտարները հայ եկեղեցիէն անջատել կուզեն հայ որբերը . օտարներու բացած որբանոցները օտար պաշտպանութեան կառաններ էին Հայաստանի մէջ , ու հայ ապագայ սերունդին համար եւրոպացման սատարներ . Պատրիարքը չարապորձ արարք մը կատարած է այդ հակազդային բողոքը ներկայացնելով , եւ Սուլթանին սալով այդ պատրուակը՝ հայապաշտպան ուժերը Հայաստանէն վտարելու :

—Պոլսոյ լրագիրները ծանուցին մահը Յարութիւն Էֆէնտի Մէրեթեմգուլիի , որ ծանօթ դէմք մըն էր Պոլսոյ ազգային շրջանակներու մէջ :

—Հակառակ Օրմանեանի եւ Քէչեանի լա-  
րած դաւերուն, Սուրհանդակ լրագիրը սկսաւ  
հրատարակուել Պոլսոյ մէջ մարտ ամսէն սկսեալ:

—Տրապիզոնի մէջ հիմնուեր է Հայուհեաց  
Ընկերութիւն մը, նպատակ ունենալով հայ  
իգական սեռին զարգացումը:

—Ցաւով կ'իմանանք մահը անկեղծ հայա-  
սէրի մը, Պ. Ֆ. Ս. Քոպպ անգլիացուոյն,  
որ պոլսոյ անգլիական փոստային տնօրէնն էր:  
Այդ աղնիւ անձը, ձեռքի տակէ օգնած է  
բազմաթիւ կարօտեալ հայ ընտանիքներու,  
բաւական որբերու պարուստը պահոված եւ  
մէկ քանին ալ իր ծախքով բարձրագոյն վար-  
ժարաններ դրած է. անձնուէր աշակից մը  
եղած է մանաւանդ Մէլստթոնի հայ որբանո-  
ցին զոր հաստատեցին երկու տարի առաջ մեր  
Արմէն Արտոնց բարեկամը եւ Թրէտկոլտ  
անգլիացին:

—ՉԵՅԹՈՒՆԻ ՀԱՄԱՐ—: Բուսուքի մէջ  
խումբ մը ազգայիններ ձեռնարկած են  
հանգանակութիւն մը բանալ ի նպատակ Չէյ-  
թունի սովեալներուն: Կազափարը ամէն  
գովեստէ վեր է, եւ անշուշտ Պուրկարիոյ  
Հայոց կողմէ պիտի գտնէ ջերմագին ընդու-  
նելութիւն: Քանի մը սրիկաներ կուսակցական  
խնդիրներ յարուցանելով փորձած են աբգիլք  
ըլլալ այդ զուտ ազգային ձեռնարկին. հան-  
գանակութեան կազմակերպիչները ուրիշ բան  
չունին ընելու բայց եթէ արհամարհել սրիկա-  
ներուն կանչուընտուքը եւ իրենց գործը յառաջ  
տանիլ:

ՀԱՅԵՐՆ Ի ՌՈՒՍԵԱ. — Ռուսահայք կը  
պատրաստուին տօնել Պերճ Պոռչեանցի գրա-  
կան գործունէութեան քառասնամակը:  
Թիֆլիսի մէջ արգէն կազմուած է մասնաժու-  
ղով մը, որ մեզի զրկած է ծանուցագիր մը  
որով կ'իմացնէ թէ յոբելեանի հանդէսը պիտի  
կատարուի ապրիլ 18ին եւ կը խնդրէ ամէն  
անոնցմէ որ կը յարգեն Պոռչեանցի գրական  
ու մանկավարժական գործը՝ ուղարկել իրենց  
հետագիրը, ուղերձը, կամ ո եւ է թղթակցու-  
իւն ու գրամական նուէր հետեւալ հասցէին՝  
ՄԱՐԿՈՍ ԵՍԱՅԵԱՆ ԴՅՈՒՌԻՍԵԱՆՅ, ԹԻՖԼԻՍ:

Մենք այժմէն կ'ուղղենք մեր սրտագին շնոր-  
հաւորութիւններն ու խորին մեծարանքը Սօս  
եւ Վարդիթերի սիրուն վրպողին, եւ վստահ  
ենք որ հայ ժողովուրդը միահաղոյն յարգան-  
քով մը պիտի պաշարէ յոբելեանը այդ պարզ  
ու անկեղծ բանաստեղծին որ, Արովեանէն  
յետոյ, ամենէն կենդանի երգիչը եղաւ «հայ  
գիրդին»: Անահիտի յառաջիկայ թուով պիտի  
հրատարակենք ուրուագիծ մը Պոռչեանցի  
կեանքին ու գործունէութեանը:

—Մշակէն կ'իմանանք թէ բազուարակ  
Շուշեցի ծանօթ նաւթարդիւնաբերող պ. Գրի-  
գոր Մարտիրոսեան Առաֆէլեան յանձն առած  
է հարիւր հազար ռուբլի նուէրել կառուցա-

նելու համար Շուշիի մէջ «բէալական դպրոց»  
մը, խնդրելով որ դադրեցնեն այն հանգանա-  
կութիւնը զոր բազուարակ շուշեցիները  
սկսած էին այդ նպատակով:

—Նոր-Նախիջեանի մէջ պիտի սկսի հրա-  
տարակուել հայերէն նոր հանդէս մը, (ԿԵԱՆՔ)  
որ պիտի երեւնայ տարին երկու անգամ,  
խմբագրութեամբ Պ. Մինաս Պէրպէրեանի:

—Նմանապէս, քիչ ատենէն հրատարակուել  
պիտի սկսի «Էմիլեան ազգագրական ժողովա-  
ծու» մը, որուն խմբագրութիւնը յանձնուած  
է Բրոֆ. Ալալթեանցի. այս նպատակին  
համար Մկրտիչ Էմիլեան կտակած էր Հազարեան  
ձեմարանին՝ տասը հազար ռուբլի. հանդէսը  
պիտի պարունակէ հայ ժողովրդական գրակա-  
նութեան եւ ազգագրութեան վերաբերեալ  
յօդուածներ եւ առ այժմ պիտի երեւնայ տարին  
մէկ անգամ:

—Թիֆլիսի հայ կիները թատերական սի-  
րուն երեկոյթով մը տօնեցին տիկին Սաթև-  
նիկ Չաչկեանի բեմական գործունէութեան  
երեսունեակնամակը:

ՀԱՅԵՐՆ ՊԱՐՍՎԱՍՏԱՆ. — Դաւրէժէն Տր.  
Փաշեան մեզի կը զրկէ հետեւեալ նամակը  
ուր կը հաստատենք ուրախութեամբ թէ մեր  
«Գիտակից ջանքեր» յօդուածով նշանակած  
ծրագիրը ատենէ մը ի վեր գրեթէ ամբողջու-  
թեամբ սկսած է արդէն գործադրուել. կը հը-  
րատարակենք այդ նամակը, եւ այն շարք մը  
տեղեկութիւնները որոնք այդ նամակէն յետոյ  
մեզի հասան:

Դաւրէժ, 1/13 փետր. 99.

Անանիսի 4-րդ թուոյն մէջ «Գիտակից  
ջանքեր» վերնագրով յօդուածը հաճոյքով  
կարդացինք, ու եթէ երբեմն Անանիսի էջե-  
րու մէջ զանազան հայ կեդրոններու մասին  
այդ կարգի նկատողութիւններ երեւան գան,  
անկասկած կարող են մեծ օգուտներ արտադ-  
րել: Միայն թոյլ տուէք որ այդ յօդուածի  
առթիւ մէկ քանի գիտողութիւններ ու բա-  
ցատրութիւններ յայտնեմ, մասնաւորելով  
խօսքս պարսկահայերու մասին:

—Դաւրէժի «Ասարանական Ընկերութեան»  
մասին խօսելով կը գրէք. «մինչեւ հիմա  
երեք բանախօսութիւն տեղի ունեցած է,»  
անշուշտ թիւրիմացութեան մը պատճառով,  
որովհետեւ կանոնագրի տպագրուած ժամա-  
նակ այդ երեք բանախօսութիւնները ար-  
դէն տեղի ունեցած ըլլալով, յարմար տես-  
նուեցաւ այդ մասին ծանօթութիւն մը աւել-  
ցնել: Մինչդեռ անկէ ի վեր կանոնաւորա-  
պէս բանախօսութիւնները շարունակուած են,  
եւ զգացուած պահանջին համեմատ, այժմ  
չարաթն սնգամ մը տեղի կ'ունենան, փոխա-  
նակ երկու շաբաթն անգամ մը տեղի ունենալու:

98 մարտ 1էն մինչեւ փետր. 20, քսանեւ-

վեց հրապարակային ձրի գասախօսութիւններ տեղի ունեցած են :

« Լսարանական Ընկերութիւն »ը ունեցաւ իր մասնաճիւղը (Թէեւ անկախ) Սալմաստի մէջ : Պարսկահայոց մէջ , մասնաւանդ Գաւրէժի մէջ , լրագիր մը հաստատելու խնդիրը քանիցս յուզուած է լսարանական երեկոյթներու մէջ եւ այս առթիւ առանձին գումարումներ տեղի ունեցած են : Խնդիրը բաւական լրջութեամբ նկատողութեան առնուած է . եթէ տեղական մէկ քանի արգելքները հարթուին , իսկոյն թերթին հրատարակութեան կը ձեռնարկուի . հարկ եղած նիւթական եւ մտաւոր ուժը արգէն պատրաստ է :

« Պարսկահայերը կրնան մեզի ճանչցնել հին Պարսկաստանը իր պատմութեամբ ու գրականութեամբ , նոր Պարսկաստանը իր բարձրութիւնով , ազանդներով եւ կացութեամբ , գործ սր հայ լեզուին եւ գրականութեան համար ամենակարեւոր նշանակութիւն ունի եւ զոր անշուշտ Պարսկահայք ամենէն աւելի ձեռնհաս են կատարելու . նմանապէս կրնան երեւան հանել Պարսկաստանի հայութեան պատմութիւնը , մանրակրկիտ քննութեամբ , հնագոյն օրերէն մինչեւ այս օր , » կը գրէիք : Այս մասին արդէն լուրջ եւ օգտակար ջանքեր եղած են , նոյն այս նպատակով երկու դասախօսութիւններ կարդացուած են . Պ . Համբարձում Առաքելեանի դասախօսութիւնը արդէն սկսած է լոյս տեսնել Վիէնայի « Հանդէս Ամսօրեայ » ին մէջ , իսկ Նազար Էֆէնտի Գորոյեանց պատրաստած է « Պարսկահայերուն ընդարձակ պատմութիւնը » եւ յանձնած « Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան , » եւ ուրկէ քաղելով դասախօսութիւն մը արդէն կարդացած է լսարանի մէջ : Ուրեմն կը տեսնէք որ Պարսկահայք սկսած է ձեր նկատած շրջանի մէջ կատարել իր պարտականութիւնը :

Այդէ գտ , տեղի ունեցած են բացառիկ լսարանական երեկոյթներ եւ բողոքականներու կողմէ կազմուած լսարաններ , ուր խօսուած են զանազան օգտակար եւ շահաւէտ նիւթերու վրայ :

Այժմ , « Լսարանական Ընկերութեան » 61 անդամներու վրայ աւելցած են 32 նոր անդամներ եւս :

Պարսկահայերը սկսած են կազմակերպուած մտաւորական կեանք մը ստեղծել , զարգացման ձգտումը ունին եւ մեծ ապագայ կը խոստանան , եթէ հանրային գործերու մէջ կուսակցական եւ եսական ոգին մէկ կողմ թողուն եւ ձեռք ձեռքի տալով աշխատին , կուսակցամոլութիւնը բոլորովին կուսակցական գոյն ունեցող խնդիրներու վերապահելով :

ՏՐ . Կ . Յ . ՓԱՇԱԵԱՆ

— Գաւրէժի Անգլիական հիւպատոսին միջնորդութիւնով Ուէսթմինսթրի գուքսը 100 ոսկի սթեռլին նուիրած է « Թաւրիզու Հայուեաց Բարեգործական Ընկերութեան » :

— Ատրպատականի առաջնորդ Տր . Սահակ եպ . Այվասեան կը փափաքի տեղիս ազգային գործերը օրինական սահմաններու մէջ կառավարել : Պարսկահայերը ազգային գործերը ղեկավարելու որոշ օրէնքներ չունին , Սրբազանը կը ցանկայ ունենալ սահմանադրական օրէնք մը , որով հասարակութիւնը իրաւունք ունենայ ազգային գործերուն մասնակցելու եւ իր պարտքը ծանչնալու : Այս նպատակով գաւառներէ երկ-երկու անձեր պիտի ընտրուին իբր երեսփոխան եւ անոնք պիտի խմբագրեն օրինագիծ մը , որ Վեհափառ Շահէն եւ Կաթողիկոսէն վաւերանալէ յետոյ գործադրութեան պիտի գրուի :

Այս հանրօգուտ գործին արդէն ձեռնարկուած է : Սրբ . Հօր կողմէ , Ուաչիկ վրդ . Դադեան ամիս մը առաջ ճամբայ ելաւ գաւառները շրջելու համար . անոր պաշտօն յանձնուած է ա . Ամէն գաւառէ երկ-երկու երեսփոխաններ ընտրել տալ հասարակութեան քուէով . ի . հայերու ընդհանուր մարդահամարը եւ վիճակագրութիւնը կազմել . գ . կրօնափոխութիւնը արգելել եւ ղ . Հայ ժողովրդին իսկական վիճակը եւ պետքերը ուսումնասիրել :

Ուաչիկ վրդ . Մարաղա հասնելով երկու երեսփոխաններու ընտրութիւնը կատարելու եւ « Հայուհեաց բարեգործական Ընկերութիւն » մը կազմել է :

— Մարաղայի մէջ նորակազմ « Հայուհեաց Ընկերութիւն »ը հանգանակութիւն մը կատարելով 610 ֆրանք ( 1200 զոան ) հասոյթ գոյացուցեր է :

— Մարաղայի վաճառականներէն Պ . Յակոբ խաչատուրեան նոր դպրոցի մը շինութեան համար 2650 ֆրանք ( 5000 զոան ) նուիրեց , նոյն պարոնը նոյնքան գումար մըն ալ Մարաղայի նորակազմ « Հայուհեաց Ընկերութեան » նուիրած է :

— Առաջնորդ Այվասեան Սրբազանի գիտումին վրայ Պ . Չանչեանի միջոցով Մոսկուայէն Պ . Թովմաս Թումանեանց տեղիս գաղթական որբերու համար 5000 ռուպլի նուիրեց :

— Մոսկուայի եկեղեցիին մէջ ծննդեան ճրագալոյսի գիշերը Բագարատ արեղայ Վարդազարեան պնակ պտտցնելով Ատրպատականի հայ սովխալներու համար 670 ռուբլի հաւաքած է :

— Վեհափառ Հայրիկը Առաջնորդ Սրբազանին ծանուցած է յանուն Ատրպատականի հայ սովխալներու Պաքուէն 4000 ռուբլի զրկուելը :

— Ռոստովէն ( Ռուսաստան ) բնիկ Սալմաստի վաճառական Պ . Տէօվլէթ Յունանեան 10,000 ռուբլի նուիրած է Սալմաստի մէջ Գիւղատըն տեսական Կեդրոնական վարժարան մը հաստատելու համար , որուն հիմնարկութիւնը արդէն

Խաչիկ վրդ . Դադեան սկսած էր , եւ այժմ կառավարութեան հրամանով շինութիւնը դադրած է :

—Նոյնպէս Ռոստովէն ընկի Սալմաստցի ուրիշ վաճառական մը վերոյիշեալ նպատակին համար 1000 բուրլի նուիրած է :

—Պոլսեցի յայտնի գործիչ Պ . Յովակիմ Ֆէնէրճեան Ղալա թաղի զպրոցներուն հոգարարձու եւ եկեղեցիին երեցփոխան ընարուելով , սուղ ժամանակի մէջ եկեղեցին բարեկարգած եւ պատշաճ կերպով դարգարած է :

—Դավրէժի հայ տիկինները եւ օրիորդները , պէտք է խոստովանիլ որ տգեղ սեռէն աւելի հանրային օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն , իրենց «Բարեգործական Ընկերութիւններով» : Այդ ընկերութիւնները «Թաւրիզու» եւ «Ատրպատականի» անունները կը կրեն : Առաջինը աւելի մեծ գործունէութիւն մը ցոյց կուտայ եւ աւելի հարուստ ու հին է , իսկ երկրորդը աւելի նոր եւ համեմատաբար աւելի աղքատ , հետեւարար գործունէութիւնը սահմանափակ է : Գաղթականներու , որբերու , աղքատներու եւ սովեալներու համար մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանեն եւ անոնց համար նախախնամութիւններ կը հանդիսանան : Կ'արժէ որ արտասահմանի Հայերը մեծ ուշադրութիւն դարձնեն այս երկու «Հայուհեաց Բարեգործական Ընկերութեանց» եւ իրենց լուծմաները չխնային ձգել անոնց զանձանակին մէջ :

—Մտկուայէն Ատրպատականի հայ սովեւոց համար Պ . Թովմաս Թուժայեանցի միջոցով 300 թուման (600 բուրլի) եւս զրկուերէ Մրբազան Առաջնորդին :

Փ .

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—o—

ԿրէՏէ—:Թէեւ կրետական խնդիրը իր վերջնական լուծումը գտաւ թուրք զօրքերուն կողմէն մեկնելովն ու Յորկիոս իշխանին կրէտէի Ընդհանուր կառավարիչ անուանուելովը , սակայն դեռ օրուան խնդիրներուն կարգը կը համարուի թուրքիոյ լուծէն նոր ազատած այդ կողմին վերջնական կազմակերպութեան հարցը : Եւրոպական պետութիւններն եւ մամուլը ուշադրութեամբ կը հետեւին այն ջանքերուն զորս Յորկիոս իշխանը կ'ընէ դարաւոր հակառակութիւններով ու կոխներով

տակնուզրայ դարձած կողմն բարեկարգելու եւ վարչական նոր գրութիւնը հաստատելու եւ վարելու համար : Իրա՛ւ ալ ծանր գործ մըն է որ յանձնուած է Յորկիոս իշխանին . այսու հանդերձ երիտասարդ կառավարիչը մինչեւ հիմայ ձախող բան մը չըրաւ . ընդհակառակն իր գործունէութիւնը գնահատուեցաւ եւ անոնք որ կը կասկածէին իշխանին վարչական կարողութեան վրայ սկսան սրբտապնդիլ :

Երբ Յորկիոս իշխանը ամբողջ կրէտացի Յոյներուն խանդավառ ցոյցովը մտաւ կրէտէ , արդէն թրքական իշխանութիւնը յիշատակի —կամ մանաւանդ մղձաւանջի— կարգ անցած էր . իր մուտքէն ետքը ծովակալները իրեն յանձնեցին իրենց իշխանութիւնը , եւ յեղափոխական Մանախուժը , որ կողմին ներսը առժամեայ կառավարութիւն մը կազմած էր , իր հրաժարականը տուաւ : Այսպէսով Յորկիոս իշխանին վիճակուեցաւ այդ աւերակներու վրայ նոր շէնք մը բարձրացնելու գործը : Արդարեւ , ինչպէս ըսինք , գեուարին գործ մը , երբ մանաւանդ նկատի առնենք այն թաքուն ու անուղղակի միջոցները որով սուլթան Համիտ ջանաց ու տակաւին կը ջանայ բարեկարգութիւնը ու նորահաստատ գրութիւնը անկարելի դարձնել իր ձեռքը մնացած բոլոր ուժերովը :

Յորկիոս իշխանին կրէտէ հասնելուն առաջին արդիւնքը եղաւ մահմէտական բազմաթիւ ընակիչներուն գաղթումը կողմէն՝ դէպ ի թուրքիա : Մահմետականները սեռնելով որ ալ վերջնական կերպով Սուլթանին իշխանութիւնը ջնջուած է կողմէն եւ թէ ազատեալ քրիստոնեաները կրնան վրէժխնդրական աւարքներու դիմել , խոհեմութիւն համարած են ապաստանիլ իրենց Սուլթանին հովանիին տակ : Պաշտօնական ցուցակներէն կը տեսնուի թէ մինչեւ հիմայ 12000 մահմետական թողած են կրէտէ ու գացած հաստատուիլ Սելանիկ , Իզմիր , եւ Փոքր-Ասիա : Այս թիւը կը կազմէ գրեթէ կողմին մահմէտական ընակիչներուն մէկ հինգերորդը : Այսու հանդերձ կը կարծուի թէ շնորհիւ Յորկիոս իշխանի ջանքերուն , գաղթելու այս շարժումը քիչ ատենէն պիտի դադրի , մանաւանդ որ շատ ընտանիքներ , որոնք թուրքիա գացած են , գոհ չեն մնացած իրենց նոր վիճակէն եւ փափաք յայտնած են նորէն կրէտէ դառնալու :

Կրէտէ հասնելէն ի վեր իշխանին կարեւո-

բազոյն գործը եղաւ Յանձնախումբը մը կազմել պատրաստելու համար նոր սահմանադրութիւնը : Յանձնախումբը իր պաշտօնը աւարտած ու սահմանադրութիւնը ներկայացուցած է արդէն Ազգային ժողովին որ վիճաբանութիւններէ ու բարեփոխումներէ ետքը քուէարկած է զայն : Այս սահմանադրութիւնը վերջնական չէ սակայն , նոր ընտրուելիք ազգային ժողովն է որ նորէն պիտի քննէ զայն ու վերջնականապէս հաստատէ , հարկ եղած փոփոխութիւնները մտցնելէ յետոյ :

Նոր Սահմանադրութիւնը որով կը յայտարարուի թէ ամէն կրէտացի , առանց կրօնքի խտրութեան , իր զինուորական ծառայութիւնը պիտի կատարէ , հաճելի չէ եղած մահմէտականներուն : Հանրային մէջ կ'ըսուի թէ թուրք կառավարութեան խորհրդով , որ զաղանի գործակալներ զրկած է կղզին , մահմէտականները արդէն հակառակութիւն ցոլց կուտան բոլոր նոր օրէնքներուն դէմ : Նոյն իսկ այդ գործակալները յորդորեր են Ազգային ժողովի մահմէտական երեսփոխանները որպէս զի նոր Սահմանադրութեան համար չմասնակցին ժողովի քուէարկութիւններուն : Այս յորդորները սակայն առանց ազդեցութեան մնացած են : Ժողովին մէջ մահմէտական երեսփոխանները զիտողութիւն ըրած են Գ . յօդուածին համար եւ առաջարկած են որ օրէնքները թուրք լեզով հրատարակուին եւ քաղաքապահ խմբին կազմութիւնը յետաձգուի մինչեւ միջազգային բանակներուն մեկնումը : Այս երկու առաջարկութիւններն ալ մերժուած են :

Ահաւասիկ կրէտական այս նոր Սահմանադրութեան կարեւոր կէտերէն մէկ քանին :

Կղզիին Ընդհանուր Կառավարիչը «կրէտէի իշխան» արտոյտը պիտի կրէ :

Այն պարագային ուր իշխանական գահը պարապ մնայ , իշխանութիւնը պիտի վարէ կառավարական խորհուրդը , (այսինքն՝ նախարարները կամ խորհրդականները) յանուն ժողովրդին եւ իր անձնական պատասխանատուութեամբ : Այս խորհուրդը մինչեւ երկու ամիս պէտք է Ազգային ժողովը գումարէ որպէսզի նոր իշխանի ընտրութիւնը կատարուի :

Կղերականներուն , բանակի եւ ոստիկանութեան սպաներուն եւ բոլոր պաշտօնեաներուն արդիւրեւած է իրրեւ քանտիտա ներկայանալ Ազգային ժողովի ընտրութեանց :

Ամէն 6000 բնակիչ ունեցող ընտրական

չըջանակ մէկ երեսփոխան պիտի ունենայ , այնպէս որ Ազգային ժողովին անդամներուն թիւը 45—50ը չպիտի անցնի , 180 անդամի տեղ զոր ունէր մինչեւ հիմայ : Այս երեսփոխաններէն զատ՝ տասը անդամ , իշխանին կամ խորհրդականներուն կողմէն որոշուած , պիտի մասնակցին Ազգային ժողովին , բայց քուէ տալու իրաւունք չպիտի ունենան :

Նոր Սահմանադրութեան քուէարկման առթիւ տեղի ունեցած միջադէպ մը ցոյց կուտայ թէ քրիստոնեայ կրէտացիները ո՛րչափ հաշտաբար ողի մը ցոյց տալ կ'ուզեն մահմէտականներուն : Յոյն երեսփոխան մը առաջարկած է որ Սահմանադրութեան սկիզբը գրուի թէ՛ կրէտէի պաշտօնական կրօնքը օրթոտոքսութիւնն է : Քանի մը քրիստոնեայ երեսփոխանները այս առաջարկութեան ինպատասխոսած են . բնականաբար մահմէտական երեսփոխանները բուռն կերպով ընդդիմացած են ատոր եւ շատ մը քրիստոնեայ անդամներ իրենց ձայնակցած : Վիճաբանութիւնը շատ բուռն ու աղմկալից եղած է , սակայն ի վերջոյ Յոյն երեսփոխանին առաջարկը մերժուած է 22 ի դէմ 133 ձայնով :

Խնդիր մըն ալ որ բաւական մտքերը յուղած ու բուռն վէճերու տեղի տուած է , կրէտական նոր դրօշակին խնդիրն է . կ'արժէ որ համառօտ կերպով պատմենք այդ հետաքրքրական դէպքը :

Յայտնի է որ կրէտացիները , կղզիին ինքնավարութիւնը յայտարարուելուն պէս , իբրեւ ազգային դրօշակ ընդունեցին յունականը , միայն թէ մէջտեղը խոշոր սեւ խաչով մը : Այդ սեւ խաչը իբրեւ սուգի նշան համարած էին՝ իրենց լիակատար փափաքին հասած չըլլալով , որովհետեւ կրէտացիները կ'ուզէին որ կղզին բոլորովին Յունաստանի միացուէր : Բայց ծովակալները դիտել տուին Ազգային ժողովի գործադիր խորհրդին թէ՛ կրէտէն թրքական իշխանութենէն ազատելէն ետքը սեւ խաչը գոյութեան իրաւունք չունէր եւ թէ պէտք էր սեւին տեղ դնել կարմիր կամ ճերմակ խաչ մը : Գործադիր խորհրդին նախագահ Գ . Սֆաքիանաքիս , ծովակալներու զիտողութեան վրայ , երեք օրինակ դրօշակ ներկայացուց Եորկիոս իշխանին , որպէսզի անոնցմէ մին ընտրէ : Իշխանը երեքն ալ մերժեց եւ ինքը չինիլ տուաւ նոր դրօշակ մը : Յունականին գոյներովը դրօշակ մըն էր ասիկա , միայն թէ վերի դին՝ կօթին կողմը , կարմիր

քառակուսի մը կար— թրքական նշանը— մէջ- տեղը ճերմակ խաչով մը :

Ծովակալները զիտողութիւն չըրին ասոր եւ ընդունեցին , սակայն Սուլթանը իմանալով որ կարմիր քառակուսին մէջտեղ ճերմակ խաչ մը կայ , պահանջեց որ այդ խաչը ջնջուի եւ մահիկ մը դրուի տեղը : Եւրոպական չորս պետութիւնները Սուլթանին կամքը յարգելու արամադիր երեւցան , իսկ Յունաց թագաւորը եւ Կրէտացիք բացարձակապէս մերժեցին : Ետզիտութեան թագաւորը պարզապէս ըսաւ թէ՛ իր տղան չի կրնար Կրէտէ տաք գնել այդպիսի դրօշակով մը : Գալով Կրէտացիներուն , սպառնացան զէնքերնին չյանձնել եթէ մահիկը մնայ դրօշակին վրայ : Ծովակալները իրենց կառավարութեանց հաղորդեցին դրօշակին պատճառաւ յառաջ եկած յուզումները եւ չորս Պետութիւնները միաձայն հաւանութեամբ ուրոշեցին թէ՛ Կրէտացիներուն եւ թէ՛ սուլթանին զիջում մը ընել մահիկը վերցնելով ու մահիկին մէջտեղի աստղը պահելով : Ետզիտու իշխանը ընդունեց այս բարեփոխումը եւ գնաց Կրէտէ :

Խնդիրը հոս չլինեցաւ սակայն : Կրէտացիները չուզեցին որ աստղը մնայ դրօշակին վրայ : Եւրոպական չորս Պետութիւններուն երկայացուցիչները զիրենք համոզելու համար յայտարարեցին թէ՛ այդ աստղը թրքական մահիկին աստղը չէր , այլ ընդհակառակն Բէթլէհէմին աստղը որ Մոզերը առաջնորդեցիւ թէ Կրէտի փրկութեան խորհրդանշանն է : Իտալացի սպայ մը նոյնիսկ լաւագոյն բացատրութիւն մը տուաւ հանդարտեցնելու համար Կրէտացի հայրենասէրները . «Աստղը , ըսաւ , իտալական նշան մըն է նաեւ ու կրէտական դրօշակին վրայ երեւալով , ո՛չ թէ մահիկը կը յիշեցնէ , այլ մանաւանդ Իտալիոյ եւ Յունաստանի բարեկամութիւնը եւ եղբայրակցութիւնը » : Ու ասանկով խնդիրը փակուեցաւ :

Դրօշակի խնդրէն շատ տեւիլ լուրջ խընդիր մը կայ սակայն որ մտատանջութիւն կը պատճառէ շատերուն եւ մանաւանդ Կրէտացիներուն : Կրէտէի պաշտպան եւրոպական չորս մեծ պետութիւններու ընթացքն է այն : Մասնաւորապէս Անգլիոյ եւ Ռուսիոյ ընթացքը , որոնք շատ արամադիր չեն երեւար կզգիէն քաջուելու , հիմա որ ա՛լ ժամանակը եկած է : Անգլիացիները միշտ գրաւած են Գանախան ու Սուտայի խորը եւ Ռուսերը

Ռէթիմոն : Հանիայէն Թանի ուղղուած թղթակցութեան մը կը քաղենք հետեւեալը որ մեր ըսածը կը հաստատէ . «Յունական ծագում ունեցող ռուսահպասակ Բեթերսպուրկցի հարուստ սեղանաւոր մը փափագ յայտնած է Կրէտէի մէջ հողեր գնելու : Ծախու հողեր անչուշտ չեն պակսիր այս միջոցիս , մանաւանդ որ կղզիէն գալթող մահմետականները պատրաստ են իրենց ազարակները վաճառելու . հետեւաբար ամէն մարդ կը սպասէր որ ռուս սեղանաւորը պիտի ուզէր օգուտ քաղել մահմետականներու արամադրութենէն՝ գնելով այն հողերը որոնք քիչ շատ բան մը կը բերեն եւ որոնք ազազային շատ արդիւնաբեր կրնան ըլլալ : Արդ , իրենց զարմանքը մեծ եղաւ երբոր տեսան որ ռուս գրամատէրը իր ստակները վատնեց գնելու համար խոպան ու ժայռոտ հողեր որոնցմէ անկարելի է ո եւ է օգուտ քաղել եւ որոնք Աքրոթիրի բարձունքէն կ'իջնեն զէպ ի Սուտայի ծովախորը , Մինչեւ հիմա կը շարունակէ գնել այդ կողմերը . ինչ որ իրեն կ'առաջարկեն կը վճարէ արժէքին չորս հինգ անգամը աւելի : Ամէն մարդ հազար տեսակ ենթադրութիւն կ'ընէ այս գնումներուն մասին : Այդ ժայռերը միայն ռազմագիտական տեսակէտով կրնան օգտակար ըլլալ , որովհետեւ Սուտայի վրայ կը գտնուին : Ընդհանրապէս կը կարծուի թէ այդ ռազմագիտական հողերը գնելու համար Ռուս գրամատէրին աճապարանքը այն է որ Անգլիացիներուն ձեռքը չանցնին այդ զինուորական զիրքերը :

ՄԱԿԵԳՈՆԻԱ .— Սուլթանը իր զօրքերը կը շարունակէ կուսակել Մակեդոնիոյ մէջ : Այս վայրկեանիս հարիւր հազարը կ'անցնի անոնց թիւը : Բայց Մակեդոնացիք զգուշ կը մնան : Յեղափոխականներու համաժողովը որ պիտի գումարուէր ժընէվ , տեղի չունեցաւ : Պուլկար , Սերպ ու Յոյն կառավարութեանց միջեւ անհամաձայնութիւն կայ Մակեդոնական խնդրոյն համար , եւ ատկից պիտի օգտուի Սուլթանը : Իսկ այդ կառավարութիւններէն ոչ մէկը արամադիր կ'երեւայինք իր գլխուն մէջ տեղ նետուելու : Յեղափոխական մասնախումբին զրկած վերջին յիշատակագիրը չընդունուեցաւ Ռուսիոյ եւ Աւստրիոյ կողմէն : Պուլկարիս պաշտօնապէս յայտարարեց թէ չպիտի քաջալերէ յեղափոխական շարժումը . Ռուսիա նմանապէս յայտարարեց Բ . Դրան թէ Պուլկարիս որոշած է զուգել

ամէն շարժում : Յեղափոխականները կը սպասեն : Բայց թուրք զինուորներն են որ սպասել չեն գիտեր : Ապրիլ 2ի հեռագիր մը կը ծանուցանէր թէ Քրզը-Աղաճի մօտ , թրքօպուլկար սահմանազուխը , թուրք զինուորները յարձակեր են Պուլկարիոյ վերաբերող բլուրի մը վրոյ եւ ուզեր են գրաւել . Պուլկար զինուորները , չորս ժամ կռուէ յետոյ , ետ մղեր են զոնոնք : Եթէ այսպիսի զէպքեր շարունակուին , թուրքերը իրենց ձեռքով բացած պիտի ըլլան Մակեդոնական խնդիրը , հակառակ տերութեանց յայտնի անարամազութեանը : Եւ արդէն այս զէպքը Պուլկարիոյ կառավարութեան մեծ նեղութիւն պատճառած է : Պոլսոյ զիւանազիտական գործակալ Պ . Մարքոֆ ետ կանչուեցաւ , եւ կը կարծուի այս զէպքին հետեւանքովն ըլլայ : Միւս կողմէ , յունական կառավարութիւնը նօթ մը կը զրկէ Բ . Դրան , բողոքելով թուրքիոյ գրծմանը զէմ այն խոստումներուն զոր բրաւ թրքօ-յունական վերջին համաձայնութեամբ . Յոյները կը նշմարեն որ թուրքիոյ հետ համաձայնութիւն անհնար է . թուրքերը իրենց խոստումներէն եւ ոչ մէկը կը յարգեն :

**ԹՈՒՐԻԿԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ** .—Անգլիա թուրքիոյ մերձեցման ջանքեր կ'ընէ : Իր նոր դեսպանը Պ . Օքօնտոր , Սուլթանը շողոքորթելու ետեւէ է : Եւ կ'ըսուի թէ քիչ ատենէն կալլէսի իշխանը , Կրէտէ այցելելէն յետոյ , Պոլիս պիտի երթայ : —Անգլօ-ամերիկեան միասինարներու Հայաստանի մէջ բացած որբանոցներուն Սուլթանին կողմէն գոցուելուն վրայ Անգլիական խորհրդարանին մէջ , հարապընդում եղաւ , բայց Պ . Պրօսթրիք շատ թոյլ կերպով յայտարարեց թէ կառավարութիւնը պիտի պահանջէ Սուլթանէն վերաբանալ որբանոցները . եւ զեռ ոչինչ ըրած կը թուի անգլիական կառավարութիւնը այդ մասին : — Պաշտօնական Անգլիոյին այս թուրքութեանը մէջ , նորէն Անգլիոյ մարզասէրներն են , իրենց գլուխը ունենալով հւէսթմինսթրի գուքսը , որ կը բողոքեն որբանոցներու գոցուելուն զէմ եւ Եւրոպայի պթութեանը կոչում կ'ընեն Հայաստանի սովեալներուն օգնութեան հասնելու :

**ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐԻԿԱ** .—Ռուսիա նորէն յիշեցուց , նօթով մը Բ . Դրան , Կովկաս ապաստանած 40000 Հայերու խնդիրը , եւ պահանջեց որ անոնց վերադարձը փութացուի : Թուրքիա դիկաւմութիւն կը ցուցնէ , առար-

կելով թէ անոնց մէջ յեղափոխականներ կը գտնուին եւ նոր խողովութիւններ կրնան ծագել . Բ . Դուրը ուզած է ցուցակ մը այդ փախստականներուն . վերջին պահուն կ'իմանանք թէ Սուլթանը հաւաներ է որ դառնան այդ փախստականները : —Ապրիլ 2ին հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սուրմալինի գաւառակին մէջ , Կովկասի սահմանազխուսուն վրայ , քիւրտ աւազակներ ուսական հողը մտած , կողոպտած ու հրդէհած են . ուսական կառավարութիւնը նօթ մը ներկայացուցած է Բ . Դրան որ եթէ այդ անկարգութիւնները չզաղրին , ուսական զօրքերը պիտի մտնեն թուրք հողի վրայ եւ իրենք պիտի կատարեն ոստիկանի պաշտօնը : —Պանք-Օթօմանի Բարիզի եւ Լոնտոնի մասնախումբերը արտօնած են Պոլսոյ տնօրէնութեանը որ գանձուն փոխտայ 120000 ոսկի՝ Ռուսիոյ պատերազմական տուգանքը վճարելու համար :

**ԱՍԵՐԻԿԱ ԵՒ ԹՈՒՐԻԿԱ** .—Վիէնայի եւ Պէրլինի մէջ , կը գրէ Թան , ուշադրութեամբ եւ մտատանջութեամբ կը հետեւին այն ջանքերուն զոր Ամերիկա ի գործ կը զնէ աւտենէ մը ի վեր թուրքիոյ մէջ իր վաճառականութեան եւ ճարտարարուեստին տարածում տալու համար : Ուաշինկթընի կառավարութիւնը միջոցներ ձեռք կ'առնէ որպէս զի թուրքիոյ եւ հարաւային Ռուսիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ ամերիկեան ցուցադրութիւններ բացուին Միացեալ Նահանգաց հիւպատոսներու հակողութեանը եւ պաշտպանութեանը տակ : —Այս վաճառականական միջոցէն զատ , Ամերիկացիք զիմած են ուրիշ միջոցի մը որ միեւնոյն ատեն քաղաքական տարածման միջոց մըն է . կ'ակնարկուի այն բազմաթիւ որբանոցներուն եւ արհեստագիտական վարժարաններուն զոր Ամերիկա բացած է Փոքր Ասիոյ ներսերը : Այդ դպրոցները կը պատրաստեն Ամերիկայի ապագայ վաճառականական — եւ քաղաքական — գործակալներ , ինչպէս զիտել կուտան Վիենայի թերթերը :

**ՉԷՆԸՆԿՅՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԱԺՈՂՈՎԸ** .—Վերջապէս որոշուեցաւ որ դեսպանաժողովը պիտի տեղի ունենայ Լահէյի մէջ , ու պիտի սկսի մայիս 18ին : Դեսպանաժողովին ներկայացուցիչ պիտի կրնան զրկել միայն այն ազգերը որոնք մնայուն բանակ ունին : Արդէն գրեթէ բոլոր ազգերը իրենց ներկայացուցիչները որոշած են : Ամերիկա , Անգլիա , Գերմանի-

նրա առաջուց կը աստիճանաբար որ սպասու-  
 զինմանց նուազումը (գլխաւոր նպատակը Ձա-  
 րին առաջարկին) կարենայ ընդունուիլ արդի  
 պայմաններուն մէջ . բայց միջազգային խըն-  
 դիրները՝ փոխանակ պատերազմի՝ իրուարարու-  
 թեամբ լուծելու գաղափարը , որ դեռսպանա-  
 խորհուրդին օրակարգին վերջին հարցն է ,  
 կը կարծուի թէ կարեւոր քայլ մը պիտի  
 առնէ գէպ ի իրականացում : Ամերիկա արդէն  
 պատրաստած է ծրագիր մը միջազգային իրա-  
 ւարարութեան . ուրիշ ազգեր ալ պատրաս-  
 տելու վրայ են :

**ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ**—: Երկայն ատեն  
 ձգձգելէ յետոյ վերջապէս Սուլթանը յանձնեց  
 Հայասար-Փաշայի նաւահանգիստը գերման  
 ընկերութեան :

**ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ**—: Ինսպանիա իր  
 հուրդէն առաջ իսկ , կը հաստատուի ի-  
 ռողութիւններով , որ Եւրոպա կը նախընտրէ  
 բանակցութիւններով խնդիրը լուծել քան  
 պատերազմով : Անգլիա եւ Ֆրանսա . իրենց  
 բանակցութիւնները լուրջ արդիւնքի մը հաս-  
 ցուցին . մարտ 21ին կնքուեցաւ անգլո-ֆրան-  
 սական պայմանագիր մը, որով երկու երկիրնե-  
 րուն մէջ գտնուող առկախ խնդիրներուն ամե-  
 նակարեւոր մասը լուծուած է վերջնապէս . այդ  
 պայմանագիրը կ'որոշէ Ափրիկէի մէջ ֆրանսական  
 ու անգլիական ստացուածքներուն սահմանա-  
 զծումը : Պ . Տէլքասէի փառքի տիրոջն է  
 յաջողցուցած ըլլալն այս գործը , որ բարիք  
 մըն է քաղաքակրթութեան համար : Ֆրանսա ու  
 Անգլիա պիտի շարունակեն իրենց բանակցու-  
 թիւնները եւ ընդհ. համաձայնութեան հասնելու  
 հաւանականութիւն կայ : Միջազգային ամէն կար-  
 գի խնդիրներու համար Անգլիոյ եւ Ֆրանսայի  
 համաձայնութիւնը բարեբար տարր մըն է :  
 Չմոռնանք որ Հայկական ջարդերուն ատեն ,  
 մեր դժբաղդութեանը մեծագոյններէն մէկը Անգ-  
 լիոյ եւ Ֆրանսայի մէջ եւ այդ միջոցին տիրող  
 սուր անհամաձայնութիւնն էր :

**ԱՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ**—: Բանակցելու եւ  
 համաձայնութեան մը հասնելու ձգտումները  
 Անգլիա կը ցուցնէ միանպաստան Ռուսիոյնը-  
 կատմամբ : Չինաստանի խնդրոյն մէջ Անգլիա  
 շատ առաջ տարած է իր բանակցութիւնները  
 Ռուսիոյ հետ եւ կ'ըսուի թէ իրենց համաձայնու-  
 թիւնը գրեթէ կատարուած իրողութիւն մըն է :

**ՄԱՍԼՈՅ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԵՐՈՅԸ**



Իւսպէն կոչիէ , որ ամենէն յանդուգն մաքառողներէն  
 մէկը եղաւ Տրէյֆիւսի պալատին եւ իր յոգուածներով  
 Տրէյֆիւսի պարագայէն անդին անցնելով կղերական-  
 զինուորական դասակարգին ամբողջ հակահանրապետու-  
 կան դուրը եւ բանակին արդի անբարոյականացեալ վի-  
 ճակը երևան հանեց , դատի կանչուած էր հանրային  
 կրթութեան նախարարին կողմէ , դատը անսուղեցաւ վեռ-  
 սայլի քուռա ասիլի անջև , երբուեալ դատուոր-  
 ները անպարտ արձակեցին կոչիէն . ժողովրդէն անորոշա-  
 բար ընտրուած այդ դատուորներուն այս ազատամիտ  
 վճիռը ամենէն պայծառ ապացոյցը եղաւ թէ ցեղափո-  
 խութեան քրահասարակ պաշտպանները մտեցած են  
 յաղթանակին եւ թէ Ֆրանսայի հանրային կարծիքը  
 անհունապէս փոքուած ու մաքրուած է ջոխի դա-  
 տէն ի վեր : Ապրիլ 7 ի իրիկունը , Յիթէլ ֆոնթինան-  
 թալի սրահին մէջ , ազատական դրագեանները խնջոյք  
 մը կազմակերպեցին ի պատիւ Մամլոյ ազատութեան  
 եւ պատիւ իւսպէն կոչիէի . խնջոյքին , որուն կը մտ-  
 նակցէին երեք հարիւր հոգի , կը նախագահէր Պ . Ֆ . ար  
 Բուէստիս . խօսք տաին Բլէմանսո , Անաթօլ Գոսանս ,  
 Իւսպէն կոչիէ , Թեթալ Միւսո , Գիլիտա եւ ուրիշ-  
 ներ . ամէնքն ալ ըսին թէ Տրէյֆիւսի խնդիրը չուկետ  
 մըն է եւ թէ անոր լուծումէն յետոյ պիտի շարունա-  
 կեն պայքարը , ներքին եւ արտաքին խնդիրներուն  
 մէջ արդարութեան ոգին յաղթանակել տալու համար .  
 եւ այդ խնդիրներու շարքին մէջ , Բլէմանսո եւ Գիլ-  
 ետա յիշեցին , մասնաւոր համակրութեամբ մը , Հայ-  
 կական խնդիրը :



**ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՐՈՊԱՅԻ ՄԷՋ**

Մէտքիւռ տը Ֆրանսի փետրուարի քուով հը-  
 րասարակութեամբ Ա . Զօրակեանի լի կ հետքը ,  
 ՊՉՏԻԿ ՀԱՅ ԳԵՂՉՈՒԿԻՆ ԱՐԿԱԾԸ :

— Իւմանիթէ Նուվելի յուկուարի քուով հը-  
 րասարակութեամբ Պարնետեանի ՄԵՄՊՍՏԻԻ ՄՈՒ-  
 ՐԱԵԿԱՆԵՐԻՆ հասուած մը , քարգնակներեանք  
 Օր . Զայիչ Զոյիսանկեանի . այդ հասուածը  
 ( Բանաստեղծը , ) զեանասուտեամբ քրակակալ  
 մակոյն մեջ . Էվէնման եւ ուրիշ քերթեր  
 յիշատակած են զայն եւ Պարնետեանի մեջ մոյի-  
 ետեան քակ մը սեւած են :

Մ Ե Բ Բ Ա Վ Ա Ն Ո Ր Դ Ն Ե Բ Ո Ւ Ն

Կը խնդրենք որ մեր այն ընթերցողները որոնք խոստացած են բաժանորդագրուել ու դեռ չեն վճարած : հաճին փութացնել իրենց բաժնեգնոյն ուղարկումը . հակառակ պարագային պիտի դադրինք իրենց ԱՆԱՀԻՏ զրկելէ :

Անոնք որ առաջին վեցամսեան վճարած են , կը խնդրուի որ ԱՆՄԻՋԱՊԷՍ հաճին զրկել երկրորդ վեցամսեայ բաժնեգինը եթէ կ'ուզեն որ էրթ թուէն սկսեալ շարունակենք իրենց զրկել ԱՆԱՀԻՏ :

Կը յիշեցնենք եւ կը շեշտենք վերջին անգամ թէ՛

Ա Ն Ա Հ Ի Տ - Ի Բ Ա Վ Ն Ե Գ Ի Ն Ը Կ Ա Ն Ի Կ Է .

ԱՆԱՀԻՏ-ի առաջին թիւը որ սպառած է , երկրորդ անգամ պիտի տպագրուի այս առաջին տարեշրջանին վերջերը , եւ պիտի զրկուի մեր նոր բաժանորդներուն :

Ա Ջ Դ Ե Բ

Պ . Յ . Պոյաճեան հրատարակեց առաջին մասը այն գրքին զոր ծանուցած էինք , Manuel du bachelier constructeur, Première partie, résistance des matériaux. — PARIS, V° Ch Dunod, Quai des Grands-Augustins. գինն է 5 ֆրանք :

Գ Ա Ռ Ն Ի Կ Տ Է Օ Բ Մ Է Ճ Ե Ա Ն

Գ Բ Ս Վ Ա Ճ Ա Ռ . Թ Ղ Թ Ա Վ Ա Ճ Ա Ռ . Ե Ի Տ Պ Ա Գ Բ Ի Չ

Մասնաւոր պահեստ ուսանայհրատարակութեանց, զպրոցական եւ գրասենեկիամէն տեսակ պիտոյքներու : Տպագրութիւն՝ հայերէն , ֆրանսերէն , պուլիարերէն , ռուսերէն , զերմաներէն եւ անգլերէն լեզուներով :

Աշխատակից՝ Հայերէն գրքերու Հրատարակչական ընկերութեան Թիֆլիզի :

Գործակալ՝ «Արաքս», «Հանդէս Ամսօրեայ», «Ազգագրական Հանդէս», «Լուսնայ», «Անահիտ», եւ ուրիշ հրատարակութիւններու :

Արժէքուցակներ կը յղուի 25 սնդ . Ի չգործածուած նամակագրոյմքի փոխարէն :

Գիտել՝ K. Deukméjian, Roustchouk, Bulgarie.

Հ Ր Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Ե Յ Ա Ի

Ա Լ Ե Բ Ս Ա Ն Դ Ի Բ Ծ Ա Տ Ո Ւ Բ Ե Ա Ն Ի

Բ Ա Ա Ն Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ Ը

Հ Ա Տ Ո Ր Բ .

գիւն մէկ բռնայլի

գիմել հեղինակին՝

Sadovaja Karetnij, Nomera Ivanovoj N. 10

Russie

MOSCOU

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Մ Բ Դ Տ Ա Բ Ե Ո Յ Յ

Հ Ա Յ Ե Բ Է Ն Ե Ի Ռ Ո Ւ Մ Ա Ն Ե Բ Է Ն Լ Ե Ջ Ո Ւ Ո Վ

Խ Մ Բ . Ղ Ե Ի Ո Ն Դ Բ Ա Հ . Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

Կ ա Լ ա ց

Գ ի ն մ է կ ֆրանք

Վ Ա Հ Ա Ն Մ Ո Ջ Ե Ա Ն

Կը գնէ ամէն տեսակ նամակաղբորչմ

Լ Ա Ւ Ա Գ Ո Յ Ն Դ Ն Ե Բ Ո Վ

(40, Rue de Dunkerque, PARIS)

Ջ Ո Ւ Լ Ա Ր Ա Ն Տ Պ Ա Գ Բ Ս Ա Ն Տ Ա Ռ Ե Բ Ո Ւ

Եւրոպական տառերէ զատ կը ձուլէ մասնաւորաբար հայերէն , տաճկերէն եւ եբրայեցերէն տառեր :

M<sup>r</sup> Agop Dzerounian, Sophia (Bulgarie)

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտ պիտի հրատարակուի ամիս մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնզ (Ամերիկա) 1 ֆր. 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագրինն է տարեկան՝ 40 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2,50 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒՄԻՆԸ ԿԱՆՆԻԿ Է :

Ձեռք գիրները եւ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ամէն տեսակ ազգեր :

Նամակ , յօդուած եւ բաժանորդագրին ղրկել՝

A. TCHOBANIAN

6 Place de l'Odéon

PARIS,

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ՊՈՒԼԿԱՐԻԱ. —

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. —

ԴԱՀԻՐԷ. —

ՆԻԻՆՈՐԲ. —

ԻՍԹՔԷՄՊՐԻՃ. — (Մաս . , Ամերիկա)

ԻՍԹՈՒՈԹԸՐԹԱՈՒՆ. — (Մաս . , Ամերիկա)

ՈՒՍԹԸՐ. — (Մաս . Ամերիկա)

Պ . Գառնիկ Տէօքմէճեան (Ռուսոճուք)

ՏՐ . Կ . Փաշաեան

Պ . Առաքել Փափազեան

Պ . Բ . Ճիկրեան

Աշոտ Տէր Մանուէլեան

Պ . Մանուկ Պ . Գալստեան

Պ . Յակոբ Քասապեան ,

